


# ՄԻՈՆ

ՍՍՅԻՆ-ՅՈՒՆԻՍ

Թիւ 5-6



ԽԵ.

\* ՏԱՐԻ-ՆՈՐ ՇՐՋԱՆ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ ԵՐՈՒՍԱԿԷՄԻ ՀԱՅ ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

1971

Մայիս - Յունիս

Թիւ 5 - 6

1971

May-June

No. 5-6

# S I O N

VOL. 45

OFFICIAL PUBLICATION OF THE ARMENIAN PATRIARCHATE, JERUSALEM  
A BIMONTHLY OF RELIGION, LITERATURE AND PHILOLOGY

Proprietor: His Beatitude the Armenian Patriarch of Jerusalem

Editor-in-chief: Bp. Shahe Ajamian      Editor: Ara Kalaydjian



St. James Press  
Jerusalem

# ԽՄԲԱԳՐԱԿԱՆ


## ԱՆՋՈՒԳԱԿԱՆ ԶՈՅԳԸ

«Երանի որ ունիցի գաւակ ի Միոն»

Ապրիլ 21-ին կատարուեցաւ հանդիսաւոր հիմնադրէ՛մը Ալէքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց վարժարանին եւ ընծայարանին, մասնակցութեամբ բովանդակ Միաբանութեան, եւ ի ներկայութեան պետական անճառորութիւններու, յարանուանական ներկայացուցիչներու եւ ժողովուրդի խումբ մութեան, հին օրերու փառաշուք նաւակատի՛քները յիշեցնող, փոխադրելու մեր միտքը Հայ պատմութեան վաղեմի փառաւոր շրջաններուն, երբ նման առիթներուն մեր ժողովուրդի վարչական, մտաւորական եւ գինուորական ուժերը ի հանդէս կուգային իրենց փառքի ու պերճանքի բոլոր մեծ վայելչութիւններով:

«Երանի որ ունիցի գաւակ ի Միոն» արտայայտութիւն մըն է որ ժողովուրդի մը հոգեղէն թափը միայն չարտայատեր, այլ կ'անցնի աւելի անդին եւ կը դառնայ բարձր պատգամ մը, ինչպէս անէ՛, ազգայինէն ալ վեր տարրութեամբ ու խորութեամբ, բոլոր անոնց համար՝ որոնք այս անցաւոր աշխարհի երեսին կ'այցուի լուսաւոր ճգողութեամբը անանցին: Անցնիլ աւելի անդին, վեր առօրեայէն, որպէսզի այդ անդինը ոչլաւ միակ իրարը, իրականն ու կարելին: Ու տակաւին տարբեր եկրպարանքները այդ մտատեսութիւն, երբ մենք ազգային կարիքներուն կ'երկարենք մեր ձեռքերու քաղցրութիւնն ու սփոփանքը: Մարդեո՛ր որոնք գիտեն ճարել հոգեղէնին հումճքը, գտնելու տեսողութեան կտորը գիրենք ոտնակոխ հալածող աղէտներէն: Միոնի մէջ գաւակ մը՝ անասան պահել է փառքը այս Աթոռին եւ հաւատքը մեր ժողովուրդին: Այդ հզօր ուխտերուն շնորհիւ է որ մենք քալած ենք մեր դարերն ի վեր:

Եթէ ուզէինք մարդերը միայն երկու ոտակարգերու բաժնել, ուրիշ բանիմ տեսիլքի մարդեր եւ տեսիլքէ գործի մարդեր: Տեսիլք ունեցողները մեծ մարդեր են, մարգարէներ. վաղուան նայող եւ յարեթութիւն ապրող անհատներ: Երաշխիւ կարողութիւնը ի գուր տեղ չէ տրուած մարդուն. անիկա Աստուծոյ մէկ շնորհն է. մեզի տանելու տեսանելիէն անտեսանելիին, նիւթականէն ոգեկանին, առօրեայէն յաւիտեականին: Բոլոր մեծ հոգիները, ստեղծիչները, գիտնականները, աշխարհ վարող անճառորութիւնները, որոնք ափ մը բարիք եւ կտոր մը յոյս բերեր են իրենց ժողովուրդին եւ մարդկութեան, տեսիլքի մարդեր եւ գաւակներ:



1938 Ձ ա հ

Տիար Ալեքս Մանուկեանը տեսիլքի մարդ է, ան տեսիլք ունեցաւ հիմնելու կրթական այս պալատը, որմէ սակայն իշխաններ եւ արքաներ պիտի չանցնին, այլ Հայ մտքի եւ հոգիի ընտրեալներ, հագնելու այլապէս արքայական պատմութեան մեր մշակոյթին եւ սաղաւարտը մեր կրօնին, թուրք կենցալու օտար հեղեղին առջեւ եւ ռուս մեր գոյութեան սպառնալիքին դէմ, բայց մանաւանդ ըլլալու նրազը սիրտերու եւ հացն արդար երազմաբաշխ, երաշտին դէմ իմացական: Տեսիլք, որուն յոյսին մէջէն քալեր եւ մեր երախտաշնորհ նախնիները, տեսիլք՝ որ խոր խոկումը եղաւ մեր աստուածաբնայ սուրբերուն, անհոգրտակ սուրբ եւ հաւատքի ամուր նիզակը հերոսներուն: Տեսիլք, որուն գինն է այս ժողովուրդի կեանքը:

Հիմնադրը որ գետեղուեցաւ երէկ Սիոնի այս բարձունքին, Սրբոց Յակոբեանց հնադարեան եւ յաւերժապառ մեծաստանի նաշաւածքին առջեւ, քար չէ միայն, այլ գաղափար, հանգարին պէս որ յղացաւ խորեուրդը անոր, իբրեւ գմբէթ մտքի, անծայրածիր հորիզոնը հոգիներու, անըջանակ լուսամուտը Հայ դպրութեան, ազօթքը Նարեկացիին, երգը Շնորհալիին. փոխելով նիւթը ոգիի, որուն երբ նայինք, մեր ուղեղը կարենայ ժպտիլ մեզի:

Ան պիտի կանգնի իբրեւ յուշարձան մեր մտքի բոլոր քանդուած տախարներուն, Ներսէսեան, Գեորգեան, Սամսաբեան, Արմաշի եւ նմաններուն, սրբազան վրէժի մը իբրեւ խորհրդանիշ: Շուտով բարձրացող այս գմբէթի տակէն պիտի անցնին սերունդներ, որոնց գերագոյն իզօր պիտի ըլլայ ըսել, «Տէ՛ր, կեցո՛ւ ըզ-Հայս»:

Մտքի եւ հոգիի այս տուն տաղաւարն է որ եկան հիմնելու *անդուգական գոյգը*, երջանիկ ամուր, Ալեքս եւ Մարի Մանուկեանները, իրենց հոգիի արդար իւզովը եւ մտքին մաքուր պատրոյգովը Հայ մտքին նրազը վառելու Սիոնի այս բարձունքին: Վաղուան երուսաղէմը շքեղ ծրագիր մըն է Միաբանութեան մըտքին մէջ: Այդ ծրագրին իրագործման աշխատանքը տարիներէ ի վեր իր բաւարար արդիւնքը տուած է, սակայն Տիար Ալեքս Մանուկեանի մտքի այս տաղաւարով, ան նոր պատասպարան մը կ'ունենայ, կարենայ լրացնելու ակնկալութիւնները, որոնք մեր եկեղեցիին ու ժողովուրդին են: Պաղեստինի աղէտին ի վեր Միաբանութեան հոգեկան եւ իմացական մտահոգութեանց մէջ այդ իրապէս եկեղեցաշէն եւ ազգանուէր գործունէութիւնը մնացած է առաջին աստիճանի կարեւորութեամբ տագնապ մը՝ որ կը յուսանք թէ այս կերպով կը լուծուի, շնորհիւ մեծ Հայուն, Տիար Ալեքս Մանուկեանի իշխանական այս նախաբերումին:

Իր Թարգման Խանդիսանալով Սրբոց Յակոբեանց աշխտանքէր Միաբանութեան սերտ եւ սեռն երախտադէտութեան, վրաստահ ենք թէ չենք վիրաւորեր հանրածանօթ եւ ազնուական համեստութիւնը մեծ քարերարին, եթէ ըսենք թէ Ս. Աթոռոյ անկուգական նախաբերումը Տիար Ալեքս Մանուկեանը, մեր օրերու առեւտն պատկանելիքն է բացառիկ արժէքներ կայացնող դէմքն է:

Անհատներու կեանքին մէջ քիչ անգամ կարելի է հանդիպիլ որ սլատուոյ և դիրքի յառաջդիմութիւնը զուգընթաց եղած ըլլայ զուտ անձնական արժանիքին եւ տաղանդին, այնպէս ինչպէս կը հաստատուի Վսեմ. Ալէքս Մանուկեանի պարագային: Այս է պատճառը անտարակոյս որ իր կեանքը տեսարան մը ըլլալէ աւելի փառք մըն է մանաւանդ. գայն դիտելով մարդը հրճուանքէն աւելի կը սովորի, այսինքն կ'անի փորձառութեամբ եւ հոգիով:

Հասկացողութեան խոշոր տարբերութիւն մը կայ անշուշտ, *արժէքի* եւ *արժանիքի* ըմբռնումներուն միջեւ: Առաջինը վիճակ մըն է՝ իսկ երկրորդը առաւելութիւն մը, աւելի ճիշդ՝ առաքինութիւն մը, որուն կարելի է տիրանալ կամքով եւ գիտակցութեամբ յոյ: Ծնիլ արքայորդի՝ արժէք մըն է անշուշտ, բայց այդքան միայն. անոր բուն արժանիքը մարդ կ'ունենայ այն առեւն, երբ կարենայ արժեցնել գայն իր կեանքին մէջ, արժէքը վերածելով արժանիքի: Ահա՛ զազտիքը մեծութեան, եւ կոչումը իրական մարդուն: Կարենալ իր մարմնի կաւին մէջ նշմարել ու զգալ հրահալուած աստուածային փութային ոսկին, ռաֆի հանել իր բնութեան մէջ ճիւղող ազնուական բնագոյները, ճշմարիտ հասարակութեան անկողնուպտելի գանձը, անով հարստացնելու իր կեանքը եւ գործադրելու Աստուծոյ կամքը երկրի վրայ, որ ուրիշ բան չէ բայց ծառայութիւնը իր ժողովուրդին:

Հասարակ տեղիքի մը չափ սովորական դարձած ասութիւն մը եղած է մեր մէջ ըսել, թէ մեր մեծ դրամատուրները յաճախ ժլատ եղած են իրենց ազգի կարիքներուն նկատմամբ: Միւս կողմէ սակայն իրողութիւն է թէ ինչ որ մենք ունեցած ենք անգեալին մէջ եւ ունինք այսօր, արգասիքներն են անոնց. որոնք միշտ գիտցած են մեր իմացական եւ հոգեկան անդաստանները յարգարել եւ ապահովել իրենց իշխանական նուիրաբերումներովը: Եթէ նկատի առնենք մեր պատմութեան կանխող դարը եւ մեր ազգային կեանքի վերջին շրջանները միայն, հաշուելով արդիւնները հոգեկան այս բխումին, Գէորգեան, Ներսէսեան, Լազարեան, Սաւաքեան, Մելիքեան, Եղիայեան, Նուպարեան, Կիւլպէնկեան, Մանուկեան անուններով ծանօթ, մատնանշած կ'ըլլանք այս մեծ իրողութիւնը:

Վսեմ. Ալէքս Մանուկեան մին է ազգային այդ բարերարներէն եւ պարծանքներէն, որ գիտէ դիմաւորել իր ժողովուրդին կարիքները կիրթ եւ ազնուական զգացումներու եւ դասումի մը մէջէն: Իրեն համար դրամը բախտ մը եւ ոյժ մը չէ միայն, այլ արժէք մը՝ կիրարկելու արժէքներու ի խնդիր եւ արժեւորելու գանձոք: Առանց այդ փրկարար փոխարէնին, դեղին մետաղը գոյն մը եւ ձայն մըն է միայն:

Իր նկարագրին մէկ ուրիշ գիծն է իմաստութիւնը, կամ, բառին գործնական առումովը, ռոջմտութիւնը: Իր բարերարելու կերպին մէջ բարիքի իմաստութիւնը կայ, որ բարիքները դիմաւորելու չէ որ կը ձգտի, այլ զանոնք յաւերթելու: Ազնիւ գործ է խղճալ ազգատին կամ արգահատիլ տգէտին, բայց ազգատութեան եւ տգիտութեան դէմ պայքարիլը առաքինութիւն է ինքնին: Տիար Ալէքս Մանուկեան բնաւ չէ մերժած առաջինը, բայց

տիրակաճօրէն հետամուտ եղած է երկրորդին: Տարիներէ ի վեր այս ամէնը կ'ընէ մեծ հոգիի մը վնասականութեամբ: Բարերարելու փառքը սակայն իր մէջ անձին քմբուկով աշխարհը լեցնելու ընդմտատար իղձը չէ, այլ իրմէ բխած առաքինութեան ըերկրանքին զգացումը: Մեծ մարդոց հոգիին բացատրութիւնը պէտք է որոնել յաջախ հոգիին մէջ այն ժողովուրդին, որուն գաւակներն են անոնք: Ազգին նկարագրին մէջ ծածկուած բարացուցական շողերն են որ անակնկալ կերպով կը յայտնուին, ռսկի գանակներու պէս, նպաստաւոր մէկ վայրկեանին: Տիար Ալէքս Մանուկեանը իր ժողովուրդի հոգիին ամէնէն հարագատ բխումն է. ատոր մէջ է իր մեծութեան գաղտնիքը:

Բան մը ըլլալէ աւելի բան մը ընելու իղձը ամէնէն մաքուր նիզն է եղած իր հոգիին: Սրտի եւ մտքի անստգիւտ յատկութիւններով օժտուած մարդ, որ վարժուած է միշտ մտածելու քէ իր ժողովուրդի վերականգնումի եւ գոյատեւման ամէնէն կենսական լծակը առաւելաբար կրթութիւնը կրնայ ըլլալ, իր ամէնէն գորովագեղ ուշադրութեան առարկան ըրած է ազգին կրթութեան գործը: Մեծ եւ սրբատաշ քարերով կառուցուած բարերարութիւններ են Տիար Ալէքս Մանուկեանի նուիրաբերումները, որոնք իրերայաջորդ սերունդներու երախտիքն ու վկայութիւնը պիտի ունենան իրենց իբրեւ գրաւական:

Սրբոց Յակոբեանց գինուորեալ Միաբանութեան, Հայ Եկեղեցւոյ եւ բովանդակ Հայ ժողովուրդի սէրն ու երախտիքը իրենց անմահութիւնը գնել գիտցող Ալէքս եւ Մարի Մանուկեան անգուգական գոյգին, որոնք իրենց այս նուիրաբերումով Հայ մտքի տանարին դուռները կը բանան մեզի, որպէսզի կարենանք անոր արքայական սեզանէն բաշխել հրեղէն հացն ու գինին գալիք սերունդներուն:

Ե.



## ՀԻՄՆԱՐԿԷՔ ԱԼԷՔՍ ԵՒ ՄԱՐԻ ՄԱՆՈՒԿԵԱՆ ԺԱՌԱՆԳԱԽՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՆՈՐ ՇԵՆՔԻՆ

21 Ա Պ Ր Ի Լ 1971

Երուսաղէմի Հայ Գատրիարքութիւնը, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը եւ Հայ Համայնքը Հրճուանքի եւ Հպարտութեան օրեր ապրեցան Ապրիլի ընթացքին, երբ, կարճ այցելութեամբ մը (Ապրիլ 20 – 22) Բարերար եւ Հ. Բ. Ը. Միութեան Նախագահ Վսեմաշուք Տիար Ալէքս Մանուկեան եւ իր շնորհափայլ Տիկինը Ներկայ եղան «Ալէքս եւ Մարի Մանուկեան ժառանգաւորաց Վարժարան»ի նոր շէնքի հիմնարկէքին:

### ԺԱՄԱՆՈՒԹ ԶԱՐԳԱՐԺԱՆ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ

Մեծայարգ Հիւրերը Կիպրոսէն Լիտի օդակայան ժամանեցին Իրեքշարթի, 20 Ապրիլ 1971, յետմիջօրէի ժամը 5ին, եւ դիմաւորուեցան Պատրիարքարանիս եւ Համայնքի ներկայացուցիչներէն, որոնք կը դիմաւորէր Դիւանապետ Գեղշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան: Բարերար ամուլին կ'ընկերանային Տիար Ստեփան Տէր Վիտորչեան (Սթիւ Մուկար) եւ Տիար Յակոբ Տէրտէրեան: Գերաշնորհ Սրբազանը, մասնաւոր կարգադրութեամբ, բարձրացաւ օդանաւ եւ յանուն Ամենապատիւ Պատրիարք Ս. Հօր, Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Հայ Համայնքին Հիւրերը սրտագին ողջունելէ եւ բարի դալուստ մաղթելէ ետք, զանոնք առաջնորդեց օդակայանի բարձրաստիճան այցելուներու ընդունելութեան սրահը: Կարճ հանդիստէ մը ետք, ինքնաշարժերու պատկանելի կարաւանով մը Հիւրերը ճամբայ ելան դէպի Երուսաղէմ, ուր հասան երեկոյեան ժամը 6-30ին:

Մասիւմանքի զրան առջեւ կը սպասէին Միաբանութեան անդամներ եւ խումբ բաղմութիւն մը, որոնք ջերմօրէն դիմաւորեցին սիրելի այցելուները: Վանքի մուտքէն ներս, մինչեւ Պատրիարքարան, շարուած էին ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի սաները, Տատուրեան բաժնի եւ Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի աշակերտները, ծաղկեփունջեր ի ձեռքին: Յարգելի Հիւրերը նախ առաջնորդուեցան Ս. Յակոբեանց Տաճարը, ուր կատարելէ ետք իրենց ուխտն ու աղօթքը, բարձրացան Պատրիարքարան եւ սիրալիւր կերպով դիմաւորուեցան Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրէն: Գեղեցիկ դահլիճին մէջ, բարի դալուստի կարճ հանդիպումի ընթացքին, Պատրիարք Սրբազանը անկեղծ եւ սրտառուչ արտայայտութիւններով ողջունեց Բարերար ամուլը եւ ընկերակից Հիւրերը: Ն. Ամենապատուութիւնը Տիար Մանուկեանի մէջ տեսաւ ազնուասիրտ եւ մեծանձն բարերարէ մը աւելի ու վեր՝ արդար տէրը դարաւոր եւ սրբազան այս հաստատութեան, Հին եւ երջանիկ օրերու մէր անձնուրաց նախարարները յիշեցնող: Իր պատասխանին մէջ, Վսեմ. Պրն. Ա. Մանուկեան ի միջի այլոց յայտնեց թէ՛ ռաբխ էր որ դարձեալ կը գտնուէր Երուսաղէմ, Ս. Յակոբեանց Վանքը որ դարերով եկեղեցական ու ազգային մեր կեանքի կեդրոններէն մին հանդիսացած էր եւ ուրուն բարօրութեան ու բարգաւաճման համար ինք անձնապէս եւ իր գործա-



Բարերար Վանք. Տէր Էր. Տէր. Ալեքս. Մանուկեաններ ջերմօրէն կ'ընդունուին  
 Երաստիկի Ս. Գալոբեանի Վանք իրենց ժամանումին





Բաղի-գալուստի ընդունելութեան ընթացքին իսպ. կ'անդէ վահր. Ալէքս Մանուկեան

կիցները պատրաստ էին հնարաւոր բոլոր միջոցները տրամադրելու: Այդ պատրաստակամութեան ապացոյցներէն մին էր Վսեմ. Բարեբարին մօտ 450,000 տոլարի իշխանական նուիրատուութիւնը՝ ժառանգաւորաց Վարժարանի նոր շէնքի մը շինութեան համար, որուն հիմնարկէքին երջանիկ առիթով եկած էին Երուսաղէմ:

Ապա հիւրերը հրաժեշտ առին, հանդստանալու համար Երուսաղէմի ամենէն արդիական Գիմի Տէյվիտ պանդոկին մէջ:

ԸՆԹՐՈՒՓ Հ. Ե. ՄԻՈՒԹԱՆ ԿՈՂՄԷ

Նոյն գիշեր, ժամը 8:30ին, Երուսաղէմի Հայ Երիտասարդաց Միութեան կողմէ ճաշկերոյթ մը տրուեցաւ իրենց Ակումբին մէջ ի պատիւ յարգարժան հիւրերուն, որուն մասնակցեցան նաեւ Ամեն. Պատրիարք Ս. Հայրը, հիւրաբար Երուսաղէմ գտնուող Գերշ. Տ. Գնէլ Եպս. Ընդէճեան, Միաբանութեան անդամներ եւ խումբ բաղմութիւն մը: Ներկաները երկար ժամեր վայելեցին Հայկական հիւրասիրութեան հաճոյքները, գեղարուեստական ճոխ եւ գեղեցիկ յայտագրով մը համեմուած:

Ոտք առին Հ. Բ. Ը. Միութեան Կեդրոնական Վարչութեան անդամ եւ Տխար Ա. Մանուկեանին ընկերացող Պրն. Յակոբ Տէրտէրեան եւ Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայրը: Շատ խանդավառ մթնոլորտի մը մէջ եւ ծափահարութիւններու ընդմէջէն հիւրերը կէս գիշերը անց բաժնուեցան ակա՛մայ, հանգստանալու եւ կազդուրուելու յաջորդ օրուան սպառիչ յայտագրին համար:

ՄԱՐԶԱՀԱՆԴԵՍ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ

21 Ապրիլ 1971 Ձորեղարթին եղաւ ցնծութեան օր մը Երուսաղէմի Պատրիարքութեան եւ Հայութեան համար: Առաւօտէն արդէն Վանքին չըջափակը տօնական կերպարանք մը ստացած էր, տիրող խանդավառ մթնոլորտի մը մէջ:

Ժամը 10:30ին, յարգելի հիւրերը Վանք ժամանեցին կազդուրուած եւ ժպտուն, եւ Պատրիարք Ս. Հօր միանալով պաշտօնական թափօրով դիմեցին գէպի ժառանգաւորաց Վարժարանի մարդաշաշուր, ներկայ ըլլալու սաներուն կողմէ պատրաստուած մարզահանդէսին: Մարդիչն ու պատասխանատուն էր իրենց ուսուցիչը՝ Հոգշ. Տ. Աղան Արղ. Պալիօգեան:

Ամբողջ մէկուկէս ժամ, ժառանգաւորաց Վարժարանի սաներ, բուժնուած երկու խումբերու, կատարեցին գեղեցիկ մարզանքներ ու մրցումներ, հիացնելով եւ խանդավառելով ներկաները՝ որոնք ծափողընդենով կը չայտնէին իրենց գնահատանքը: Տղանցքին եւ մարզահանդէսի զանազան բաժիններուն իր մասնակցութիւնը բերաւ Հ. Մ. Ը. Միութեան փողեքախումբը:

Աւարտին՝ «կեցցէ»ներու եւ ծափերու տարափի մը տակ, Վսեմ. Տէր եւ Տկն. Ալէքս Մանուկեաններ կատարեցին բաժակներու եւ կրծքանշաններու բաշխումը, մեծ ոգեւորութիւն ստեղծելով բոլորին մէջ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ս. ՓՐԿԻՉԻ ՎԱՆՔ

Մարզահանդէսէն ետք, Պատրիարք Ս. Հօր գլխաւորութեամբ, Բարերար ամուրը եւ ընկերակիցները այցելեցին Սիոն լեռան Հայապատկան Սուրբ Փրկիչի Վանքը, ուր կը գտնուի նաեւ ազգային գերեզմանատունը:

Հիւրերը դիմեցին Վանքի չըջափակին մէջ պեղումներու ընթացքին վերջերս երեւան եկած շատ գեղեցիկ մոզայի՛ք մը, որ, առաջին քննութիւննե-

բու եզրակացութեամբ Հինգերորդ կամ Վեցերորդ Դարու դործ պէտք է եղած ըլլայ: Մոգայի՞ք պահուած է շատ լաւ վիճակի մէջ: Ապա Հիւրերը ծանօթացան Հնազդեցական այլ Հետաքրքրական յայտնութիւններու, որոնք շատ աւելի ստիպողական կը դարձնեն պեղումներու աշխատանքը: Շուտով, Ս. Փրքկիչի Հողին վրայ պիտի բարձրանայ Հոյակապ տաճար մը, Հայկական ճարտարապետութեամբ շողշողուն, որ Սիոնի պատմական բարձունքին վրայ պիտի աւելցնէ փառքը Հայ Երուսաղէմին: Այցելուները դիտեցին Քրիստոսի Երկրորդ Բանքը, ինչպէս նաեւ նախկին եկեղեցիի գաւթի մէջ Հանդիպող երջանկայիշատակ Պատրիարքներու շիրիմները, Գրիգոր Պարոն-Տէրէն եւ Գրիգոր Շղթայակիրէն մինչեւ Դուրեան եւ Գուշակեան: Սրբազան այդ գերեզմանները, քան տարիներու ակամայ լքումէ մը ետք, այսօր կը վայելեն Հոգածութիւնն ու մասնաւոր խնամքը Ամեն. Պատրիարք Ս. Հօր, եւ անոնցմէ մեծ մաս մը արդէն վերանորոգուած է, ինչպէս նորոգուիլ սկսած է աղային գերեզմանատունը, ուր կը Հանգչին, բազմաթիւ կրօնականներու եւ Հայոց-դիներու կողքին, ողորացեալ եւ սիրելի Հ. Ղեւոնդ Փիրղալէմեանի նման անձնաւորութիւններ:

#### ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ Ս. ԹԱՐԳՄԱՆՁԱՅ ԵՐԿՐԳ. ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակելով իրենց այցելութիւնները, մեծաբարզ Հիւրերը, միշտ յիշատարութեամբ Ամեն. Պատրիարք Ս. Հօր, եղան Սրբոց Թարգմանաց Երկրորդական Վարժարան, ուր իանդավառութեամբ ընդունուեցան Տեսուչ Հոգւ. Տ. Կիւրեղ Մ. Վրդ. Գաբրիէանի, ուսուցչական կազմին եւ ուսանողութեան կողմէ: Վարժարանի Հանդիսասրահը կազմակերպուած Հաւաքոյթի մը մը վրէժ, որուն ընթացքին գործադրուեցաւ կարճ ու կոկիկ յայտագիր մը, խօսք առին Պատրիարք Ս. Հայրը եւ Վարժարանի Հոգեւոր Տեսուչը, դերուստելով Բարեբար ամուլ:

#### ՀԱՄԵԼՈՒԹՅՈՒՆ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ ՄԵՁ

Կէսօրուան ճաշին, յարգելի այցելուները եւ իրենց չքախումբը Հիւրերը եղան Ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի Վերատեսուչ Գերշ. Ն. Շահէ Եպս. Աճմեանի, Վարժարանի ճաշասրահին մէջ: Հոն Հաւաքուած էին, Համեստ այլ դրաւիչ սեղաններու շուրջ Դպրեմանքի ուսուցչական լման կազմը եւ ուսանողութիւնը, մտերիմ շրջանակի մը մէջ սրտագին ողջունելու Բարեբարները եւ Հրճուելու անոնց ներկայութեամբ:

Ճաշկերոյթը անցաւ հաճելի եւ չէն մթնոլորտի մը մէջ, կատակներով եւ ուրախ խօսակցութեամբ համեմուած:


Ապա այցելուները վերադարձան պանդոկ, հանգստանալու:

#### Վ ՆԻՄԵԱՐԿԻՔ ԺԱՌԱՆԳԱՒՈՐԱՅ ՆՈՐ ՇԷՆՔԻ

Ալէէս եւ Մարի Մամուկեան ժառանգաւորաց Վարժարանքի կառուցանելի նոր շէնքին Հիմարկէքի Հոգեպարար արարողութիւնը կատարուեցաւ նոյն օրը, Զորքըարթի, 21 Ապրիլ 1971, յետմիջօրէի ժամը 4:30ին, երբ եկեղեցական պատկառելի թափօրը, նախապահութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր եւ մասնակցութեամբ Սրբոց Յակոբեանց Միաբանութեան բոլոր անդամներուն եւ Դպրեմանքի ուսանողութեան, Վանքէն ելլելով յառաջացաւ հանդիպակաց ընդարձակ պարտէզը:

Հոն, պատրաստուած շրջափայլին մէջ կը դառնէին, արդէն պետական թէ յարանուանական բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպէս Երու-






Երևանի փողոցներում հայերի զանգվածային ելույթը 1988 թ. հունիսի 2-ին

սաղմի Պապական Նուիրակը, Ֆրանչիսկեան Միաբանութեան Կիւթոսը, Անկլիքան Արքեպիսկոպոսը, Էայլն, ուր եկան իրենց տեղերը դրաւել նաեւ Բաբերար ամուրն ու Տիարք Սթիւ Մուկար, եւ Յակոբ Տէրտէրեան:

Շարականներու խորհրդաւոր երգեցողութեան ընդմէջէն, Պատրիարք Սրբազանը կատարեց օծումը սրբատաշ հիմնաքարին, իր կողքին ունենալով Բաբերար Վսեմ. Տիար Ա. Մանուկեանը: Հիմնաքարին վրայ Մեսրոպեան օուրք տառերով փորագրուած էր.



Օծումէն ետք, մեծանուն Բաբերարը իր ձեռքով դրաւ լաղախի առաջին կտորը եւ դետեղեց զայն հոն, պատմական այդ հողին վրայ, ուր վաղը պիտի բարձրանայ իր անունն ու յիշատակը յաւերժացնող լոյսի եւ հաւատքի վառարանը:

Կրօնական արարողութեան աւարտին, բարձրանալով յատկապէս պատրաստուած ամպինը, խօսք առաւ Պատրիարք Սրբազանը, եւ ներշնչուած ու հոգեցունց բառերով վերակոչեց դերն ու տարողութիւնը դպրեմանքներուն՝ որոնք դարերու ընթացքին բարիք բաշխեցին հին ամբողջ Հայութեան, եւ որոնք այժմ աւեր ու աւերակ, անցեալ փռաքի յիշատակարաններ լոկ կը մնային Հայ սրտերու մէջ: Ապա Սրբազանը շնչոյն դէպք Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Ժառանգաւորաց Վարժարանին, որ, իր նախորդներուն նման, հաւատքի օճախ մը դարձած է այնքան երկար ժամանակ, Հայ Եկեղեցիին ու Ժողովուրդին մատակարարելով պատրաստուած հոգեւորականներ եւ ծառայողներ: Եւ. Ամենապատուութիւնը յոյս յառնեց որ անդուգական Բաբերար Վսեմ. Տիար Ալէքս Մանուկեանի իշխանական նուիրատուութեամբ կառուցանելի Դպրեմանքի նոր շէնքը խթան մը պիտի ըլլար՝ Ժառանգաւորացի եկեղեցանուէր եւ ազգանուէր աշխատանքը աւելի արդիւնաւորելու:

Ապա Բաբերարին անդերին դեղեցիկ պատասխան ճառը կարդաց Տիար Յակոբ Տէրտէրեան, որուն թարգմանութիւնը կու տանք ստորեւ.

Ամենապատիւ Պատրիարք Ս. Հայր,  
Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրեր,  
Հաւատացեալ ժառանգաւորներ եւ  
Սիրելի Հայրենակիցներ-

Հետաւոր Ամերիկայէն եկած ենք, ձեզի հետ մասնակից ըլլալու հայկական նոր ձեռնարկի մը իրագործման:

Պիտի փափաքէինք ներկայ եղած ըլլալ անցնող շաբթուան Զատիկան հոգեյոյզ արարողութիւններուն, որոնք այնքան վեհ են եւ ազդու: Թէեւ ձեզի հետ հոս մեր Տիրոջ Յարութիւնը չկրցանք դիմաւորել, սակայն միւս կողմէ երջանիկ ենք որ ունինք բախտը տարբեր առիթով մը ուխտի եկած ըլլալու Սուրբ Տեղերուն եւ Սրբոց Յակոբեանց Տաճարին:

Զափազանց երջանիկ ենք, որ մեր այցելութիւնը կը զուգահեռի Սրբոց Յակոբեանց Միաբանութեան ժառանգաւորաց Վարժարանի նոր շէնքի հիմնարկէին. իրողութիւն մը, որ նորագոյն Հաստատումն ու վկայութիւնն է հայկական յաւիտենական քրիստոնէութեան՝ մեր Տիրոջ փառքին համար:

Պաղատութեան քաղաք Երուսաղէմը սրբափայլն է տիեզերական եւ ընդ կրօններու: Որքան հպարտ պէտք է զգանք որ Հայ Ժողովուրդը, իր խոր հաւատքով զապանակուած, Քրիստոնէութեան առաջին իսկ օրերէն շինած եւ պայծառացուցած է Երուսաղէմը, կառուցանելով եւ պահելով Սուրբ Տեղերը:


Քանի մը տարի առաջ յանձն առնելով մեր մասնակցութիւնը Սուրբ Յաղութեան Տաճարի նորոգութեան, եւ այժմ՝ ժառանգաւորաց նոր շէնքի կառուցումին, մենք պարզապէս հետեւեցանք մեր սուրբ եւ օրհնեալ նախահայրերու ճամբուն, ինչպէս որ Տրդատ, Հայոց Թագաւորը, Չորրորդ Դարուն մասնակցած էր Սրբատեղիներու շինութեան ծախսերուն՝ Մեծն Կոստանդիանոսի հետ:

Հոգեւոր եւ ազգային կեանքի տեսակէտէն, Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը հպարտութիւն առնող հաստատութիւն մըն է: Իր կանոնադրերը բարեփոխելու համար Հայաստանեայց Եկեղեցին Չորրորդ Դարուն դիմեց Երուսաղէմի Եկեղեցիի կանոններուն, որովհետեւ այս վերջինը պահած էր հիմարիտ, հաւատքը, աւանդութիւնը: Մայր Եկեղեցին հոս հաստատեց Պատրիարքութիւն մը, եւ յաջորդական Պատրիարքներ, իբրեւ առաջնապետ յաջորդները Սուրբ Յակոբի, իրենց ղեկավարեալ Միաբանութեան հետ դարերու ընթացքին պահպանեցին ու պաշտպանեցին հաւատքն ու Պատրիարքութիւնը՝ նոյնիսկ ի գին իրենց կեանքերուն, եւ բերին հասցուցին մինչեւ մեր օրերը:

Կը հաւատանք որ Երուսաղէմի մեր Հայ Պատրիարքութիւնը իր գոյութեամբ հաստատած է ու փաստած քրիստոնէական եւ ազգային իր դերը, եւ այսօր կը պահէ Մայր Եկեղեցիի հարգաւոր աւանդութիւններն ու արժէքները. հոն է որ կը դիմեն ամէն անոնք՝ որոնք ուխտագրութեամբ պիտի յաղեցնեն իրենց հոգեկան ծախաւը եւ հաւատարմօրէն պիտի ծառայեն իրենց եկեղեցիին եւ Ժողովուրդին:

Այս պատճառաւ է որ այս հոգին՝ վրայ եւ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան հովանաւորութեան, ու եղանակաւորութեան ներքեւ կը շինուի ժառանգաւորաց Վարժարանի այս նոր շէնքը:

Հայաստանեայց Սուրբ Եկեղեցին՝ եկեղեցին է՝ Հայրերուն, որովհետեւ



Հոգի ուր վաղը արիւնքի բարձրացումը «Արեւիկա» եւ Բարձր Բանակիական ժողովարարաց վարժարանը





Վանք. Բարեկամը հայտնաբերում էր դեռ օճալ հիմնաքարը

տեւ ժողովուրդը ինքը Եկեղեցին է՝ այդ Եկեղեցին կը մարմնացնէ մեր հաւատարմութիւնը՝ դարերուն մէջէն, մեր փորձառութիւնը եւ մեր ձգտումները։ Այդ Եկեղեցիի ծոցին մէջ էր որ ծաղկեցան ազգային մեր մշակոյթն ու արուեստները։ մեր պատմութիւնը զրուեցաւ Եկեղեցիէն ներս եւ մեր հոգիները իրենց կայքը ստին նոյն այդ Եկեղեցիին մէջ։

Ներկայ աշխարհին մէջ եւ այսօրուան պայմաններուն տակ, Հայաստանեայց Եկեղեցիին կոչումը եւ դերը չեն նուազած։ Ան դարձեալ պահապան առաքելային ու օրբանն է Հայ հաւատքին։ եւ ինչպէս Հինգերորդ Դարուն, Միջին Դարերուն, յիսուն տարի առաջ, այսօր եւս ան բարձր բերդն է մեր հաւատքին։

Հայ ժողովուրդը զժախտ է որ իր զանգուածին կէսը արտասահմանի մէջ կը գտնուի, օտար ափերու վրայ։ եւ սակայն երջանիկ է՝ փոքր, այլ զարգացող եւ սքանչելի իր հայրենիքով։ Առօրեայ իր կեանքին մէջ ան ունի միացման երկու կապեր։ Հայ լեզուն եւ Հայ եկեղեցին։

Հայ կեանքը կը յատկանշուի շինարարութեամբ։ Մենք կը շինենք նոր դպրոցներ եւ նոր եկեղեցիներ։ կ'աշխատինք չլանձնուիլ հոսանքին եւ մեր ճիգերուն արդիւնքով յուսալից ենք։ Սակայն կայ եւ կը մնայ հոսանքը, ինչպէս որ կայ տխուր իրականութիւնը արտասահմանի մէջ ապրող այն հազարաւորներուն՝ որոնց շրթունքները չեն զգացած եւ պիտի չզգան քաղցրը համբոյրը մայրենի լեզուին։ Ու տակաւին կայ տխուր իրողութիւնը Հայ Եկեղեցիէն եւ ազգութենէն բաժնուածներուն։ Ասոր համար է որ Հայաստանեայց Եկեղեցին պէտք է պատրաստ ըլլայ ամբողջութեամբ կատարելու իր կենսական դերը։

Այս դերը միմիայն եկեղեցականներու եւ եկեղեցական կառույցներու միջոցաւ չէ որ պիտի իրագործուի։ Ոչ մէկ հաստատութիւն կրնայ ապրիլ ու տեսիլ առանց մշակոյթի, նոյնիսկ Եկեղեցին, մասնաւորաբար այս օրերուն։ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան ժառանգաւորաց Վարժաբանը սքանչելի աւանդութիւն մը ունի։ Անոր ծոցէն ելած են մեր Եկեղեցիի առաջնորդները։ Ան արդիւնաւոր Դպրեմանք մըն է, եւ կը յուսանք որ այս նոր էջերին մէջ լաւագոյն աւանդութիւնները պիտի շարունակուին, Եկեղեցիին եւ Ազգին ընծայելով նոր մշակներ, հոգեւորական զեկավարներ եւ առաջնորդներ։

Այս անկկալութեամբ եւ փոստահութեամբ, սրտովին կը շնորհաւորենք Զերդ Ամենապատուութիւնը, Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերը եւ Երեւի ժառանգաւորները, ձեր աստուածածնաճոյ բոլոր ձեռնարկներուն մղութեամբ կատարեալ յաջողութիւն։

Հիմնարկէք սքանչելի այս արարողութեան աւարտին, Թափօրը, հանդիսական նոյն գնացքով եւ Ս. Աթոռի օրհներգի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան, որուն լուսադարձ եւ հիանալի Դաւիթիճին մէջ տըրուեցաւ ընդունելութիւն՝ ի պատիւ Բարեբարներուն եւ ժառանգաւորաց Վարժաբանի նոր էջերի հիմնարկութեան երջանիկ աւելթով։ Այդ միջոցին էր որ, պաշտօնական շնորհաւորութիւններէ եւ մաղթանքներէ ետք, խօսք առաւ ի միջի այլոց Երուսաղէմի Քաղաքապետ Ն. Վսեմ. Թէմի Գօլլէք, որ դժուարաւ արտայայտուելէ ետք Մանուկեան ամուլին մասին, Բարեբարներուն յանձնեց յուշանշան մը՝ զարդարուած Երուսաղէմեան տեսարաններու փորագրութիւններով։

Իսկ Ն. Ամենապատուութիւնը, յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան՝ եւ ի նշան ան խոր յարգանքին ու երախտագիտութեան դու Երուսաղէք

մի Հայ Պատրիարքութիւնը կը տաժէ Բարեբարներուն Հանդէպ, Տիկին Մ. Մանուկեանին նուիրեց ազամանդակուռ մարգարտայեռ մանեակ մը:

ՎԱԹԱՍՈՒՆԷԻՆԳԱՄԵԱԿ Հ. Բ. Ը. ՄԻՈՒԹԵԱՆ

Տօնական եւ յուզումով ու խանդավառութեամբ լի այս անմոռանալի արը եղրափակուեցաւ ազգապարծան Միութեան՝ Բարեգործականի Հիմնադրութեան վաթսուներեքամեակին նուիրուած Հանդիսութեամբ մը, Գ. Կիւլպէնկեան Մատենադարանի սրահին մէջ:

Երեկոյեան ժամը 7.30ին սկսող Հանդիսութիւնը, ի ներկայութեան Ամեն. Պատրիարք Ս. Հօր, Հ. Բ. Ը. Միութեան Նախագահ Վսեմ. Տիար Ա. Մանուկեանի եւ իր Տիկնոջ, իրենց ընկերակիցներուն, Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներուն եւ խումն բազմութեան մը, անցաւ ամենէն ջերմ եւ խանդավառ մթնոլորտի մը մէջ:

Հ. Բ. Ը. Միութեան եւ Ժառանգաւորաց Վարժարանի քայլերդներէն ետք, Հանդէսը տպաւորէ խօսքով մը բացաւ Գերշ. Տ. Շահէ Եպս. Աճէմեան, եւ Ժառանգաւոր սաներու կողմէ գործադրուած յայտագրէն ետք Բարեգործական Միութեան կեանքն ու գործունէութիւնը պատկերացնող ու պանծացրնող բանաստեղծութիւն մը ըրաւ Սիւսն պաշտօնաթերթի խմբագիր Պրն. Արայ Գալստեան: Ստորեւ՝ իր բանաստեղծութիւնը.

Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հայր,  
Վսեմափայլ Նախագահ Հ. Բ. Ը. Միութեան,  
Մեծայարգ Հիւրեր,  
Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրեր,  
եւ սիրելի ներկաներ.

«Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը մեր մէջ այն կազմակերպութիւնն է, ուր միշտ աւելի գործ եղած է քան խօսք»: Երջանկալիշատակ Թորգոմ Պատրիարք Գուշակեան այս շատ սեղմ ու հակիրճ նախադասութեամբ ճշգրտէն ընդոշտած է ու սահմանած ոգին եւ թերեւս ամբողջ կեանքը Բարեգործական Միութեան, որուն Հիմնադրութեան 65ամեակին նուիրուած է յարգանքի եւ երախտադիտութեան ներկայ հաւաքոյթը:

Եւ իրապէս, անդուլ աշխատանքի, ճիգի եւ գործունէութեան օճախ մըն է Միութիւնը. այդպէս է ան ներկայիս, ինչպէս այլուպէս եղած է: Հիմնադրութեան առաջին իսկ օրէն՝ երբ, հոյլ մը աղնուասիրտ, հայրենասէր այլ գործնական հայորդիներու կողմէ Գահիրէի մէջ կեանքի կոշտած է 1906 Ապրիլ 15ին, Զատիկի առաջին օրը: Կազմակերպութիւնը, գլխաւորաբար ծնունդ մեծ Հայուն՝ Պօղոս Նուպարի ծրագրումներուն եւ անյողդող կամքին, արդիւնք էր ամենուրեք զգացուած սուր պահանջի մը: Հայութիւնը, 1895—96ի համիտեան կոտորածներէն սահմուկած, բարբառոս բռնատիրութեան մը ճիւղանքուն մէջ, քսաներորդ դարու մուտքին ինքզինք կը գտնէր վհատ եւ ուժ ժառպառ՝ հակառակ նախորդող մօտ յետուս տարիներու ընթացքին իր կեանքէն ներս առնուած հսկայաքայլ յառաջդիմութիւններուն: Հայաբնակ դաւառներուն մէջ, Հայ գիւղացիին կեանքը դժոխք մըն էր տառացիօրէն, որմէ ազատելու միակ միջոց կը նկատուէր արտագաղթը՝ Հայութիւնը անդալիւրէն մաշեցնող եւ մեղցնող երեւութական այդ դարմանը: Պօղոս Նուպարի եւ իր ժրջան գործակիցներուն սեւեռակէտն էր Հայկական Բարեգործական

Ընդհանուր Միութեան հիմնարկութեամբ գտնել միջոցներ եւ պայմաններ, որով կարելի ըլլար մասնաւորաբար զաւառի Հայութեան տանիլ բարեբը Հայ դպրոցին եւ ուսումին, բայց մանաւանդ՝ հայթայթել նիւթական անտեւ սական դիւրութիւններ՝ տանելի կեանքի մը հաշուին: Միութեան առաջին կոչին մէջ, հրատարակուած 1906 Մայիս 1ին, պատուական հիմնադրները կ'ըսէին. «Հայ ազգը անհրաժեշտ պէտք ունի կազմակերպեալ միայուն մարմնոյ մը՝ որ միշտ պատրաստ գտնուի օգնելու Հայաստանի հայ ժողովրդեան՝ առանց կրօնի խտրութեան»: Եւ քիչ մը վարը. «Հ. Բ. Ը. Միութիւնն գործնական ապացոյց մը թող լինի որ աշխարհիս մէջ ցրուած Հայերն կարող են միաբանիլ ազգային բարօրութեան առաջնորդող նպատակի մը համար»:

Եթէ ապացոյց մը պէտք էր իրապէս թէ Հայերը կրնային միաբանիլ, ապա ուրեմն Բարեգործականը եղաւ զեղեցկագոյն փաստը այդ միութեան: Առաջին իսկ օրէն, ան դարձաւ ամբողջ Հայութեան դուրգորակներին առաւելան, զրաւեց բոլորին սէրը եւ, ի վերջոյ, իրեն ուղղեց հազարաւոր հայորդիներու երախտագէտ նախուածքները:

1915ի Մեծ Եղեռնի տարիներուն եւ անկէ անմիջապէս ետք, Միութիւնը պարտաւորուեցաւ փոխել իր գործունէութեան եղանակը եւ դարձաւ որբահաւաք ու որբանոց կազմակերպութիւն, ահաւոր ցեղասպանութեան աւերները դարձանելու սրբազան պարտականութեան կոչուէին: Շատ չուտ, 1924ին, իր հովանաւորութեամբ եւ Մեղքոնեան երկու հարազատներու իշխանական բարեբարութեամբ հիմը գրուեցաւ Կիպրոսի Մեղքոնեան Կրթական Հաստատութեան, որ իր կեանքի առաջին տասնամեակին գէթ՝ որքանոց մը հանդիսացաւ, որուն ապահովութեան եւ խաղաղութեան տարուեցան բազմաթիւ Հայ տղաք եւ աղջիկներ: Հայահոծ գաղութներու, մանաւանդ միջինարեւելեան երկրներու մէջ Միութիւնը հաստատեց ինձամտաբարկան եւ նպաստաբաշխ կայաններ, տարագրութենէն մազապուրծ ազատած թշուառ Հայերու առօրեան տանելի դարձնելու առաջադրութեամբ:


Եւ Մեծ Եղեռնէն քսուող դար ետք էր միայն, որ Բարեգործական Միութիւնը իր ուժերուն ամբողջ թափով ձեռնարկեց Հայ գաղութները դպրոցներու ցանցով օժտելու իր կրթանուէր ծրագրի իրագործման, երբ արտօսահմանի Հայ համայնքները տիրացած էին նիւթական համեմատական աւելի բարեկեցիկ մակարդակի մը: Ու հոս էր որ առաւելագոյն չափով պիտի դրոշմաւորուէր Բարեգործական Միութեան իրական արժէքը, երեւան պիտի դարձնախանամական դերը, որ իրն էր եւ է տակաւին մեր գաղութներուն մէջ: Այսօր, մօտաւորապէս 150 վարժարաններ նիւթական նպաստ կ'ընդունին Միութենէն, մինչ, Մեղքոնեան Հաստատութեան կողքին, այժմ Պէյրութի մէջ կը գործեն Բարեգործականի սեփական Դարուհի-Յակոբեան աղջկանց եւ Յովակիմեան-Մանուկեան մանչերու երկրորդական վարժարանները, ինչպէս նաեւ Հալպի լազար Նահարեան-Գ. Կիւպէնկեան երկրորդական վարժարանը: Հազարաւոր Հայ տղաք եւ աղջիկներ իրենց նախակրթարանային ուսումը կը պարտին Բարեգործականին, մինչ ուրիշ հազարաւորներ Բարեգործականով է որ պատեհութիւնը կ'ունենան համալսարանական բարձրագոյն ուսման տիրանալու: Եթէ թուանշանները բան մը կ'ըսեն, ապա Բարեգործական Միութիւնը միայն 1969ի ընթացքին յատկացուցած է 1,507,900 տուրք, որուն 1,178,900 տուրքը՝ ծախսուած ազգապահպանման նպատակներու, որոնք են կրթական եւ մշակութային ձեռնարկները:

Իսկ Միութեան օժանդակութիւնը վայելած եւ վայելող այս երիտասարդութիւնը, իր կարգին, խմբուած է այսօր Բարեգործականի եւ անոր զանազան մարզական ու մշակութային կազմակերպութիւններուն շուրջ, եւ հետա-

ւոր Պրազիլիայէն մինչեւ Լիբանան, Մ. Նահանգներէն մինչեւ Թունսաւտան վառ կը պահէ Հայ ոգին եւ Հայ կեանքը: Եւ ասիկա չի դար միմիայն երախտագիտութեան այլապէս արդար զգացումէ մը, այլ ան արդիւնք է հայեցի այն խոր գոտարարակութեան՝ որ Հայ մանուկին ու պատանին կը ջառագի հայկական վարժարաններու մէջ, եւ որո՛վ կ'իրականանայ Բարեգործականի խտելի՛ւ պատրաստել իրաւ եւ դործունեայ Հայեր, իրիւ առաջին եւ կարեւորագոյն պայման ազգապահպանման մեր ճիգերուն: Այսպէս է որ Բարեգործականը առաւելաբար երիտասարդութեամբ ոտքի կեցող, երիտասարդութեան Միութիւնն է, երիտասարդութեան համար, եւ սակայն ինք եւս միշտ երիտասարդ՝ հակառակ իր վաթսգնահինգ տարիներուն: Այդ կը փաստեն միջին-արեւելեան երկիրներու Հայ երիտասարդական զանազան միութիւնները, որոնք իրենց կենսունակ կեանքը կը պարտին Բարեգործականին: Այդ կը փաստեն, տակաւին, Մ. Նահանգներու զանազան քաղաքներուն մէջ կազմակերպուած երիտասարդական երգի-պարի խումբերը, որոնք նմանը չտեսնուած խանդավառութիւն կը ստեղծեն Հայ համայնքներու կեանքէն ներս:

Արտասահմանի մէջ շկայ դրեթէ գաղութ մը, որ իր մասնահմիւր շունեայ. ուր որ Հայ եկեղեցին իր կաթողիկէն կը բարձրացնէ, հոն է Միութիւնը, երբեմն Հայ զպրոցէն իսկ առաջ. իւրաքանչիւր նոր կազմակերպուող Հայ համայնք շուտով ինքզինք կ'օժտէ Բարեգործականի ակումբով, նոյնիսկ եթէ այդ հաւաքափայլը պարզ սենեակ մըն է, քանի մը տասնեակ անձեր հաւգիւ պարփակող: Սակայն հոն, հեռուոր քաղաքի մը այդ սենեակին չորս պատերէն ներս է որ կ'եռայ Հայ կեանքը. հոն է որ, օրուան մը աշխատանքէն ետք, իրարու քով կու գան վտարանդի հայորդիներ՝ իրենց Հայութեամբ խանդավառուելու եւ իրենց կամքերը զինելու: Եւ այսպէս, այսօր, Հ. Բ. Ը. Միութիւնը, մեր պատմութեան մէջ իբրեւ բացառիկ երեւոյթ, կը ներկայացնէ աւելի քան քսան հազար անդամներու պատկառելի թիւ մը: Այս անդամակցութիւնը, ստեղծական թիւէ մը աւելի՝ կը հաստատէ այն խոր եւ ամեհ նահապառ պատահութիւնը, զոր Հայութիւնը իբրեւ ամբողջութիւն կը տածէ Միութեան հանդէպ: Բարեգործականը ամբողջ Հայութեան կազմակերպութիւնն է, որովհետեւ իր բարիքները ընդունելով առատածնուն Հայերէ՛, դանոնք անխտրական սքանչելի ոգիով եւ տարիներու փորձառութենէ եկող իմաստութեամբ կը բաշխէ բոլորին, առանց նկատի առնելու դաւանանք կամ գաղափար: Ազգասիրական այս անխտուն ոգիով ճամբայ ելեր էին երկանկայիշատակ հիմնադիրները՝ Պողոս Նուպար, Եղապար Արթին, Մկրտիչ Անդրանիկեան, Տոքթ. Նազարէթ Տաղաւարեան, Աւաքը Նուպար, Գրիգոր Եղիայեան եւ ուրիշներ, եւ անխտրական նոյն սկզբունքով է որ առաջնորդուած են ու կ'առաջնորդուին անոնց յաջորդները՝ Զարեհ Նուպարէն սկսեալ մինչեւ Միութեան ներկայ երկարամեայ եւ իմաստուն Նախագահը՝ Տիար Ալեք Մանուկեան:

Եւ թերեւս հոս իսկ կը կայանայ Բարեգործական Միութեան անգնահատելի դերը, մեծութիւնը. ան էր որ կոտորակուած Հայութեան տուեալ օրինակը միաբանութեան, ապացուցելով թէ մեր կեանքի առօրեային հետ կապուած ինքիւններէն, գաղափարական եւ դաւանական տարբերութիւններէն, հաշիւներէն եւ վէճերէն վեր՝ կային իտէալներ, որոնց շուրջ կ'ընային հաւաքուելի, կային անկարելիին սահմանը հասնող դժուարութիւններ՝ որոնց բարձուին համար կրնայինք միաբանիլ եւ միակամ ու միասիրտ աշխատիլ: Թերեւս այս խորհուրդներով էր որ հիմնադիրները իրենց կազմակերպութեան իբրեւ նշանաբան ընտրեի էին «Միութիւնը գորութիւն է» շատ հին այլ շատ այժմեական ու խորիմաստ հաստատումը: Որովհետեւ, մեզի նման





Պատրիարք Ս. Հայրը բացատրութիւններ կու տայ  
կառուցանելի շէնքին մասին

շատ փոքր ժողովուրդի մը համար մանաւանդ, ամէն բանի մէջ միութիւնը պիտի ըլլար եւ տակաւին է միակ փրկութիւնը՝ Միաբանութեան եւ եղբայրութեան ընձեռած բարեքնքերով է որ այժմ Բարեգործականը իր 65 տարինեւրու կեանքին՝ էջերը կը զարդարէ՝ իրագործումները, որոնք այնքան անընդհատ շարքով մը իր կեանքին երեսները զարմացին, եւ որոնք այսօր իր փառքի պատիւը կը հիւսնեն, կարելի դարձան միայն եւ միայն եղբայրութեան այդ խումունկ զգացումով եւ միաբանութեան լսելի համոզումով:

Բարեգործականը արտասահմանի Հայութեան խիղճն է, որուն շուրջ համախմբուած է զաղութահայութիւնը՝ կազմելու անոր մարմինը: Բարեգործականը մեծ ընտանիք մըն է, որուն լսելի է իւրաքանչիւր Հայ՝ ուր ալ գտնուի, ինչ դաւանանք ալ ունենայ, ինչ գաղափարի ալ ծառայէ՝ հաւասար իրաւունքներով եւ նոյնքան հաւասար պարտաւորութիւններով: Այդ մեծ եւ սքանչելի ընտանիքին պատկանիլը պատիւ մըն է եւ տեսակ մը զինուորացի գրութիւն միաժամանակ, որ նիւթական թէ բարոյական զոհողութիւններ կը պահանջէ բոլորէն: Զոհողութեան, անսակարկ նուիրումի եւ աշխատանքի ամենէն մեծ օրինակը կու տայ ինքը՝ Միութեան ներկայ Նախագահը, որ տասնեօթ տարի գերազանց խոհականութեամբ առաջնորդելէ: Ետք Բարեգործականը, յայտնուած բուռն փափաքներուն տեղի տալով քանի մը ամիս առաջ յանձն առաւ չարժանիել իր այնքան պատասխանատու պաշտօնը յաջորդ տարիներէն եւս, եւ որուն գնումական հոգիին արտայայտութեան նոր մէկ փաստը տակաւին քանի մը ժամ առաջ տեսանք՝ հիմնաքարի գետեղումովը «Ալեք եւ Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարան»ի նոր շէնքին:

Վաթսունհինգամեակի սեմին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը որեւէ ժամանակէ աւելի կենսունակ է, աշխուժ եւ գործօն: 1971-ով սկսող տասնամեակը իր հետ բերած է եւ պիտի բերէ հետզհետէ մեծ դժուարութիւններ, պիտի ստեղծէ պայմաններ՝ որոնք ապահովաբար վճարական ազդեցութիւն պիտի ունենան զաղութահայութեան յետազայ կեանքին վրան: Բարեգործականը աւելի քան պատրաստուած կը զգայ ինքզինք դիմադրաւորու այդ դժուարութիւնները եւ հարթելու զանոնք ի շահ եւ յօգուտ Հայ ժողովուրդին: Իր վարչական աշխուժ կազմակերպութեամբ, իր բազմահազար անդամներով եւ հրատարակութիւններով՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը արտասահմանի մէջ մեր գոյատեւան մարդոյն կուռաններէն է, ոգեկան հարստութեամբ եւ իմաստութեամբ լի, որմէ է որ Հայ ժողովուրդը արդարօրէն կ'ակնկալէ եւ կը յուսայ իր իմացական ու բարոյական պէտքերուն արդիւնաւոր գոհացումը:

Կը յարգենք զայն, որովհետեւ Հայկական է. իրեն հետ ենք՝ որովհետեւ Բարեգործական եւ Ընդհանուր է. մեր հիացումը ունի ան՝ որովհետեւ Միւլաթիւնն է մեր բոլոր ուժերուն. սակայն այս բոլորէն վեր՝ կը սրբենք զայն մեր ամենէն խորունկ սիրով՝ որովհետեւ ան մե'րն է, մեր բոլորինը, որուն տէրերն ենք մենք ամէնքս, ինչպէս եւ ծառաները անոր:

Իր կեանքի այս կարեւոր հանգրուանին, կը խորհիմ թէ. մեր բոլորին միակ իղձը պիտի ըլլայ որ ապրի, հազար ապրի եւ միշտ գործէ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը, իր աշխուժական Նախագահով, իմաստուն Կեդրոնական Վարչութեամբ եւ անկէ բխող բոլոր մարմիններով ու մասնահիւղերով: Երկար կեանք եւ նորանոր դասիններ ազգապարծան մեր մեծ Միութեան եւ անոր ղեկավարներուն:



Ապա յուզիչ ելույթներ ունեցան Բարեգործական Միութեան Վսեմ. նախագահը եւ Պրն. Մթիւ Մուկար, իսկ իր փակման խօսքով Ամեն. Պատրիարք Ս. Հայրը վեր Հանեց Տիար Ա. Մանուկեանի անգնահատելի դերը իրեւ նախագահ ամէնուն Հասնող եւ ամէնուն պատկանող մեծ Միութեան:

Հանդէսը վերջ գտաւ ժամը 9ին:

ՄԵԿՆՈՒՄ Ս. ԱԹՈՌՈՑՍ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒՆ

Հինգշաբթի, 22 Ապրիլ 1971, առաւօտեան ժամը 11.30ին Ս. Աթոռոյս Բարերար Վսեմ. Տէր եւ Տկն. Ալէքս Մանուկեաններ եւ իրենց ընկերակիցները Հրաժեշտ առին Երուսաղէմէն, ու հոգեպէս լիացած եւ կազդուրուած բաժնուեցան Սուրբ Երկրէն:

Մինչեւ Լիտի օդակայան յարգարժան հիւրերուն ընկերացաւ Ամեն. Պատրիարքը, որ անոնց բարի ճանապարհ եւ ողջերթ մաղթեց սրտաբուլի ու անկեղծ խօսքերով:

\* \* \*

Բարերարներուն մեկնումով վերջ գտան «Ալէքս եւ Մարի Մանուկեան Ժառանգաւորաց Վարժարան»ի նոր շէնքի հիմնարկութեան հանդիսութիւնները, որոնք անգամ մը եւս ոգեւորեցին Հայ Երուսաղէմը:

Ու այսպէս, երախտապարտ Հայութեան նայուածքին տակ, յաւերժական Երուսաղէմի Հայկական հողին վրայ շուտով հասակ կ'առնէ Հայկական ճարտարապետութեան դրոյթներով երկնուած նոր Դպրեմանքը, զառնալու համար արտասահմանի կրթական կարեւորագոյն վառարաններէն մին:

# Ս. ԳՐԱԿԱՆ

## ՀԵԹԱՆՈՍԱՅ ԱՌԱՔԵԱԼԸ

Արցունքով բաժնուեցաւ Պօղոսը Բերիացիներէն, որոնք այնքան ազնիւ եղած էին իր նկատմամբ, խնդրելով բոլորէն որ չուշացնէին իրեն զրկելու Տիմոթէոսն ու Ղուկասը, իսկ ինքը ճամբայ ելաւ դէպի Աթէնք։ Հակառակ իր առաքելական անդրդուելի կամքին, արուեստագէտի մը պէս զիտէր Պեցուիլ միշտ անատոյգ դողով, երբ նոր գործի մը ձեռք երկարէր։

— Աղօթեցէք ինծի համար, կ'ըսէր զինքը ճամբու դնող բարեկամներուն, որ Աստուած օրհնէ մեր դործը։ Աղօթեցէք որ ցանուած սերմերը հովերուն եւ վայրի թռչուններուն կիր չլրան, հոկեցէք դալար ընծիւղներուն, ձեր աչքի բիրին պէս, որովհետեւ անոնց հետ պիտի աճի յոյսը Իսրայէլին եւ հաւատքը մարդկութեան։

Գովային ճամբորդութիւնը Պօղոսի յոգնած ջլդիրուն համար աւելի քան կազդուրիչ էր։ Օրեր յետոյ կը հասնէր Աթէնք։ Հեռուէն կը նշմարուէին Ողիմպոսի եւ Փիլոնի լեռները, աւելի անդին կը փռուէր Մարաթոնի դաշտը։ Արեւը եգէական ծովին վրայ բոցատարր ոսկի էր կարծեալ, որ ծործորազին կը կայծկլտար եւ չիթ առ չիթ վար կ'իջնար նաւը վարող թեւակներէն։ Արեւմուտեան հօրիզոնը ծով էր ծիրանի, անոր անդադարձ շողաբակումին մէջ կը փայլատակէր Ակրոպոլիսը եւ Աթենաս Պալատի յարձանը իր գէն ու զարդով, սաղաւարտով ու ոսկի նիզակով կը հալէր կարծեալ կրակին մէջ, ըսելու համար դիտողին թէ ոյժն ու գեղեցկութիւնը, մարդկային սրտի այդ զոյգ ըզմանքները, անբաժան էին ի բարձի։ Հեռուն, կապոյտ գոլորշիներու շուք մը կը ծփար Աթէնքի ճերմակ տունե-

րուն եւ բազմաթիւ մեհաններուն վերեւ։ Պօղոս հիացիկ, չէր կրնար զատել իր նայուածքը Աթենաս Պալատի փղոսկրակուտ անդրիէն, մինչ Ակրոպոլիսի սպիտակափառ կճեայ շողը կը շլացնէր աչքերը առաքելին։ Յոյներէն ամէնէն շատ սերտած աստուածունհին էր Աթենասը, սիրելի դուստր Ջեւսի, ծնած իր իմաստութենէն։

Անշուշտ Պօղոսի տեսած ելլազան վաղուց կորսնցուցած էր իր փառքը։ Կորնթոսի կործանումէն յետոյ, վերածուեւ էր Հռոմէական պարզ նահանգի մը, զրկուած իր այնքան սիրած ազատութենէն, կողոպուցւած եւ աղքատացած։ Աթէնքն ու Կորնթոսը կը շարունակէին թէեւ իրենց գոյութիւնը, երկիրը սակայն թանգարանի մը տպաւորութիւն կը թողուր այցելուին վրայ։ Հակառակ այս իրողութեան, Աթէնքը կը շարունակէր մնալ իրբեւ արուեստի եւ մշակութի փարոս մը բովանդակ կայսրութեանը մէջ։ Առանց Աթէնքէն անցնելու ոչ ոք կըրնար հազնիլ մտքի ազնուութեան պատմուճանք։ Կիկերոնի, Հորասի, Ովիտոսի եւ Վիրգիլիոսի նման մտաւորականներ անկէ կը քաղէին իրենց ներշնչումը։

Պօղոս Պիրէոն նաւահանգիստէն բարձրացաւ եւ մտաւ քաղաքը։ Մէֆիսի կամուրջէն անցնել վերջ յառաջացաւ Աթէնքի փողոցներէն եւ օթեւան գտաւ իր ազգակիցներէն մէկուն տունը, արհեստաւորներու եւ Հրեաներու փողոցին մէջ, նախօրոք Ղուկասին կողմէ իրեն եղած ցուցմունքին համաձայն։ Յաջորդ օրը առաջնորդութեամբ իր հիւրընկալին գացին Սինակոկ։ Փողոցները նեղ էին եւ փոշիով ծածկուած, թզենիներ կը բարձրանային ճերմակ պատերու քովի վեր։ Դուռներուն անջեւ կիները նստած



պիտի ծաղկեն իր ձեռքերն ու ոտքերը՝ եւ պատմունքանքն վրայ վիճակ պիտի ձգենն։

— Մեռնող եւ յարութիւն առնող Մեխիան մամտակաւոր չէր, այլ յաւիտենական։ Եւ ինչ չէր Ան մեղի բերելու մարմնոյ սնունդը, այլ՝ հոգւոյ։ Անոնք որ չեն հաւատարաւ յայտնի փրկչին, կ'անջատեն ինքզինքնին ճշմարիտ կեանքէն։ Մեխիան աստուածային սէրն է այս աշխարհի վրայ, անտեսանելի ին յոյսը, աստուածութիւնը աներեւոյթ իրերու։ Կենդանի թուող ողբալի մեռելներն են որ կ'ը մերժեն զինքը, անոնք որ կը քաշուին երկրի վրայ բնոր իրենց գեռ տար եւ չեն ող զիականորեն։

Սակայն Աթենացիները շնական եւ անտարբեր, կը հեղնէին զինքը, հակառակ իր անյեհեհ եւ խաղաղ կերպարանքին, համողի՜ ձայնին, որ կը ըսէր սրտէ մը եւ կընար սիրտեօրու դպչիլ։ Սինակովը քառակուսի եւ մեծկակ սենեակ մըն էր, ճերմակ բոլուած։ Հոն էին քաղաքին վաճառականները, խաւովպանները, արհեստաւորները, ինչպէս նաեւ օտարականները։ Պօղոս կը ճանչնար զիրենց իրենց կեցուածքէն եւ զգեստներէն։ Առաջին կարգին վրայ կը կենային մեծատոնները, ծածկուած նուրբ զգեստներով, փքուած ու վեհափառ, զոհ աշխարհէն ու Աստուծմէ։

Պօղոս սակայն դիւրին տեղի տուողներէն չէր, առաջին անգամը չէր որ կը հանդիպէր նման պերաբերմունքի։ Սալոնիկէի եւ Իկոնիոնի մէջ աւելին տեսած էր, քանիցս նախատուած եւ խոշաւագուծած։ Ան վրդովուած վերջացուց իր խօսքը։ Ամբողջ մողովարարն ոտքի ելած կը հեղնէր աւ կը թշնամանէր զինքը։

Գիշերը, Պօղոս իր փոքրիկ հիւրատան մէջ կը մտածէր առտուան եղածներուն եւ կը զարմանար թէ ինչո՞ւ իր հայրենակիցները, որոնք իր մարմինէն եւ արինէն էին, կը մերժէին իր պատգամը։ Ամուր պատ մը կը զատէր զինքը իր եղբայրներէն, փակելով անոնց սիրտերը իր խօսքերուն դէմ։ Հին վէրքեր, որոնք կը լլկէին իր հոգին երիտասարդութեան օրերուն, կը բացուէին նորէն,

ցաւէ ցաւ դուրելով զինքը։ Կատկածը փչէ պսակի մը պէս կը խայթէր իր հոգին, կ'ընգար թէ ինքը որս մըն էր գազանի բերինն մէջ։ Կը զարմանար թէ իրենները ինչո՞ւ կոնակ կը դարձնէին իր պատգամին եւ կը հեղնէին զինքը։ Մեխիան զրկած էր զինքը մարդոց իրբեւ իր զերազոյն պատգամաւորը, սակայն իր ունկնդիրներու հոգիին մէջ չէր զլար յոյսին շողը։ Հեթանոսները, որոնք օտար էին իրեն, եւ շունէին փրկութեան առհաւատչեան, Իսրայէլի որդիներուն տրուած, իրենց արեան մէջէն կ'արձագանգէին իր ձայնը։ Այս արձագանգները տակաւ կը վերածուէին փառաւոր երգի մը, շողացնելով իրենց դէմքերը յոյսին քաղցրութեամբ։ Անոնք աւելի մօտ կը թուէին ըլլալ փրկութեան, կը խորհէր Պօղոս, կ'ուզէին որ բարի լուրին պատգամաբերը շաքունակէր իր խօսքը, յայտնէր նոր թագաւորութեան օրը, որպէսզի իրենք ալ կարենային ազատիլ իրենց ողբերգութենէն եւ տեսնէին իրենց աչքերով փոխվէժը։ Պօղոսին խօսքերը կրկնել կուտային զարկերը իրենց յոգնած ու ջարջախ սիրտերուն։ Լոյսի թեթեւացում մը, երկինքներու եւ փառքերու բացում մը, հեռանկար մը ալքեկութեմի, կոշտներու, հանգիստներու եւ առատութեան կը բացուէին իր խօսքերէն անոնց փրկութեան աւելի մօտ հոգիներուն խորը։

Աստուած իմ հայրերուս, կը կրկնէր Պօղոս, արցունքէն թրջուած բառերով, երկաթէ կղպանքով ինչո՞ւ կը զոցես սիրտերը իմ արեանակիցներուս։ Իրենց նման ես եւս միթէ չէի՞մ սպասեր Մեխիայի զալստեան, ինչո՞ւ արեան ժառանգութիւնը որ կը միացնէ մեզ իրարու, կը մնայ լուս մեր մէջ։ Ինչո՞ւ իրենք չեն կրնար զգալ թէ Օրէնքն ու մարգարէութիւնները նախաձայնուած արձանագրութիւններն են Մեխիայի զալստեան, թէ Մեխիայէն առաջ բոլոր դարերը իրեն կը նային, ինչպէս արեւածաղիկը արեւին։ Ի՞նչ է պատճառը այս բաժանման, արդեօք չե՞մ ես այն մաքուր անօթը, որուն մէջէն պիտի թափանցէ փրկութեան յոյսը եւ Մեխիայի պատգամը։ Չեռքերս որոնք

անմեղներու արևնը թափեցին, մի՞թէ տա-  
կաւին կը մնան անմաքուր, ա՞յլ է պատ-  
ճառ արդեօք որ իմ հայրենակիցներուս սիր-  
տերը կը մնան փակ իմ խօսքերուս դէմ:  
Այս կարգի մտածումներու մէջ թաղուած  
քնայաւ կարծր քաղմոցին վրայ:

Յանկարծ խաւարին մէջէն իրեն երեւցան  
հարիւրաւոր դէմքեր, երեսները Բարձա-  
բասին, Պետրոսին, Յակոբոսին, որոնք կը  
շողային հաւատքին լոյսովը: Անոնց մար-  
մինները ափօսուած իրենց կրած հարուած-  
ներու խայտերով, բոլորն ալ ինկած էին  
խռտանդուած քարերով լեցուն ծործորի  
մը մէջ: Իրենց քով կեցած էր հրեշտակ մը,  
ցցած իր ձեռքերն ու թեւերը երկնքին դէմ:  
Մաղբին ու մօրուքը ոսկեզոյն էին եւ կը շո-  
ղային իր շուրջը սփռուած լոյսին մէջ: Պօ-  
ղոս սարսափով իր շուրջը նայեցաւ, հրեշ-  
տակին պատկերը իրեն կը բերէր ոչ միայն  
նմանութիւնը Մտեփանոսին, այլ նաեւ ի-  
րեն:

Իրեն կուգար թէ նստած էր քարկոծման  
դաշտին խրամատին եզերքը եւ իր առջեւ  
կար կապոց մը զգեստներու, խկ երկու գո-  
ւիւրը կեցած էին վկաններ սպաննութեան:  
Պօղոս ճիշ մը արձակեց եւ արթնցաւ, մինչ  
իւ շրթները կը մրմնջէին. «Աստուած մեր  
հայրերուն, ողորմէ՛ ինծի, որովհետեւ  
մարդասպան մըն եմ ես, օգնէ՛ ինծի եւ  
մաքրէ՛ զիս իմ մեղքերէս»:

Աստուան դէմ Պօղոս խաղաղած սկսաւ  
իւ պտոյտը Աթէնքի փողոցներուն մէջ: Ուս-  
նութիւններ որոնց առջեւէն կ'անցնէր ճոխ էին  
եւ լեցուն ամէն տեսակ առարկաներով եւ  
գեղօրներով: Փղօսկրէ անօթներ, բռնուռ  
արկղեր, սրահակներ, սեղաններ, թիկնաթոռ-  
ներ, օսկի կոճերով անկողիններ, փողփո-  
ղուն շրջագգեստներ, ծիրանի վերարկու-  
ներ, օսկի տրեխներ, սանաբեր, հայելիներ,  
լամբարներ, երաժշտական գործիքներ, բա-  
ժակներ, արձաններ եւ գեղարուեստի բազ-  
մատեսակ առարկաներ: Իր ձախ կողմը ձե-  
ղելով Ապոլոնի մեհնանին փառայեղ ան-  
դաստակները, մտաւ ճամբու մը մէջ, եզեր-

ուած՝ փարթամ բնակարաններով, որոնք  
կարծես թմբեր էին բուրումներէ: Ծոճիներ,  
ձիթենիներ եւ դափնիներ իրենց սաղարթ-  
ները կը ցցէին շէնքերու կարմիր պսակնե-  
րուն եւ արձաններու պատուանդաններուն  
վերեւ: Կիսաբաց դուռներէն կը տեսնուէին  
պղինձէ եւ մարմարէ արձաններ, դաւթին  
մէջ, եւ շատրուաններ: Ոչ մէկ շշուկ կը  
վրդովէր այս շեղ հանգստարաններուն խա-  
ղաղութիւնը: Միայն սրինգի մը հեռաւոր  
ձայնը կը լսուէր: Պօղոս կանգ առաւ տոհ-  
միկ կերպարանքով տունի մը առջեւ: Ծէշքը  
զարդարուած էր Յունաստանի ամէնէն մեծ  
փրկսփաներու մարմարեայ կիսանդրինե-  
րով:

Առաքեալը գիտէր թէ այժմ Յունաստանը  
աղօ մը ըլլալէ աւելի, մշակոյթ մըն էր,  
լեզու, արուեստ եւ գրականութիւն: Թէ  
հռովմէական քաղաքակրթութիւնը իտալա-  
կան չէր, այլ յունական: Աշխարհի քաղա-  
քակրթութեան ծառին արմատները Յունաս-  
տանի հողին մէջէն էր որ կը բերէին իրենց  
ամէնէն քաղցր պտուղները: Սակայն շե-  
ղութիւնն ու գեղեցկութիւնը քաղաքին չէին  
տպաւորիր զինքը, մեկուսացած կ'զգար  
ինքնիքը անհոգի եւ պաղ արձաններու եւ  
մարմիններու այս անսպասուն մէջ:

Օր մը իր այս պտոյտներէն մէկուն ըն-  
թացքին, բարձրացաւ Աթէնքի գլխաւոր բը-  
լուրներէն մէկուն դապարձ, որ իբրեւ կայք  
ծառայած էր հին արքաներուն: Ամէնուրեք  
մեհնաններ եւ արձաններ, կարծես քաղաքը  
հսկայ գերեզմանոց մը ըլլար տաճարներու,  
լքուած իրենց աստուածներէն: Ակրպողը  
արքայական թագի մը պէս կ'իշխէր քաղա-  
քին, որուն ամէնէն գեղեցիկ ադամանդը  
Պարթէնոն կը թուէր ըլլալ, մեհնան Աթե-  
նաս Պալլասի, գործը մեծ ճարտարապետ եւ  
արձանագործ Փիթիասի: Յոյներու համար  
մարդը յայտնութիւնն էր Աստուծոյ, մար-  
դեղութեան նախազգացումը կար հոս, կը  
ստածէր Պօղոս: Աստուածները այս կերպով  
արտայայտութիւններն էին մարդոց ըղձանք-  
ներուն, երազներուն, կիրքերուն եւ ձեռ-  
տումներուն, շինուած մարդոց յատկու-

Թիւններուն եւ ստորագիւններուն համաձայն: Ինչ որ իրենց մարդկային միջոցներով եւ կարողութիւններով չէին կրցած ձեռք բերել, իրենց աստուածներուն շնորհւել կը ջանային ունենալ: Միւս կողմից խորաքմանկ կը թուէին ըլլալ անոնք, վաւաշիտ Արեւմտադէր, շնացող Աստղիկը, քերթող Ապողոնը, մարդասպան Արէսը, գինով Բազոսը ժողովուրդին կը բաշխէին քաղցրաբոյր ըմպելիներ, չառնելու համար զարշահոտութիւնը չարիքներուն որոնք կը ծածկէին երկիրը: Կը զարմանար Թէ խնայել Յոյները ինչպէ՛ս չէին զգար տարբերութիւնը անտեսանելի երկնաւոր Հօրը, որ ստեղծած էր բոլոր երեւելի եւ աներևոյթ իրերը, եւ ձեռագործած այս արձաններուն:

Բլուրէն վար իջնելով, Պօղոս անցաւ Սոկրատի բանտին քովէն, ուր Յունաստանի ամէնէն ազնիւ հոգին կնքած էր իր մահկանացուն, Անտեղեակ չէր ինքը Սոկրատի կեանքին եւ վարդապետութեան: Անծանօթ ոչին որ այս մտքի կախարդին իմաստութիւն էր ներշնչած եւ յայտնած օրէնքները հանդերձեալ աշխարհին, արդեօք նախերկանքը չէ՞ր Մեսիային, կը խորհէր Պօղոս: Սոկրատ կը զաւատար Թէ հոգին աղատուած մարմնի անարդ բեռէն, նման խունկին զոր կ'ալրէր քրմուհին, վեր կը սրլանար ի խնդիր ճշմարտութեան: Թէ մեռնիւր քակել էր հանգոյցը հոգիին, երկրին հետ ունեցած պիղծ կապին, եւ բարձրանալ երկնքին մէջ, նոր ապրումով, իրբեւ ճահանջ իրիկուան: Մահը չարիք էր, քայց այդ չարիքէն էր Երկը ծնէր բարին, երկունքը անմահութեան, արիւնով արբազործուած ողջակէզի մը նման: Կեանքը պայքար էր,

աղատելու հոգին մահացու կիրքերէն, վերստին ծնիլ կարենալու համար ժխտածութեան պակ յաղթութեան, կեանքի քաւութեան սեղանին վրայ: Ողիմպի կամ Եղիսեան դաշտից բոլորքէն կանները Աստուծոյ պատկերներն էին լոկ նւ կամ գիրիբը իր անուան, բնութեան վրայ դրոշմուած: Մեր տեսողութենէն անդին կայ խորհրդաւոր ինչ մը, որ հոգիին աչքով, հաւատքով միայն կը տեսնուի:

Պօղոս գիտէր. Թէ քաղաքակիրթ աշխարհի իմաստութիւնը կ'ածանցէր Յունաստանէն, Յոյն միայն էր որ առաջին անգամ հետամուտ եկած էր մարդը զբաղեցնող գերագոյն հարցերու լուծման: Հոգիին գիտար յունական էր, իրբեւ հոգեկան գոյացութիւն մարդկային անձնաւորութեան: Սոկրատն էր որ սովորեցուց Աթենացիներուն հոգ տանիլ իրենց հոգիին, որ գաղտնիքն էր բարոյական առողջութեան: Իր խօսքերը՝ լեցուն բարոյական հրահանգութիւններով, նախանկարը կը կաղմէին Մեսիայի ուսուցումին: Այս մտածումներէն կրծուած կը յառաջանար Աթէնքի փողոցներէն, մերթ ակնարկը գետին սեւեռելով, մերթ աչքերը երկնիք բարձրացնելով:

Արեւը իջած էր լեռներու վրայ եւ կ'երթար մանկանալու խաւարին գիրկը, վերստին ծնելու համար: Հօտերը կ'իջնէին Տալիսի բարձունքներէն: Կիւթիրոն լեռը նւերուած մուսաներուն եւ Տիոսի, կը լողար սակի ծովուն մէջ: Անտառներէն հեծեծ մուսներ եւ արինգի ձայնի կուգային խառնուելու Պօղոսի խոհերուն, իրիկուան ճահանջին պէս որ մութին ծոցը կը լուծուի:

## ԿՐՕՆԱԿԱՆ

## Հ Ո Գ Ե Գ Ա Լ Ո Ւ Ս Տ

Որ էլն յերկնից աշտօր եւ համագեաւ յառաջնայն  
Յշմարիտ Սուրբ Հոգին

(Շարական):

Հոգեգալուստը, Յարութեան տօնախմբութեան շրջանի եղբարեակուսման է ձեւով մը, որ կը կատարուի Յիւնաց յիսնեորդ օրուան Կիրակիին, կամ Համարաձումէն տասը օրեր ետք, ի յիշատակ Ս. Հոգիին ազանակերպ իման՝ վերնատան մէջ խմբուած Առաքելոց եւ հաւատացեալներու վերայ, զօրութիւններու եւ լեզուներու շնորհներու բաշխումով, սկզբնաւորութիւնը Քրիստոնէական Եկեղեցիի հաստատման:

Քրիստոս Վերջին Ընթրիքի ատեն առաքելներու խոստացաւ Ս. Հոգին զրկել, իսկ Համարաձում օրն ալ վերջին անգամ ըլլալով պատուիրեց անոնց՝ չհեռանալ Երուսաղէմէն մինչեւ մխիթարիչ Ս. Հոգիին առաքումը:

«Եւ անդ է նշխար<sup>4</sup> նախածօրն Եւայի: Եւ ի մէջ տաճարին աւագ խորանն Յոճայ: Եւ ախկողմն խորանին տեղիք թլփատուութեան Քրիստոսի, որ է սեղանն Հայոց աղբիւն: Եւ յահապ կողմն խորանին տեղիք նշխարաց ծանկանց Բեթղազէմի, որք կոտորեցան վասն Քրիստոսի որ է սեղանն Վրաց աղբիւն: Եւ կայ ի մէջ տաճարին, Մ (50) սին մարմարեայ, և մէկ սեղան վերայ խաչ կայ Նիսրեայ՝ ձեռամբ Սուրբ Լուսաւորչին զոր այժմ Լուսաւորչի օրն կոչեն: Եւ ի գլուխ սեան Բ (2) կողմն, Բ (2) պղնձէ խաչ կայ բեւեռեայ, (էջ 36ա) ասեն այն տաշղիշն են է որ զՔրիստոս լուացին: Եւ անտի յառաջ մազարան, ուր սուրբ աստուածածին Քառասուցն պահեաց ռ Եւ անտի մայր տեղիք Հովուացն, ուր Հրէշտակէ երեւեցան Հովուաց, և ետսն զաւետիս վաւրն ծննդեանն Քրիստոսի: Եւ անտի վայր իսկ մի, անուն սուրբ Գէորգայ զօրավարին, և կայ շղթայքն որով կապեցին ըդ սուրբ Գէորգ: Եւ տունն Արիւթարայ քահանային ուր Դաւիթ զհաջն առաջաւորութեանն եկեր: Եւ տեղին ուր այլ աղբիք գառապանին բերին: Եւ ի ճանապարհին Բեթղազէմի դերեղման Հոաքելի մօրն Յովսէփայ, ուր ծնաւ զԲենիամին և մեռաւ: Եւ անդ ի յառաջ միտք մի սուրբ Եղիայի, ուր Հրէշտակ (էջ 36բ) . . . . . ուր բնակեցաւ Յովաննէս ամս ԻԹ (29): Եւ ի ճանապարհին Գաղայ աղբիւրն ուր Փիլիպպոս առաքեալն զներքինին մկրտեաց, և Հոգին սուրբ իջաւ անդ: Եւ Գաղայ Հրէշտակապետ եկեղեցին որ է վանք Հայոց աղբիւն: Եւ անտի վայ Բերթոն քաղաքն որ է Հարաւակողմն, ուր կայ գերեղման Աբրահամու, Սառայի, Սահակայ, Յակոբայ, և այլոց նահապետաց: Եւ ծանալ Մամբրէի որն տէրն, երկու Հրէշտակօք երեւեցաւ Աբրահամու և ընկալաւ ի տան իւր, և էջառ աւետիս վասն ծննդեանն Սահակայ: Եւ տեղին ուր տէրն առաքեաց զՀրէշտակն ի Սողոմ և ի Գոմոր:

Ձ թլփատութեան տեղոյն Հայոց պատկանելութեան հոս է որ առաքին ազգամ կը իսնդիպի: Այլուր այս մասին վկայութիւն չեն գտնուիր:

Եւ Յայնեռնի ուր Յովաննէս մկրտութիւն առնէր: Եւ անտի յառաջ զէմ յարեւելս Սրգեանի Յորդանան, ուր մկրտեցաւ Քրիստոս: Եւ յայնկոյս Յորդանանու բլուրն է (էջ 7էբ) Եղիայի ուր կառօք վերացաւ յերկինս: Եւ յայս կոյս վանքին Յովաննէս Մկրտչին ուր ինքն բնակէր յորժամ մկրտութիւն առնէր: Եւ այլ ի վեր վանքն սուրբ Հօրն Ջոսիմոսի զոր ոմանք առիւծի վանք ասեն: Եւ անտի վեր Գաղգաղայ ուր Յեսու զորդիսն Իսրաէլի թլփատեաց: Եւ անտի յառաջ Յերեմի, և անդ է տունն Ջաքէի ուր տէր մեր Քրիստոս եմուտ ինդ Ջաքէի, և եկեր ընդ նմայ: Եւ ժանտաթղենին որ ել Ջաքէ տեսանիլ զՔրիստոս: Եւ է անտի վեր աղբիւր Եղիայի մարդաբէն: Եւ անտի վեր անապատըն, ուր Քրիստոս որոնեաց Խ (40) օր, և ապա կամաւ քաղցեաւ, և մատեաւ սատառայ փորձել զՔրիստոս: Եւ անդ ի վեր լեւորն փորձութեան, ուր հհա՛ սատ (էջ 75ա) անայ զտէրն, և եցոյց նմա զամենայն փառս աշխարհի: Եւ անտի վայր տունն կուրբերուն, որք աղաղակէին որդի Դաւթի Յիսուս ողորմեայ մեղ: Եւ անտի վեր յէմն, ուր նստաւ Քրիստոս ի Հանդիստ: Եւ անտի վեր տեղին ուր ընդ յառաջ եղեն Քրիստոսի բորքն Ղաղարու Մարդայ եւ Մարիամ: Եւ գիւղն Բեթանիայ. ուր կայ դերեղման Ղաղարու ի մէջ եկեղեցոյն: Եւ տեղին ուր եկաց Քրիստոս և ձաջնեաց Ղաղարու: Եւ անտի վեր տունն Սիմոնի բորտին ուր տէր մեր զօծումն ընկալաւ: Եւ անտի վեր դիւղն Բէյթ Բաղէ, ուր կայր կապեալ էջն և աւանակն: Եւ տեղին ուր առաքեաց Յիսուս ածել զէջն և դաւաւանին: Եւ տեղին ուր նստաւ յաւանակն: (էջ 75բ) Եւ անտի կողմն Հիւսիսոյ, լեռն Գալիլիայ, ուր տէրն մեր ժամադիր եղեւ աշակերտացն, յետ յարութեան անդ երեւեցաւ նոցա: Եւ ի մէջ Գալիլիայ և Համբարձմանն, տեղին ուր Գալիլէ Հրէշտակապետն զԴարարին երբ սուրբ կուսին Մարիամու: Եւ ետ զաւետիս վասն վերայփոխման իւրոյ: Եւ տեղին Համբարձմանն Քրիստոսի, որ է փառաւոր տաճար: Եւ ի մէջ տաճարին յէմն օտանտեղացն Յիսուսի: Եւ անտի վայր դերեղման Պղեղեա

պրոնիկին: Եւ անտի յառաջ տեղին ուր «ըզ-  
 չայր մեր որ յերկինս» ուսոյց աշակերտաց  
 իւրոց: Եւ անտի յառաջ ուր զինի երանու-  
 թիւն ուսուց: Եւ տեղին սւր զխորհիս մե-  
 դու, եկեր Քրիստոս աշակերտօքն (էջ 76ա)  
 Հանդերձ յաւուր Համբարձման: Եւ անտի  
 յառաջ վէմն ուր նստաւ Քրիստոս յանդիման  
 տաճարին: Եւ անտի վայր յայրն յորում  
 թաղեան առաքելքն, յորժամ գտէր մեր  
 կալան: Եւ զառվար լերինն Ձիթենեաց,  
 ընդ որ տէր Քրիստոս յաւանակաւ էջ: Եւ  
 տեղին ուր կայր նրստեալ սուրբ Աստուա-  
 ծածին եւ լայր, յորժամ Հրեայքն զսուրբ  
 Ստեփաննոս քարկոծէին: Եւ պարտէզն ուր  
 այօթեաց Քրիստոս: Եւ քարայրն ուր կալան  
 զՔրիստոս: Եւ վէմն յորում ձգեաց (էջ 76բ)  
 .....: Եւ տեղին ուր առաքելքն վիճակ  
 արկին, եւ ել վիճակն Մատաթեայ եւ Հա-  
 մարեղաւ ընդ մեծաոտան առաքելայն: Եւ  
 տեղին ուր սուրբ Աստուածածնի այօթէր:  
 Եւ տունն Յոհաննոս աւետարանչին ուր Հա-  
 աքեցա՞, սուրբ առաքելքն Քրիստոսի, ի  
 փոխումն սուրբ Աստուածածնին, ուր ա-  
 ւանդեաց զմաքուր Հոգին ի ձեռն միածին  
 որդւոյ իւրոյ, քանզի ինեալ Քրիստոս փր-  
 կիչ մեր, ի փոխումն մօր իւրոյ: Եւ անդ է  
 սիւնն ուստի ջուր բղխեաց յաւուր սօնի  
 տաճոն ընդառաջէ: Եւ անդ է միւս սիւնն  
 սուրբ Աստուածածնին ունելով ի գերկն իւր  
 զմարմնացեալ աստուածն վառ մեր: Եւ  
 տեղին ուր աստուած զՏոգն առեալ եւ ստեղծ  
 զԱղամ: Եւ տեղին ուր առաքելքն վիճակե-  
 ցին զաշխարհս ի քարոզութիւն սուրբ աւե-  
 տարանին: Եւ մերձ սուրբ Սիոնի վանք Հա-  
 յոց սր. Փրկիչ, եւ անդ է կաթարիչ վէմն  
 դեր (էջ 55ա) եղմանին Քրիստոսի. անդ է  
 եւ բանտն ուր զՔրիստոս եղին եւ կապեցին  
 ի սիւնն: Եւ տեղին ուր Պետրոս ուրացաւ եւ  
 Հաւ խաւեցաւ: Եւ անդ ի վայր տեղին ուր  
 ընդ յառաջ ելին Հրեայքն եւ կամէին յա-  
 փշտակել զմարմին տիրամօր Աստուածած-  
 նին, յորժամ առաքելքն տանէին ի ձորն  
 Գեթսեմանի ի թաղել. եւ Ասիոնիայ քահա-  
 նայն յանդգնեցաւ զձեռն ի դազազ տիրա-  
 մօրն եւ իսկոյն Բ (2) ձեռն յարմիկացն Հա-  
 տան: Եւ տեղին Հատալմանն Պետրոսի: Եւ

քաղաքն սուրբ Երուսաղէմայ մերձ դրանն  
 սուրբ Հրեշտակապետք որ է վանք Հայոց,  
 որ է տուն Անայ քահանայապետին. անդ եւս  
 նախատեցին զՔրիստոս: Եւ կապեցին ի ծա-  
 ոքն ձիթենի. եւ բիրք բիրոց Հրեշտակե  
 իլին ի վերայ ծառոյն: Եւ անտի յառաջ մեծ  
 վանք Հայոց սուրբ Յակոբ. անդ է դուռն  
 սուրբ Յակոբայ որդոյն Ջեբելիայ, եղբայր  
 Ոհաննոս (էջ 55բ) աւետարանչին, եւ այն  
 է աթոռ տեառեղբօր Յակոբայ եւ այժմ է  
 վիճակ եւ աթոռ Հայոց ապրին: Եւ կայ ի  
 մէջ եկեղեցոյն Բ (2) քարինք, զոր ասեն թէ  
 ի խնդրոյ Աստուածածնին բերեալ Հրեշտա-  
 կաց ի լեռն Սինայաւ: Եւ անտի յառաջ  
 տեղին ուր տէրն զԹումաս վաճառեաց Ար-  
 քանէս վաճառակտին, որ է վանք Ասորոց:  
 Եւ անտի յառաջ տեղին ուր պատահեցաւ  
 Քրիստոս իւղաբեր կանանց յարուցեալ ի  
 մեռելոց, որք կալած զդոսն նորա եւ երկիր  
 սլապին նմայ: Եւ անտի յառաջ տեղին ուր  
 տէրն Քրիստոս զգոհանալն Հրամայեաց:  
 Եւ յարեւմտից կողմն քաղաքն Երուսաղե-  
 մայ, տեղին ուր իլնանեցան թազաւորք  
 մօգուցն, եւ Հարցանէին վասն ծննդեանն  
 Քրիստոսի: Եւ անտի յառաջ խաչավանդ որ  
 է Վրաց ապրին, զի ասեն ոմանք թէ յորժամ  
 զսուրբ խաչն Քրիստոսի տանէին ազն Պար-  
 սից, անդ եղին մինչեւ դնացին: Եւ Հանդիպ  
 քաղաքն Երուսաղէմայ, եկեղեցի (էջ 56ա)  
 մի յանուն անաքծաթ բժշկացն Կողմայի եւ  
 Դամիանոսի, եւ են անդ եղեալ սուրբ մար-  
 մինք նոցա: Եւ Հիստալից կողմն քաղա-  
 քին Երուսաղէմայ, տանն Դաղիլի օրհնու-  
 ցուց վարդապետին, ուր կայ գերեզման սըր-  
 բոյն Ստեփաննոսի: Եւ տեղին ուր տէրն եւս  
 զղաւստարակն զեհպանեցն Աբգարու թազա-  
 ւորին: Եւ յարեւելից կողմն քաղաքն սուրբ  
 Երուսաղէմայ, է դուռն ողորմութեան ի գէմ  
 Համբարձմանն Քրիստոսի ընդ որ տէրն Քր-  
 իստոս քառասուն օրեայ եմուտ ի տաճարն,  
 զոր ինքնին քացաւ, զոր վակեալ էր Եգեկիէ  
 մարգարէն բանիւ ի Բաբելոնէ: Եւ միւս  
 դուռն Բնեամենի ընդ որ տէրն Քրիստոս  
 յաւանակաւ եմուտ ի քաղաքն Երուսաղէմ:  
 Եւ առաջի դրանն տեղին ուր քարկոծեցին  
 զսուրբն Ստեփաննոս: Եւ անտի վայր զսուրբն

Երեմիայի փառաբերէին: Եւ մերձ գրանն առնին Յովակիմայ եւ Աննայի ծնողաց սուրբ Աստուածածնին (էջ 56բ) որ է Կիսկաւոր տաճար: Եւ մերձ նորին, է արագ զոր էջ (58) ամեայ անգամաւորոյն թժշկեալք Քրիստոս: Եւ անտի յառաջ ապարանքն Հերովդէի զոր սպիտակ Հանդերձ պղծեցուցին Քրիստոսի: Եւ մերձ նմին, ուր զփուշ պտակն եղին ի զլուխ Քրիստոսի: Եւ մերձ նորին կամար ձորայ վերայ տէրն Քրիստոս քարոզեաց. եւ երբու սեաւ քարինքն սպիտակացան: Եւ մերձ նորին տունն տեստես կնոջն, որ է եկեղեցի: Եւ անտի յառաջ տեղին, ուր ըզ Սիմոն Կիւրիւսացին կարան պահակ խաչին Քրիստոսին եւ դուռն գեղեցիկ տաճարին ուր Պետրոս եւ Ոհաննէս զկաղն թժշկեցին: Եւ անուն Պրիլատոսի ուր դատաւարտեցին զՔրիստոս: Եւ տեղին քարայտաւ ուր նստաւ Պրիլատոս եւ լուսջ զձեռն սակով թէ թեա անպարտ եմ յարենէ դորա: Եւ զփրկիչն պան Գաբեալ ետ ի ձեռն Հրէից զի խաչ հանեցին: Եւ տեղին ուր զկարմիր հանդերձն զգեցուցին, եւ ապա տարան ի խաչ հանել: Եւ ի դուռն յարութեան տեղին ուր Սիմոն զիսալափայտն եղ, եւ Յիսուս առեալ ել ի Գողգոթայ (էջ 57ա) ի խաչ ելանել: Եւ կայ Դ (է) եկեղեցի ի դուռն Յարութեան, ի ներքոյ Գողգոթային տեղին ուր սուրբ Աստուածածին կայր. եւ արտասուէր ընդ դէմ խաչի, որ է եկեղեցի Հապաշից: Եւ զին նորա հըրեշտակապետ, որ է եկեղեցի Ուստոց: Եւ անտի յառաջ տեղին ուր Ոհաննէ աւետարանիչն կար. եւ արտասուէր որ է եկեղեցի Հայոց: Եւ կայ ի մէջ եկեղեցւոյն մասն մի այն սիւնէն զՔրիստոս կապեցին: Եւ ընդ դէմ նորա տեղին ուր իւղարեք կանայքն կային ի Հրէաստանէ: Եւ հայէին որ է եկեղեցի Հռոմայ: Եւ է Յարութեանն մեծ եւ զարմանալի, որ թէ Ճմ (100,000) մարդ մտան է ներս շրջուի շնորհօքն Քրիստոսի: Եւ կայ ի ներս փրկագործ տնօրէնութիւն Քրիստոսի աստուծոյ մերոյ:

Ճնախ եւ առաջին տեղին Գողգոթայ, ուր խաչեցաւ Քրիստոս եւ հաշտեցուց զհայր ընդ արարած: Եւ առաջին նորա պատուած վէմն: Եւ սեղանն ուր Աբրահամ եհան զոր-

դին իւր փրկահալ պատարանդ տեսուծոյ: Եւ փոխանակ Սահակայ խոյն կախեցաւ: Եւ անն Ուրեմայն է Եր միւս սեղանն ուր Մելքիսեքի պատարանդեաց: Եւ միւս այլ սեղան ուր Յան կորն է կոնգլիւն ֆաւոր տանդութիւն (էջ 57բ) փանդեալ յերկրէ յերկինս: Եւ դուռն արտառած ի զլուխ տանդխոյն, եւ ի ներքոյ Գողգոթային նշխարք նախահօրն Ալամայ, որ է Վրաց ազգին: Եւ կայ անդ գերեզման Մեքիսեքիէ քահանային: Եւ անտի յառաջ տեղիք պատանքայ Քրիստոսի, ուր զտէրն մեր օծին Յովսէփ եւ Նիկողիմոս: Եւ անտի յառաջ խորանն Հապաշ ազգին: Եւ անտի յառաջ սեղանն Ասորոց: Եւ յարեմաթից կողմն սնարից զուպային որ է սեղան Ուստոց: Եւ յարեմաթից դուռն գերեզմանին զանձանակն: Եւ յաջ կողմն խաչ պատուհանն: Եւ ի մէջ տաճարին աստուածընկալ սուրբ գերեզմանն Քրիստոսի աստուծոյ մերոյ, որում լոյսն ճառագայթի: Եւ ճախ կողմն գերեզմանին Քրիստոսի, շնչահան ուր Լուսաւորիչն է ազօթեր: Եւ ի վերայ գերեզմանին զուպայ ի վերայ Լուստակ քարակ մարմարեայ սընբրուն: Եւ պարտէղն ուր Մարիամ Մաղդաղենացի ետես զՔրիստոս ի կերպարանս պարտիղային: Եւ անտի յեկեղեցին Փռանկաց, որ անուն սուրբ Աստուածածնին կառուցեալ: Եւ կայ ի ներք մասն միայն սիւնէն որ ըզ Քրիստոս կապեցին: Եւ անտի յառաջ բանտն որ եղին զՔրիստոս: Եւ անտի յառաջ ուր զծիրանին (էջ 58ա) ըզգեցուցին: Եւ անտի յառաջ տեղին ուր զինուորքն զհանդերձն բաժանեցին եւ ի վերայ պատմուճանին յիմակ արկին: Եւ առաջ խորանն Յուդաց ի մէջ Յարութեանն: Եւ ի վերայ խորանն խորան սուրբ Լուսաւորիչն որ է մեծ սեղան Հայոց ազգին զոր Լուսաւորիչ անդր պատարագեալ է, եւ կացեալ ամս է (7): Եւ անտի վայր խաչ գիւտն, ուր զսուրբ խաչն Քրիստոսի դառն: Եւ ունի Յարութիւն, տասներկու դուռ, եւ մէկ դուռն երաշխարութեան գոր սուրբ Աստուածածնին երաշխաւոր եղեւ առ միածինն իւր, վասն պրոնիկ Մարիամին, եւ ապա եմուտ ի Յարութիւն: Եւ ընդ դէմ գերեզմանին Քրիստո-

սի, վերնատունն Հայոց, փառաւոր եւ զեղեցիկ զարդարեալ ընդդէմ Գողգոթային: Եւ յետ Յարութեան զան(գա)կատունն (էջ 58ր) փառաւոր եւ զեղեցիկ եւ բարձր եւ անհրման եւ էր է (7) տաղաղայն եւ Իսի, ԼԸ (38) յուսմուտ, եւ ի բոլոր յուսմուտներուն ՃԼԴ (134) միշտ մարմարեայ: Եւ ներքին տաղաղայն եկեղեցի անուն Յովնանու աւետարանչին: Եւ զմաս ի լեւոն Մինեկան, տեղին ուր ետես Մովսէս զմորենին վառեալ եւ ոչ այրէր, եւ խօսեցաւ աստուած ընդ նմա, ի մորենոյն: Եւ լեւոն զոր ել Մովսէս եւ էառ զարէնքն աստուծոյ զրեալ մատմբ աստուծոյ ի տախտակն քարեղէնան: Եւ վէժմն որ եմուտ Մովսէս տեսանել զաստուած, նա վէժն ի հայ էառ, որ երեւի տեղին մինչեւ զայսաւր: Եւ այլ տեղիք ձգնաւորաց, եւ կուս (էջ 59ա) անաց է անդ, եւ տընօրէնութեանց աստուծոյ: Եւ անտի էջ յեղիստոս, զի յորժամ էառ Յովսէփ զՄարիամ եւ զմանուկն Յիսուս, եւ էջ յեղիստոս հրամա-

նաւ հրեշտակին աստուծոյ, եւ եկին մինչեւ ի մերձ քաղաքին, ք զիւղ մի որում անուն Մաթարիայ կոչի, եթող տխրամայրն զմանուկ Յիսուս անդ, եւ ինքն զնաց ի զեօղն ճուր խաղրել եւ ոչ ետուն, իբրեւ զարձաւ ետեւ ճուր բղխեալ յոգնատեղաց փրկին, անուշաւամ եւ լաւ: Եւ էջ մինչեւ ցայսաւր: «Եւ այլ տեղիք տընօրէնութեան Քրիստոսի շատ կայ յերկրին յեղիստոս: Եւ տեղիքն մի այլ որում Ճամհայ կոչի, եւ Մաղթառ առի, եւ յինի մեծ աշխարհաժողով, յաւուր Համբարձմանն Քրիստոսի, եւ երեւի (էջ 89բ) Աստուածածին որպէս զուր ունեւորժ ի գիրկն իւր զմխածինն: Եւ զան ամենայն սուրբ յերկրպաղութիւն սուրբ Աստուածածնին եւ միածնի իւրոյ առաքեալքն Էւ մարգարէր, կուսա՞ք եւ ամենայն սուրբ եւ եթէ ոք հայցէ զսուրբ ոք տեսանել. երեւի նմայ զարմանալի տեսեամբ. ի փառս աստուծոյ մերոյ յաւիտեանս ամէնն» (էջ 60ա):

Հրատարակեց՝ Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

## ՊԱՏՄԱԿԱՆ

### Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն

Ս. ԷԶՄԻԱԾՆԻ ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԻ

ԵՒ ԳԵՈՐԳԵԱՆ ԺԵՄԱՐԱՆԻ

(Դ ԴԱՐԻՑ ՄԻՆՁԵՒ ՄԵՐ ՕՐԵՐԸ)

### Գ Լ Ո Ւ Խ ԺԲ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ ՅՈՎՀԱՆՆԷՍ Ը ԿԱՐԲԵՑՈՒ ՕՐՈՎ

(1831 – 1842)

Ս. էջմիածնի Վարդապետարանը իր գոյութիւնը շարունակում է նաեւ Եփրեմի յաջորդ Յովհաննէս Ը Կարբեցի կաթողիկոսի օրով (1831-42)։ Թաղիաղեանի Հրաժարումից յետոյ, այնտեղ ուսուցիչ է հրաւիրւում Գրիգոր Շաքարճեանը։ «Յետ ելանելոյ Մեսրոփայ ի պաշտօնավարութենէ աշխարհ Ատրպատական յամի 1834 ուսուցիչ կարգեցաւ նոյն առաջադաս աշակերտաց ի դպրոց Աթոռոյն Գրիգոր վարժապետ Շաքարճեան, որ եւ ըստ առաջնոյ օրինակի եթող ի միտս աշակերտելոցն զիւր շնորհալի իմաստից քանքար յայտնիկ միջոցի զսկիզբն կալաւ աստանոր ուսումն ուսւ լեզուի։ Իսկ յետ վախճանին Գրիգորի անդր ի Տփլիս յամի 1835 դասատուք էին ուսումնարանի Աթոռոյս Ստեփաննոս արքեպիսկոպոս Արարատեանց եւ Իսահակ վարդապետ Կողբացի, որք շարունակեցին զդասատուութիւն զաղատական արհեստին՝ զբացումն լուսաւոր Հայոց Սիւնհոդոսին յամին 1837»<sup>(1)</sup>։

1836 թուին հրատարակուեց Պոյոժենիան։ Այդ կանոնադրութեան համաձայն կաթողիկոսարանն ու թեմական կեդրոնները պէտք է ունենային իրենց համապատասխան վարժարանները, պետութիւնից հաստատուած ծրարադրով եւ սեփական վերահսկողութեան ներքոյ։ Վերջ էր տրւում կրթութեան անձնական հանդամանքին եւ պետութիւնը իր ձեռքն էր առնում այն ամբողջութեամբ։ Մանրամասնօրէն ճշդւում էին իւրաքանչիւր տեսակ դրացրոցում աւանդուող ոչ միայն առարկաները, այլեւ նրանց չափը։ Կրթութիւնը պատահական մարդկանց ձեռքից առնուելով, վստահւում էր պետութիւնից ճանաչուած ուսուցիչներին։ Պոյոժենիայի յօդուածներէրէ մէկը սահմանում էր. «էջմիածնի սեմինարիայի բարեկարգութեան, ուսման ընթացքի եւ այլոց վերահսկողութիւնը կախուած է պատրիարքից եւ ծայրագոյն խորհուրդից. իսկ թեմական սեմինարիաներինը եպիսկոպոսից եւ կոնսիստորիաներից»<sup>(2)</sup>։

(1) Հայրեհասէր, 1845, Թիւ 79։

(2) Նրէցեան Ա., «Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը եւ Կովկասի Հայք», Թիֆլիս, 1896, էջ 368-369։

1837 թուից էլմիածնի դպրոցը դործում է համաձայն Պոլտեմիայի տրամադրութիւնների: Այն ահա ըստ ներկայ դրութեան միջոցաց մեծի Աթոռոյս ուսանին ի նոյն ուսումնարանի աշակերտք ժառանգաւորք եկեղեցւոյ ի հայ եւ ի ռուս լեզուս՝ ըստ յատկացեալ ժամուցն պատշաճ աւուրք եւ ըստ բաժանմանց ուսանելի աւարկայից»<sup>(3)</sup>:

Այսպէս, երբ էլմիածնի դպրոցը «ձեւ եմուտ Եւրոպայի կարգաց ըստ ամենայն հանգամանաց իւրոց», Սինոդը 1837 թուականին ուսուցիչ է հրաւիրում հայերէն եւ ռուսերէն լեզուների համար Յակոբ Արղանեանցին՝ Թիֆլիսից, որը սակայն էլմիածնում երկար չի դիմանում եւ հեռանում է, պատժաւորաբար նշում տեղւոյն տալը: Նրա տեղը պաշտօնի է կոչւում Իսահակ քահանայ Սահառունեանցը, որպէս ուսուցիչ հայոց լեզուի եւ քերականութեան, ճարտասանութեան եւ ջրիստոնէական վարդապետութեան. «Իսկ ի լեզուի Ռուսաց՝ կարգեցաւ Ռուս աստիճանաւոր»<sup>(4)</sup>:

1840 թուականը էլմիածնի վարդապետարանի մէջ նշանաւոր է ներանով, որ զասարանները կարգաւորում են ըստ եւրոպական ձեւի: Այդ դրութիւնը Սինոդի վերահսկողութեան տակ շարունակւում է եւ զանազոն նոթամեծութիւններով կատարելագործուելով՝ յանդու է Գէորգեան ձեմարանին: 1840 թուին դպրոցը ունէր միայն երկու դասարան: Առաջին դասարանը իր հերթին բաժանուած էր նոյնպէս երկու: Առաջին մասում ւսանդում էին. «Հայոց լեզու՝ զներքին տեղին ճարտասանութեան, դիմարանութիւն, զքրիստոնէականութիւն, զթարգմանութիւն, զընթերցանութիւն եւ զվայելչագիրտութիւն: Երկրորդ կարգի՝ ուսանին ի հայումն՝ զքերականութիւն, լոյս քրիստոնէական, զարբազան պատմութիւն եւ այլն: Իսկ ի ռուս սկզբունք քերականութեան՝ զհասարակ ընթերցանութիւն եւ զվայելչագրութիւն: Եւ երրորդումն՝ զերկուց լեզուան սկզբունք ազատական արհեստին: Իսկ ի յերկրորդի դաստասան՝ ուսանին զհայ եւ զռուս մանկավարժութիւն»<sup>(5)</sup>:

Ռուսական տիրապետութեան հովանու տակ էլմիածնի վարդապետարանը եւրոպական լուսաւորական դրութեան բարիքներին էլ թափանձելով, հաստատապէս սկսեց վերելքի դժուար ճանապարհը, վարդապետարանը իր վրայից թօթափում էր ասիական ձեւերի հնոտին եւ զգնում էր իրեն յարմար լուսաւորութեան պատմունհներ: Դպրոցը քայլ առ քայլ ծաղկում էր եւ վերածւում կրօնա-հայագիտական իւրատեսակ մի համալսարանի:

ԺԹ Դարը յաջւում է մեր Ժողովրդի համար շատ ախուր պարմաններում: Դարի վերջը կատարեալ հակապատկերն է դրան Դարասկզբում էլմիածնի միաբանութեան կացութիւնը, մտաւոր դարգացման տեսակէտից, չափազանց տուրք է: Բացի մի քանի վարդապետներից (Յովհաննէս Շահխաթունեան, Մանուէլ Շահինեան, Զաքարիա Գուլասպեանց, Ղուկաս, Արքա-համ եւ այլն) մնացած միաբանները՝ եպիսկոպոսներով հանդերձ՝ խորը աղքատութեան մէջ էին ընկղմուած: Դրա պատճառը ԺԹ Դարի վերջերի եւ ԺԹ Դարի սկիզբներին քաղաքական անկայունութիւնն էր, երբ Հայ Ժողովրդի ղեկավարութիւնը՝ հոգեւորականութիւնը յատկապէս, եռակողմանի յարձակւողների կողմից ենթարկուած էր կասկածի եւ հալածանքների իր ուսումնական կամ հայրենատիրական ամենաթոյլ նկատումների համար իսկ:

(3) Շահխաթունեան, Յոյն, Հատ. Ա, էջ 121:

(4) Հայրենասէր, 1845, Բիւ 77:

(5) Հայրենասէր, 1845, Բիւ 77:

Յիշենք միայն: Աշտարակեցու ապստամբները, որոնք յարուցւում էին նրա եւ նրա գործակիցների իւրաքանչիւր ժայլի առաջ: Պարսիկներին հետ միասինքն Վերջնական հաշուեյարդարից, յետոյ, Երեւանեան նահանգի շուրջ Ս. Էջմիածնում կարելիութիւններ ստեղծուեցին նոր ձեւի դպրոցի հիմնադրման համար: Կարեցին առիթը բաց չթողնել: Ի հարկէ, ամէն ինչ կարելիութիւնից չէր կարող սկսուել: Մինչեւ հնացած, բորբոսած հասկացողութիւնների եւ վարժութիւնների ի սպառ հեռացումը ժամանակ եւ մեծ ճիւղ էր հարկաւոր: Անցնելով ռուսական տիրապետութեան տակ, մեր հոգեւորականութեան եւ ամբողջ ազգի յետամնացութիւնը, համեմատած եւրոպացիներին, շեշտուած կերպով ի յայտ եկաւ, ինչպէս երբեմն այդ եղել էր Լեհաստանում՝ Նիկոլ Թորոսովիչի դէմ պայքարում: Մարդիկ շտապեցին ամբողջ մեղքը բեռնել չայ հոգեւորականութեան վրայ եւ տեղիւնաւորել պահանջներ ու մեղադրանքներ կիտեցին նրա ուսերին, առանց անդրադառնալու թէ ի՞նչ էր եղել իրենց դերն ու պարտքը այդ հարցում եւ որքանով արդարացրել էին իրենք իրենց:

Ճիշդ է, Կարեցու ժամանակ՝ 1837 թուականին Էջմիածնի վարդապետարանը վերակազմուած եւ նոր հիմունքներով էր դրոծում, սակայն դեռ եւս չէր գտնուում այն ցանկալի բարձրութեան վրայ, որ իրեն վայել էր իրր կաթողիկոսարանի վարդապետարան: Այսուհանդերձ, ամբողջ Հայութեան ուշուրուշը կեդրոնացել էր նրա վրայ եւ բոլորն էլ իրենց յոյսերն ու իղձերը խարսխում էին նրա վրայ: Բոլորը սպասում էին, որ չափազանց վշտերից եւ բարբարոսութիւններից ազատուած Մայր Աթոռը կը ծառայի ազգին որպէս հոգեւոր-բարոյական խարխիւ եւ շուրջով իրենց թօթափելով տգիտութեան խաւարամած ու թանձր քողը, կը նուիրուի իր հօտի կրթութեան եւ յառաջդիմութեան սրբազան գործին:

Այս մտահոգութիւնների մէկ արտայայտութիւնն է Մոսկուայից Լազարեան եղբայրների 1832 թուի Փետրուարի 4ի նամակը Կարեցուն ուղղուած: Լազարեանները շատ հարցերում մեղադրում են Կարեցուն, ապա ծանրանում Ս. Էջմիածնի դպրոցի խղճալի դրութեան վրայ եւ թուարկելով Ներսէսի, Սահակի, Մեսրոպի, Գիւտի, Օձնեցու եւ այլ հոգեւորականների կրթական գործունէութիւնը, ուղղակի ասում են. «Արժանաւոր աթոռակալք Լուսաւորչին եղեն եւ ցուցին զինքեանս ոչ սակաւք, մանաւանդ Մովսէս կաթողիկոսն Տաթեւացին, որ բացի Նիւթական շինութեանց պայծառացոյց զԱթոռը եւ դպրատամբ եւ ուսմամբ զանազան գիտութեանց, յաջորդ նորա Փլիպոս կաթողիկոս որ ամեալ այլուստ զՍիմէոն Ջուղայեցի եւ զայլ վարժապետս կրթեաց զմիաբանս Էջմիածնի ի բազում գիտութիւնս»:

Ապա այնուհետեւ Լազարեանները յիշատակում են յիշեցնում են Կարեցուն իր անմիջական նախորդների՝ Յակոբ Ջուղայեցու, Սիմէոն Նրեւանցու եւ Ղուկաս Կարեցու բազմարդիւն գործունէութիւնը դպրոցական ասպարէզում. «Իսկ յետ մահուան Ղուկաս կաթողիկոսի, եւ այս բարի ինչ յուսք զաթոռակալաց դորին, բաց ի զանազան անկարգութեանց եւ չդիթութեանց»: «Սակայն», աւելացնում են Լազարեանները, «Աստուծոյ շնորհիւ տունդ, որ ազատուած է Պարսիկների բռնութիւններից եւ մտել է միուսաց կառավարութեան հովանաւորութեան ներքոյ, եւ դուք, որ այժմ օծուած էք մեր եկեղեցու եւ ազգի դուին, անհանդիստ ակնկալութեամբ սպասեմք մանաւանդ թէ հաւատամք տեսնեն ձերդ ձեռամբ անսպաշխ թափեալ քաղցրութիւնն տեղւորդ ըստ հոգեւորին եւ ըստ մարմնաւորին, զի վերստին ծաղկեսցի, որքանք հոգեւոր դպրատուն վասն վարդապետաց. պայծառացի հայկական լեզու եւ դպրու-

թիւն ընտ օրինակի՝ վաճառքն Մխիթարեանց, ազաւտեացին անուամբն եւ անկիրթ եկեղեցականք, բազմաքցին զանազան լեզուազէտք Կլիթատիւն մշակը Աստուծոյ, արժանաւորք միայն ընտրեցին ի պաշտօնն օրստուածաբան Կէ Կնարժանք մերժեցին. ի բաց լիցին յաստուածակերտ զահէդ՝ ամենայն՝ անկարգութիւն,՝ տղիտութիւն, անմիաբանութիւն,՝ զայթակղութիւն, հոգի պարսկային եւ այլ ամենայն անվայելչախանք, եւ վասն այսորիկ ի ներքոյ անցին կատարեալ քրքութիւն եկեղեցական հոլուաց, ուսումն իմաստութեանց լեզուաց եւ արուեստից, միաբան Կղարայրատիւթիւն, եւ բարի օրինակ լինութիւն աշխարհականացն(6) :

Լազարեանները իրենց այս հռչակաւոր նամակը գրել էին, ի հարկէ, նկատի առնելով Ս. Էջմիածնում կատարուած զանազան իրադարձութիւնները, նաեւ այն պարագան, որ Հայ հոգեւորականութիւնը ծաղրի առարկայ էր զարձնել օտարներին առաջ՝ լինեն նրանք Լատիններ, Ռուսներ թէ Գերմանացիներ: Այդ իսկ պատճառով, Լազարեանները իրենց վերոյիշեալ նամակում տեղեկացնում էին Կարբեցուն, որ, «ցաւօք սրտի մերում տեսաք եւ ընթերցաք զնոր պատմութիւն մի զազգէս Հայոց, զոր Գերմանացի ոմն Ժանօթ մեզ Շուպերտ անուն նստեալ ի Բեդերբուրգ դատատու եւ կարգաւոր դպրոցի իւրեանց, գերմանացի լեզուաւ տպագրեալ է անդ իբր չորս ամիս յառաջ եւ տարածեալ յամենայն աշխարհ: Երանի թէ զիտէիք դուք զայդ լեզու, առաքէի եւ ընթեռնուիք զգիրսն զայն. ոչ կարէիք չարտասուել եւ առ ամօթոյ կորանալ. բարի ինչ ոչ խօսի վասն հոգեւորականացդ. Աթոռն Էջմիածնի, ասէ, թէպէտ գլուխ է աղլին Հայոց՝ բայց չունի եւ ոչ հասարակ դպրատուն մի վասն իւրոցն. Կթոռայինք ամենայն վարդապետք եւ եպիսկոպոսք տղէտ են, ասէ, ղեկարկանութիւն իսկ ոչ ղիտեն, այլ միայն ուստեն եւ ըմպեն, յայդեղործութիւն պարապին, ոսկի եւ արծաթ հաւաքեն, փառաց եւ պատուոյ զենտ լինին եւ այլն, եւ այլն»(7) :

Լազարեանների ուրաւ, իրենց իսկ վկայութեամբ, տրտմում էր մանաւանդ, երբ օտարները Մխիթարեաններին դործունէութիւնն էին պիտաբանում, իսկ իրենք՝ Լազարեանները, փափաքում էին որ Ս. Էջմիածնում էլ այդպիսի գործունէութիւն ծաւալուի: Եւ խորհուրդ են տալիս Կարբեցուն, որ ներսէս Աշտարակեցուն նշանակի Վրաստանի թեմի առաջնորդ, որպէսզի նրա դործակցութեամբ կարողանայ պայծառացնել Մայր Աթոռ Ս. Էջմիածինը:

Պատմութիւնից յայտնի է որ Կարբեցին չլսեց Լազարեանների իմաստուն խորհուրդը: Խօսք էջր կարող լինել Աշտարակեցուն Վրաստանի թեմի առաջնորդ նշանակելու մասին, իսկ աւելին, յայտնի է նրա անխմատ պայքարը նաեւ Էջմիածնի միաբանութեան դէմ եւ ոմանց արտաքսել տալը վանքից:

Կարբեցին էջր սիրում լսել ուրիշներին: Նրա ղեկավար ուժը անձնական փորձն էր, անփական կամքը: Այդ մասին Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանը գրում է. «Սակայն ինչ էլ գրէին եւ որքան էլ գրէին, Յովհաննէս կաթողիկոսի համար ուրիշ գրութիւն, ուրիշ կարգ ու կանոն եւ ուղղութիւն

(6) Սեդրակեան Արիստակէս Եպիսկոպոս, «Յովհաննէս Եպիսկոպոս Շահաթունեանցի Կենսաւթութիւնը», Պետերբուրգ, 1898, էջ 133-134:

(7) Նոյմը, էջ 135:



անհասկանալի էին միանգամայն, թո՛ղ թէ անիրազորեմի՝ եւ նա անշեղ հետեւելով իր անասմին եւ սովորածին՝ իւր մահից յետոյ թողեց մի միաբանութիւն, որի տիրու հռչակը մինչեւ անգամ բարձրագոյն անբաւականութեան առիթ տուեց(8) :

Որ Կարբեցին ոչ թէ ուսումնասէր չէր, այլ պարզապէս նուիրուած էր իրեն համար առաջնահերթ թուացող խնդիրներէ լուծման եւ չէր սիրում յաւիտեան գործունէութիւնը, ցոյց է տալիս այն փաստը, որ Վարդապետարանի համար ինքը նոր չէնք է կառուցում :

Յովհաննէսը ուսանողներ է ուղարկել Լազարեան ճեմարանում սովորելու, նրանց հետագայում Վարդապետարանում որպէս ուսուցիչ օգտագործելու նպատակով : Երկու հոգու ուղարկել է նկարչութիւն սովորելու Մոսկուայում, անշուշտ ելնելով վանական կարիքները բաւարարելու հեռանկարից : Մի ուսանող ուղարկուած է բժշկութիւն սովորելու՝ միշտ նոյն օգտապաշտ մտքից թելադրուած : Մօտաւորի, օրուան անմիջական կարիքները բաւարարելու, միայն Ս. Էջմիածնի միաբանութեան կարիքները նկատի ունենալու Կարբեցու այս մտայնութիւնը չի սիրուել, որոշ զէպքում էլ չի հասկացուել եւ տեղի է տուել սուր քննադատութեան : Ա. Երիցեանը Կարբեցուն սեւ գոյներով է ներկայանցում իր «Ամենայն Հայոց Հայրապետութիւնը եւ Կովկասի Հայք» գրքում, մինչ Գիւտ ծայրագոյն վարդապետը 1919 թուի «Արարատում հրատարակած իր ուսումնասիրութեան մէջ աւելի անկողմնակալ, ճշմարտացի դատումով փաստում է Կարբեցու ուսումնասէր լինելը : Գիւտ ծայրագոյն վարդապետը իր նիւթերը քաղել է հայրապետական դիւանից, նրանք համեմատել Երիցեանի գրածներին հետ եւ յայտնաբերել մէկից աւելի ներութիւններ ու տարբերութիւններ, որոնք խօսում են ի նպաստ Կարբեցու ուսումնասիրութեան :

Կարբեցու կենսագրութիւնը գրել է նրա մտերիմ դործակից Յովսէփ արքեպիսկոպոս Վեհապետեանը : Աւելորդ չէ այնտեղից մէջբերումներ կատարել Կարբեցու դպրոցական գործունէութեան վերաբերեալ .

«Վերանորոգեց տպարանն անպործ մնացեալ ի բազում ամաց հետէ . երաց դատուել ուսումնարանն վաւն վանական հոգեւորականաց կարգաւորեալ պայն եւրոպացի ձեւ, կարգեաց ի նմին վարժապետ զՄեսրոպն Թադիսդեանց եկեալն ի Հնդկաց այր գիտակ բուն լեզուին Հայոց, Անգղիացւոց եւ այլոց, յետ նորա գործողորն Շաքարլեան՝ եկեալն ի Կարնոյ, վարժապետ անուանի բազմամեայ տաղասութեամբ եւ ապա զԿնի մահուան նորա կարգեաց կառավարիչ աւագ վարժապետ հայկաբանութեան եւ աստուածաբանութեան զաւագ քահանայն Հայոց Վրաստանի դիսանակն Սահառունեանց, որ հմուտ էր րազում լեզուաց եւ երեւելի եղեւ Թարգմանութեամբ պէսպէս շահեկան մատենից եւ շարադրութեամբ դասառական գրեանց յօգուտ ուսումնարանին Էջմիածնի, յորում յաւելաւ թիւ կրտսեր վարժապետաց հայ եւ ռուս լեզուաց : Այս ուսումնարան յընթաց երկուց ամաց այնքան առաջադէմ զարգացաւ, մինչեւ բազումք յաշակերտաց իւրոց աւարտեալ դերբակներէն, զճարտասանութիւն, զհրեշտակարանութիւն եւ զմասունս ինչ աստուածաբանութեան առ ոտս յիշեալ աւագ քահանայի ընտրութեամբ Սիւնհոգոսին կարգեցան դասաստու վերողբեալ առարկայիցն եւ շարադրեցին զլիրս, է որ ար-

(8) Սեդրակեան, հոյմը, էջ 138 :

ձակ, է որ ոտանաւոր արժանաւոր տպագրութեան, եւ թաղում ճոռս եւ քա-  
րոզս եւ գրուածսն(9) :

## Գ Լ ՈՒՒ ԺԳ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆԸ ՆԵՐՍԷՍ Ե ԱՇՏԱՐԱԿԵՑՈՒ ՕՐՈՎ

(1843 - 1857)

1843 թուի Ապրիլի 17ին Ս. Էջմիածնում գումարուած ազգային-եկե-  
ղեցական ժողովը միաձայնութեամբ՝ 26 ձայնով կաթողիկոս է ընտրուած այն  
անձին, որին Հայ ժողովուրդը վաղուց երազում էր կաթողիկոսական դահի  
վրայ տեսնել: Այդ անձը Ներսէս Արքեպիսկոպոս Աշտարակեցին էր, այն ժա-  
մանակուայ Նոր Նախիջեւանի եւ Բեսարաբիայի Թեմի բաղմարդինն առաջ-  
նորդը: Ներսէս Աշտարակեցին 1843 թուին 73 տարեկան էր:

Վարդապետարանում Աշտարակեցու դպրոցական գործունէութիւնը  
կարելի է բաժանել երկու շրջանի.

ա) նախքան կաթողիկոսութիւն.

բ) յետկաթողիկոսութեան շրջան:

Առաջինը ղուգադիպում է Եփրեմի կաթողիկոսութեան՝ ԺԹ Դարի  
սկզբնաւորութեանը, որի մասին արդէն խօսել ենք իր տեղին:

Որպէս Էջմիածնի դարգացած եպիսկոպոս եւ ուսումնասէր մարդ,  
նա իր վարչական եւ հասարակական բաղմարդաղ ժամանակից մի մասը յատ-  
կացրել է ուսուցչութեան: Միշտ մօտիկ ու քաջալերող է եղել դպրոցին ու  
նրան ծառայողներին: Այդ շրջանին նրա դպրոցական գործունէութիւնը շատ  
աւելի եռանդուն եւ արդիւնաւէտ է եղել, քան իր կաթողիկոսութեան միջո-  
ցին: Վերջին շրջանին իրենից սպասուած արդիւնքը չստանալով, շատերը  
սուր կերպով քննադատել են նրա ճանաւումնասիրութիւնը, մեղադրելով  
նրան որ աւելի շատ տնտեսական ձեռնարկութիւնների ետեւից է ընկել, փո-  
խանակ հետեւելու դպրոցական գործունէութեան, ինչպէս որ իրեն պէս զար-  
դացած եւ փորձառու անձնաւորութիւնից սպասելի էր: Դա իր յատուկ ար-  
դարացուցիչ պատճառը ունի: Նա առայժմ Էջմիածնի քարուքանդ դիւղական  
շրջապատը նեղ ու անյարմար էր գտնում Կարբեցու կաթողիկոսութեան հե-  
տեւանքով կամայական եւ ուսումնատեսաց դարձած միաբանութեան շրջա-  
պատում: Յետոյ, Թիֆլիսի իր անունը կրող Ներսիսեան դպրոցը նրա համար  
Էջմիածնի Վարդապետարանի հանգամանք ունէր, մի բան, որը նա ակնյայտ  
կերպով մտցրել էր ձեմարանի ծրագրում: Ուրեմն այնքան էլ սուր կարիք  
չէր զգացում Էջմիածնում էլ նման մի վարդապետարանի բացման: Նա ու-  
ղում էր Էջմիածնում ստեղծել նիւթական ամուր հիմք եւ նրա վրայ կառու-  
ցել նոր վարդապետարանը: Դժբախտութիւն է, որ իր ժամանակուայ միա-  
բանութիւնը երբեք չկարողացաւ հասկանալ ու դիմաւորել իր մեծագործ  
պետի տնտեսական ձեռնարկութեանց բնոյթն ու նպատակը, եւ հնարաւոր

(9) Արարատ, 1919, 1-12, էջ 62-63:

բոլոր միջոցներով արգելակեց դրանց։ Այդ ձեռնարկութիւնները համարեա՛լ բոլորն էլ հազիւ իրենց ձեռնարկողի շափ կեանք ունեցան եւ բարբարոսաբար ոչնչացուեցին։

Աշտարակեցու այս դիրքը, ուրեմն, երբեք չի նշանակում որ նա դէմ էր էջմիածնում վարդապետարան ունենալու մտքին, այլ՝ այն կանխահաս էր նկատում։ Արդէն զոյութիւն ունեցող հաստատութիւնը շարունակեց դուրս գալ, միայն թէ նախկին ձեւով, ինչ որ չէին սպասում իրենից։ Զփոխուեց նաեւ նոր ուսումնական ծրագիրը․ այդ եւս սուր քննադատութեան ենթարկուեց իբր անհամապատասխան նոր պայմաններին, ու մանաւանդ՝ իր անձնական հմայքին։ Արովեան, Թաղիադեան, Ալ․ Երէցեան, Ստ․ Նազարեան ծանր ու դառն խօսքեր ունեն այդ հարցին նուիրուած։ Օրմանեանը գրում է․

«Ներսէսի ձեռնարկներուն եւ արդիւնքներուն կարգին չենք հանդիսարար Մայր Աթոռի մէջ արժանաւոր դպրոցական կամ ուսումնական հաստատութիւն մը հիմնելու ձեռնարկին, եւ ասիկա ոմանց աչքին մի խոշոր պակասութիւն է երեւցած եւ Ս․ էջմիածնի միաբանութեան պատշաճաւոր կրթութիւն տալու անձեռնհասութիւն է նկատուած»(1)։

Աշտարակեցուն այս հարցում մեղադրողը Արիստակէս Եպիսկոպոս Սեդարակեանն է, որը գրում է այդ մասին հետեւեալը․ «Մի խոշոր պակասութիւն, որ երեւում է նորա կաթողիկոսութեան պատմութեան մէջ, այդ Ս․ էջմիածնի միաբանութեան պատշաճաւոր կրթութիւն տալու անձեռնհասութիւնն է․․․»(2)։

Օրմանեան Սրբազան իր «Ազգապատում»ի էջերում, յիշատակելով իսկ Սեդարակեան Եպիսկոպոսի մեղադրանքները Ներսէս Կաթողիկոսի հասցէին, արդարացեալ է նրան, ասելով, թէ Ներսէսը իբր զանցառու կամ իբր անձեռնհաս նկատել մեծ անիրաւութիւն պիտի լինէր նրա յիշատակին։ Հետեւաբար տարբեր պատճառներով է բացատրում Օրմանեանը Ներսէս Կաթողիկոսի վարմունքը։

Օրմանեանի կարծիքով, Ներսէս Աշտարակեցին երկու լաւագոյն տեսութիւններով յետաձգած պիտի լինի էջմիածնի մէջ ուսումնական մեծ հաստատութիւն հիմնելու դադափարը․ «Առաջին տեսութիւնն է թէ այսպիսի հիմնադրութեան մը համար գետին պատրաստուած պէտք է ըլլայ, որպէսզի պտղաբեր դառնայ»(3)։

Էջմիածնում, քննարկուած ժամանակաշրջանում նիւթականը չէր որ արդելում էր այդ, այլ բարոյականը, որովհետեւ Կարբեցուց մնացել էր մի անկարգ միաբանութիւն, եւ հնարաւոր չէր մի բարեկարգ վարժարան հիմնել, տիրող ժխորին մէջ պահանջուած ուղղութեամբ մարդիկ հասցնել․ նոյնիսկ ասում էին որ «վարժարանական շինուած իսկ չկար»(4)։

Օրմանեանի երկրորդ տեսութիւնն այն էր, որ էջմիածնի համար մարդիկ՝ հողեւորականներ հասցնելու նպատակը զանհրաժեշտ չէր որ էջմիածնի պարիսպներուն մէջ գործադրուէր»(5)։ Ներսէս Աշտարակեցին Թիֆ-

(1) Օրմանեան, «Ազգապատում», Հատոր Գ, էջ 3854-3855։

(2) Ա․ Եպս․ Սեդարակեան, յիշուած աշխատութիւն, էջ 153։

(3) «Ազգապատում», Հատոր Գ, էջ 3855։

(4) Նոյն տեղում, էջ 3855։

(5) Նոյն տեղում, էջ 3856։

լիւում հիմնած՝ իր անուան վարժարանի վրայ էր կեդրոնացրել իր մտահոգութիւնը, որտեղ իր օրով կար եւ մի բաժին՝ եկեղեցականներ պատրաստելու համար եւ օգտակարագոյն կերպով ուզած նպատակին ծառայում էր ուժերի եւ միջոցների միացումից: Աշտարակեցին չէր ուզում իր ուժերը բաժանել: Այս բոլորը նկատի առնելով, Օրմանեան Սրբազան եղբայրացնում է. «Ներսէս ամենայն իրաւամբ կրցաւ իջմիածնի մէջ նոր ուսումնական հաստատութիւն մը հիմնելու դադափարը երկրորդական կարգի թողուլ, եւ առայժմ իր ունեցած միջոցներով եւ անձներով միակ հաստատութեան մը վրայ աշխատիլ, ուսկից բոլոր ժողովուրդը եւ բոլոր վիճակներ եւ Մայր Աթոռն ալ հաւասարապէս օգտուին»(6):

Այս բոլորն ասելուց յետոյ, մեր ձեռքի տակ կան փաստեր, որոնք խօսում են հակառակը. այն, որ Աշտարակեցին ղեւեռն Պետերբուրգ գտնւում միջոցին ծրագրեր էր մշակում իր պապազ զործուհէութեան համար: Այդ ծրագրի մէջ էր մտնում ի միջի ալլոց նաեւ Մայր Աթոռը օժտել բարձրագոյն վարժարանով, որի մասին մենք տեղեկանում ենք Եփրեմ Վարդապետ Աթոռնեանի՝ կաթողիկոսական տեղապահ Բարսեղ Արքեպիսկոպոսին ուղղած նամակից. «...Պնդրեալ էր եւս՝ ամենամեծ դումար դրամոց յարքունի դանձուց առ կանգնելոյ յԱթոռը զգերահռչակ սեմինարեայ: Ըստ այսց օրինակաց եւ ի բանից սուրբն յայտնի իսկ է, թէ աշխոյժ ի յոյժ մերում հասագականութեան եւ առաջին փոյթ սորա այս իսկ է լինելոց, զի յուսաւորեսցէ դանազան դիտութեամբը զհոգեւորականութիւնս Աթոռոյդ, ուստի՝ ի կամիլ սորա սկիզբն առնել խորհրդոցն (որպէս իսկ ասէ ինքնին) բազմաց ունի բացասել եւ արձակել եւս՝ մտանել ի կարդ աշխարհ(7):

Ի լուր արդ ծրագրի, խանդավառութիւնը մեծ էր: Ստ. Նազարեանը լրջօրէն մտածում էր գնալ իջմիածին եւ այնտեղ բացուելիք դպրոցում դասեր ստանձնել. «Ներսէսը, ահագին ժողովրդականութիւն վայելող այդ հոգեւորականը, որ այնքան լաւ հասկացել էր իր ազգի կրթական կարիքները, հաւատ էր ներշնչում Նազարեանցին, թէ այժմ կարելի է տեղափոխուել Հայաստան եւ գործել այնտեղ մի այդպիսի կաթողիկոսի հովանաւորութեան տակ: Այդ պատճառով նա առաջարկում էր Ներսէսին բաց անել իջմիածնում մի ճեմարան՝ հոգեւորականների կրթութեան համար»(8):

Առկայ են տուեալներ, որ Ներսէս Աշտարակեցին կաթողիկոսանստուց յետոյ իջմիածնի Վարդապետարանի համար մշակում է կանոնադրութիւն, այն ենթարկում Սինդի քննութեան (1847 Ապրիլի 7ին, 600 աշակերտներ ընդունում. դպրոցի նախագիծ է պատրաստում արքունի ճարտարապետ Փօն Բրաօնմիլէ) ու հաստատման: Ճշգուտ են այդ Վարդապետարանի նըպատակները, ուսման ծրագրերն ու տարրոյթիւնը, կարգապահական հարցերը, նիւթական պայմանները եւ արձանագրում համապատասխան որոշումների յօդուածներում: Յարական կառավարութիւնը յատուկ օրէնսդրութեամբ պահանջում է ապահովել Վարդապետարանի գոյութիւնը եւ գործունէութիւնը, նրա դերագոյն պատասխանատուութիւնը կաթողիկոսի վրայ դնելով(9):

(6) Նոյն տեղում:

(7) Ա. Եսայ. Սեդրակեան, յիշատած աշխատութիւնը, էջ 150:

(8) Լէօ, «Ստեփանոս Նազարեան», Թիֆլիս, 1902, էջ 117-118:

(9) Տե՛ս մամբատաւութիւնները՝ Հ. Պ. Պ. Արիւն, ֆոնդ 57, գործ 9, էջ 128բ-ից:

1844 թուի Մայիսի 11ին ներքին գործերի նախարարին ուղղած գրություն մէջ ներդնելով զանգատուում է, որ էջմիածինը գրամական միջոցներ չունի 1836 թուի կանոնադրութեամբ նախատեսուող թեմական ուսումնականներ կառուցելու եւ պահպանելու համար:

\* \* \*

Ս. էջմիածնի ժառանգաւորաց վարժարանի վերատեսուչն է եղել Միքայէլ Պատկանեանը 1843 թուին, որին եւ Սինոդը յանձնարարում է կազմել նոր կանոնադրութիւն, որովհետեւ 1816 թուին կազմուած կանոնադրութիւնը արդէն իսկ զործածութիւնից դուրս էր եկել: Այս կանոնադրութիւնը Սինոդի կողմից հաստատուելուց յետոյ «Կանոնադրութիւն մասն հոգեւոր դպրոցին էջմիածնի» վերնագրով հրատարակուել է Զմիռնիայի Ազգասէր թերթի 1845 թուի 79րդ համարում: Կանոնադրութիւնը, կամ կարգադրութիւնը բաղկացած է քառասուն հատուածներից, որի առաջին կէտում ասուում է.

«Ընդհանրական նպատակ դպրոցիս է կրթել զբարոյականութիւն մանկանց հոգեւորականաց Հայոց, աւել նոցա միջոցս ստանալոյ զամենահարկաւոր գիտութիւններն Հայոց եւ Ռուսաց լեզուաց, եւ կարեւոր հիմունս ոմանց յազատական արհեստից: Հիմնաւորել ի սիրտս նոցա զճշմարիտս բարեպաշտութիւն եւ պատրաստել ի նոցանէ գլուսաւորեալ եւ զբարեպաշտ անձինս ի ծառայութիւն Տաճարին Աստուծոյ եւ վասն կրթելոյ զկարօտեալս գիտութեանց ի ձեռն նոցա»:

Սակայն, հակառակ պետական օժանդակութեան, հակառակ աւելի լուսաւոր դարի, նպաստաւոր պայմանների եւ քիչ թէ շատ բարձրագոյն դպրագացած ու կարող ուժերի աշխատանքին, Վարդապետանոցը չկարողացաւ բարձրանալ Մովսէս Տաթեւացու կամ Սիմէոն Երեւանցու օրով իր ունեցած փութին ու փայլին: Այսուհանդերձ Ծահաթունեան Եպիսկոպոսի կարճատեւ տեսչութեան ժամանակ (1846 — 1849) Վարդապետարանը զգալի վերելք ապրեց, որից յետոյ սկսեց նորից իր սրտմաշուք ծանր տեղեւոյնը:

Այստեղ դիտել պէտք է տալ, որ Հայկական դպրոցները ուսուցիչներ չգտնելու պակաս ունէին: Այդ էր պատճառը որ դասաւանդութիւնը յատուկ ծրագրով հնարաւոր չէր յառաջ տանել: Տրամադրելի ուսուցիչների գիտելիքները կազմում էին դասաւանդութեան հիմքը: Դասաւանդութեան նիւթերը ճշգրտւում էին համաձայն ուսուցչի պատրաստութեան եւ ըստ կամ մտցւում կամ հանւում առարկաները զբաղելու որ աւանդող չկար: Սուր կարիք կար յատկապէս Ռուսաց լեզուի եւ աշխարհիկ գանազան գիտութիւնների դասատուների: Բնական եւ թուազիտական առարկաները շատ դանդաղ մուտք էին դործում դպրոցներից ներս եւ մնում էին համարեա՝ անուանական, եւ այս՝ միայն եւ միայն ուսուցիչների պակասին պատճառով: Վարդապետարանում յառաջդիմութիւնը բացարձակապէս կապուած էր ուսուցչի անձից ու գիտելիքների պաշարից եւ ընթանում էր ասեմ կայծկլտումներով: Այստեղակեցու օրով Վարդապետարանը չարունակեց զայլել կարեւոր օրերի շաղկապով: Ծահաթունեան Յովհաննէս Եպիսկոպոսի վերատեսչութեան շրջանը նրա բոցավառ ցոլքի ժամանակն էր:

Ծահաթունեանը իր նշանակումը պարտական էր Աշտարակեցու յառաջդիմասէր ջանքերին: Դեռ Մայր Աթոռ չժամանած եւ կաթողիկոսական

օժումը չստացած, Աշտարակեցին իր նոր վերադասից մանրամասն հաշիւ էր պահանջում դպրոցի կեանքի եւ դործունէութեան մասին, անում ցուցած մունքներ: Ուշագրաւ է, որ Հայրապետը խստիւ արգելում էր մարմնական պատիժները եւ ընդհանրապէս Տէր Թոգիկեան մեթոսներէջ լիակատար հրաժարում էր պահանջում: Նա ծանօթ էր իր ժամանակի եւրոպական դպրոցները դրութիւններին եւ փորձում էր մեր պայմաններին պատշաճեցնել դրանք:

«Յաւուր ելանելոյ մերոյ ի Սրբոյ Աթոռոյն ... դրում է Շահաթունա՝ եանին... լուայ եւ թէ ըստ հնոյն գոհակական կառավարութեանց երկարեն եւ այժմ Փալախայ եւ ծեծ փայտի յուսումնարանի սրբոյ էլմիածնի, որոյ լուրն դամենայն Եւրոպայիս ունի հրաւիրել ի ծիծաղ ի վերայ այնպիսի տըգեղ կրթականութեանց յարատեւելոց, նաեւ յայսպիսում խոհեմութեամբ եւ հանճարով առաւելակ ժամանակի, յորում եւ բարբարոսք մոռացեալ դամենայն զբարբարոսական, ջանադիր են ջատագովեալ կառավարութեանց բարեկարգեալ ազգաց: Յաղագս որոյ դրեմ Զերում սրբազնութեան զՓալախայն եւ զվարոցսն դնել ի վարոցսն յուսումնարանի եւ պատուիրել վարժապետաց մէկ հարկանել զմարմին աշակերտաց փայտիւ, այլ զմիտս եւ զկամս նոցա ուսուցմամբ ամօթխածութեամբ եւ երկիրդիւ Աստուծոյ եւ մարդկան գեղեցիկ համեստութեանց եւ ցանկութեանց բարւոյն մարմնոյ իւրեանց եւ հոգւոյ»(10):

Շահաթունեանը վերադասի իր հանգամանքով Աշտարակեցու ուշադրութիւնը հրաւիրում է Մայր Աթոռի գրադարան եւ մատենադարան ունենալու անհրաժեշտութեան վրայ՝ լինի դա ուսումնական կարիքների թէ ընդհանրապէս ամէն կարգի ուսմանց համար, որոնցով պէտք էր զբաղուէր դպրոցից դուրս եկած միաբանութիւնը: Շահաթունեանի առաջարկութիւնը մօտ էր կաթողիկոսի սրտին, ասես ինքը թելադրած լինէր նրան: Ուստի յատուկ կոնդակով հրահանպեց ձեռնարկել անհրաժեշտ աշխատանքին, նախապէս շտառնալով ազահովել կառավարական պաշտօնեաների դործակցութիւնը այդ խնդրում: Շահաթունեան հրամանը կրկին չտուեց: Այդ առիթով նա Հայրապետին գրեց.

«Կոնդակ Վեհափառ Օծութեան Զերոյ ... առ իմ նուստութիւն հանդերձ հայրական զուարթարար օրհնութեամբ պիտիցցիս, զուսուցիչս եւ զուսանողս յուսումնարանի Աթոռոյս, խրախուսեաց ի լաւ անդր յառաջարութիւն քաջաբերական՝ ստացմամբ հարկաւորեալ մատենիցն ի քարեծնունդ վարժապետ Առաքել Արարատեանց ըստ հրամանի օծելովդ մեծի...»(11):

Աշտարակեցին վարդապետարանը ուզում է դարձնել իւրատեսակ գործիչներ պատրաստելու դարձնոց: Նա այնտեղ հաւաքում էր Հայութեան բոլոր շրջաններից ընդունակ աշակերտների եւ նրանց դաստիարակելիս պահանջում էր, որ նրանք երբեք չօտարանան այն միջավայրից, որտեղից եկել էին: Տեղական բնակչութեան վրայ ներգործելու այս ձեւը բնական եւ խիստ արդիւնաւոր է, եւ դա իսկ է վաղ ժամանակներից: Մեսրոպ Մաշտոցն էլ, իր ժամանակին, օգտուել է դրանից: Այդ կապակցութեամբ նա Շահաթունեանին գրում է. «Միրականի իմում օղջունիւ քրիստոնէական յայտնեմ ... Զերեզ մանկանցն մշտահոգ կալ որ իւրեանց չերեզգական հայրենի լեզուն խօսիցին միշտ եւ ունիցին անմոռաց, քանզի երբ ցանկալի եւ ամենեցուն նոր

(10) Ա. Սպ. Սեպրակեան, Գոյնք, էջ 170-171:

(11) Նոյնք, էջ 176:

նոր ուսանելի դասը եւ այլ լեզու, անգլիացիներն լինի զուգահեռն ի մանկութենէ ի մոռացոնս տալն»:

Որ Աշտարակեցիին խնայէս մտահոգուած էր Վարդապետարանի գոյութեամբ եւ զարգացումով, ցոյց է տալիս նրա 1847 թուի Յուլիսի 15ին վերատեսուչ Ծահաթունեանին գրուած մէկ նամակը. «Յուսով եմ, թէ որպէս ձերոյ նորատունկ ծառոց, առաւել քան զնոցա կայցէ ջերմեռանդ աշխատութիւն ձեր վասն աշակերտաց ուսումնարանի կամ անարժան սեմինարիի էջմիածնի, որ ոչ ըստ նորայն մեծ վայելչութեանց, այլ զի Արարիչն յոչնչէ էացոյց զամենայն արարածս, նոյն է նա, որ զօրէ եւ զանարժան ուսումնարանն իւրում իջման սուրբ տեղւոյն ամբառնալ ի գերագոյն արժանաւորութիւն ըստ վայելչութեանց իւրումն սուրբ անուան, առ որ խնդրեմ աւանդան իւրոց անհաշիւ մանկահասակացն ի նոցունց ոչ խնայել զհարկաւորսն վասն վարուց, համեստութեանց, ջանից եւ աշխատութեանց յազազ արժանաւորելոյ զանձինս իւրեանց իմաստութեանց Աստուածայնոց եւ զարգարել զքնաւորութիւն իւրեանց եւ զարժանաւորութիւն անգամոց որդիութեանց շնորհօք Աստուծոյ արարչի իւրեանց»<sup>(12)</sup>:

Երեւանի Մատենադարանի արխիւային բաժնում պահպանուել են Աշտարակեցու եւ Ծահաթունեանի միջեւ փոխանակուած գրութիւնները, որոնք շօշափում են այսպիսի դպրոցական հարցեր. գրանց կարելի է հանդիպել նաեւ նոյն Մատենադարանի Երէցեանի Փոնդում (Տէ'ս թղթապանակ 152, վաւերադիր 129, 132ա եւ բ եւ այլն): Պահպանուել է Ծահաթունեանի պատասխանը ի մասին չերժէզախօս երեխաների.

«Վասն պատուիրոնաց եւ խրատուց եղելոցն յերկրորդ եւ յերրորդ կոնդակսն անդ յաղաքս պահպանութեան եւ խնամատարութեան աշակերտելոցն յուսումնարանի Աթոռոյս եւ չերժէզ երեխայոցն եւ նոցին երկուց ընկերաց՝ ճշմարտութեամբ ասեմ, Վեհափառ Տէր, համբուրելի են եւ իմում հոգւոյ, որքան կարելին է, ոչ խնայեցից երբեք զյորդորանս եւ զխրատս որպէս վասն ուսմանց նոցին եւ հետեւանաց այնր, նոյնպէս եւ վասն բարի վարուց արժանաւոր մարդկութեանն, այլ որ ինչ վերաբերին առ անձնական պահպանութիւն նոցա ի հասակի, ես իմում եւ եթ մասինն կարողացայց լինել պատասխանատու որպէս առաջի Աստուծոյ, այնպէս եւ Վեհափառութեան Զեքում»<sup>(13)</sup>:

Հակառակ այն բանին, որ Ծահաթունեանը խղճածիտ եւ կարող ուսուցիչ եւ ղեկավար էր, դարձեալ Աշտարակեցիին չէր բաւարարուած նրա տարած աշխատանքով եւ կաթողիկոսը Մայր Աթոռի Վարդապետարանում կատարուած աշխատանքներից եւ նրանց տուած արդիւնքից մնում էր դժգոհ: Նա ցանկանում էր, որ Վարդապետարանը լինէր բոլորից բարձր, բոլորին առաջնորդ եւ օրինակ: Նա յորդորում էր սրբազան վերատեսչին չբաւարարուել ձեռք բերածով եւ ձգտել միշտ լաւին.

«Քանզի ցանկալի է ինձ, զի ըստ ամենայն մասանց համարեցիք դուք զանձն ձեր լինել պարտաւոր առ պատասխանատուութիւն ըստ ամենայն մա-

(12) Նոյնը, էջ 181:

(13) Նոյնը, էջ 181-182:

սանց որպէս վերատեսուչ այժմեան վերջոտնեալ վարժարանի էջմիածնի անուանեցելոյ սերմնարան առանց իրիջ սերմանց եւ սերմնացանից»(14) :

Իր նոյն կոնդակում Աշտարակեցին դժգոհում է, որ էջմիածնից եկողները յայտնում են՝ թէ էջմիածնի դպրոցում շարունակում է աշակերտներին ծնծելու եւ զանազան մարմնական պատիժներ տալու սովորութիւնը : Նա խիստ կերպով կոչ է անում վերատեսչին լսել եւ գործադրել իր հմբ. 335 կոնդակը(15) :

Շահաթունեանը կարողանում է հաստատել որ ստացուած տեղեկութիւնները չեն համապատասխանում իրականութեանը, եւ թէ ուսումնարանում ամէն ինչ ընթանում է համաձայն հայրապետական ցուցմունքներին : Աշտարակեցին համոզուած է այդ բանում, յայտնում իր գոհունակութիւնը եւ նորանոր խրատ-ցուցմունքներ է տալիս ուսումնարանի ղեկավարման մասին :

Աշտարակեցին եւ Յովհաննէս Շահաթունեան Եպիսկոպոսը ամէն ջանք թափում էին, որպէսզի կարողանային էջմիածնի դպրոցը հասցնել իր ցանկալի բարձրութեան : Այդ որոշ չափով յաջողում է նրանց : Դպրոցի սաները ուսումը աւարտելուց յետոյ դառնալով կուսակրօն կամ ամուսնացեալ քահանայ, վերադառնում էին իրենց ժողովրդին եւ Հայութիւնից կը տրուած, Հայ լեզուն իսկ մոռացած իրենց ցեղակիցներին շրջանում բորբոքում էին սէր դէպի հայրենի լեզուն, հայրենիքը եւ այդ կերպով թուր կաղմում ձուլման դէմ :

Դատարակչութեան մէջ Աշտարակեցին չէտը դնում էր հայրենասիրութեան վրայ : Ամէն ինչ պէտք էր ծառայէր ազգապահպանման հարցին, իբրեւ զտարիւն Հայ ապրելու եւ դործելու : Նա պատուիրում էր «որքան կարելի լինիք խօսել նոցա վասն աստուածապաշտութեանց, վասն աստուածասիրութեանց, վասն մարգասիրութեանց, վասն ազգասիրութեանց, վասն եղբայրսիրութեանց, վասն հարազատութեանց, վասն արդարութեանց եւ վասն կալոյ ի ներքոյ ահի եւ երկկողի Աստուծոյ եւ ունելոյ զսէր ամենաբաւրեպաշտ առ եկեղեցի եւ առ ամենայն ազգն Հայոց»(16) :

Շահաթունեանի մահուանից յետոյ (1849) Վարդապետարանը շատ բան կորցնում է նրա օրով ձեռք բերուածից : Ինչպէս ասացինք, Աշտարակեցին այնքան էլ կարենոր չէր նկատում էջմիածնի Վարդապետարանի գոյութիւնը, միշտ իր ուզածը Թիֆլիսի Ներսիսեան դպրոցից սպասելով . դրա համար էլ այս անկումից այնքան էլ չմտահոգուեց : Կցկուտը տեղեկութիւններ կան այն մասին, որ Վարդապետարանը քարշ էր դալիս մինչեւ Աշտարակեցու վախճանուելը : Այսպէս՝ 1856 թուին ասում է, թէ այնպեղ սովորում էին 32 աշակերտ : Գիւտ Եպիսկոպոս Տէր Ղադարեանի Մատենադարանում պահուած արխիւում այդ մասին որոշ տուեալներ կան(17) :

Շահաթունեան Յովհաննէս Եպիսկոպոսից յետոյ էջմիածնի ժառանգաւորաց ուսումնարանի վերատեսուչ է նշանակուած բժիշկ Վասակեանը . 1843ին հրատարակուած Ս. էջմիածնի դպրոցի կանոնադրութիւնը

(14) Նոյնը, էջ 182 :

(15) Մատենադարան, Երեցեանի արխիւ, քաթ. 152, վաւ. 129 :

(16) Մատենադարան, Երեցեանի արխիւ, քաթ. 152, վաւ. 2 :

(17) Մատենադարան, արխիւ Գիւտ Տէր Ղազարեանի, քաթ. 3, վաւ. 18, 1856 :



Ներսէս Ե Կաթողիկոսը անբաւարար է գտնում եւ Վասակեանին յանձնարարում է մշակելու նոր կանոնադրութիւն: Սակայն այդ նոր կանոնադրութիւնը որը կազմուած է Վասակեանի կողմից, Աշտարակեցու ձեռքով կատարուած ուղղումներէից յետոյ, գործադրութեան չի դրուած<sup>(18)</sup>:

Ինչպէս միշտ, յիշատակուած ժամանակաշրջանում եւս ժառանգաւորաց ուսումնարանը պահուած էր. էջմիածնի միջոցներով եւ դպրոցը միշտ գտնուել եւ գտնուած էր կաթողիկոսի անմիջական տնօրինութեան եւ ընդհանուր հսկողութեան ներքոյ:

1830 — 1850ական թուականներին Ս. էջմիածնի Վարդապետարանի նշանաւոր ուսուցիչներից են հանդիսացել Մայր Աթոռի միաբաններից՝

1. Մակար Արեղայ, հետագայում Ամենայն Հայոց Կաթողիկոս Մակար Ա (1885 — 1891), որը դասաւանդել է հայերէն քերականութիւն, ճարտասանութիւն եւ Հայ ժողովրդի պատմութիւն:

2. Եղիազար Արեղայ՝ յարմարագրութիւն եւ երաժշտութիւն:

3. Ստեփանոս Եպիսկոպոս:

4. Երեմիա Վարդապետ:

5. Կարապետ Վարդապետ Շահնազարեան, որն աւարտել է Մոսկուայի Լազարեան ծննդարանը եւ համբաւաւոր է իր հրատարակութիւններով:

6. Մկրտիչ Վարդապետ:

7. Եսայի Վարդապետ:

Աշտարակեաններից Յովհաննէս Սիմոնեանցը դասաւանդել է ռուսերէն քերականութիւն, չափաբանութիւն, այսինքն՝ թուադիտական առարկանէր եւ ռուսերէն յարմարագրութիւն, ինչպէս նաեւ Լազարեանը: Կայսերական համալսարանն աւարտած առաջին կարգի բժիշկ Կ. Վասակեանը (որը եւ դպրոցի բժիշկն է եղել եւ վերատեսուչը, ինչպէս նաեւ ուսուցիչը), Միքայէլ Պատկանեանը, Մոսկուայի համալսարանն աւարտած Հ. Արղանեանը եւ այլք:

Որ իրօք Ներսէս Ե Աշտարակեցու հայրապետութեան տարիներին Ս. էջմիածնի ժառանգաւորաց վարժարանը անցել է վերելում յիշատակուած դասաւանդութիւնները՝ մենք ունենք մի արժանահաւատ աղբիւր, նոյն շրջանի ուսանող, հետագայում իր վարչական-գրական գործունէութեամբ փայլուն՝ Մկարոպ Արքեպիսկոպոս Սմբատեանը.

«Ծնեալ լինելով ի 10 Մարտի 1833 ամի ... ի 25 Մարտի 1847 ամի մտեալ եմ հրամանաւ Տ. Ներսէս Ե Կաթողիկոսի ի ժառանգաւորաց ուսումնարան Սրբոյ էջմիածնի յուսումն դիտութեանց, ուր զամս 6 ուսանելով ի ժամանակին զաւանդեալ առարկայս՝ այն է ի 1847 ամէ ց 1851 ամն, աւարտեցի զքերականութիւն եւ զճարտասանութիւն եւ զլրօնադիտութիւն եւ ըզպատմութիւն, եւ զեկեղեցական երգեցողութիւն (Շարական) եւ զարարողութիւն (Մայրոց, ժամագիրք եւ այլն) եւս եւ զընթերցանութիւն եւ զքերականութիւն Ռուսաց»<sup>(19)</sup>:

ՎԱՆԱՆ ԵՊՍ. ՏԷՐԵԱՆ

(Շար. 7)

(18) Մատնադարան, Կաթողիկոսական դիւան, ԲՊԲ՝ 180, վաւ. 420;

(19) Լ. Պ. Պ. Արթուր, փ. 57, գործ 439, էջ 7բ:

## ԷՋԵՐ ՎԱՅ ՄՇԱԿՈՑԹԻ ԵՒ ԱՐՈՒԵՍՏԻ

### Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ի Ի Ն Ի Ց

#### Դ

#### ՏԱՂԱՆԴԱՒՈՐ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ-ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՏՐԴԱՏ

10րդ Դարի երկրորդ կեսին հայկական ճարտարապետութիւնը զար-  
դանում է Եփրակում, բայց առանձնապէս նշանակալից նուաճումներ է անում  
Բագրատունեաց մայրաքաղաք՝ Անիում, որ իր ժամանակին, որպէս ճարտա-  
րապետական արուեստի մի հոյակապ թանգարան, մեծ հռչակ է վայելում:

Անիի ճարտարապետական դանձարանի գեղեցկութիւններից մեզ խոր  
հիացմունք են պատճառում Առաքելոց, Փրկիչ և Հովուի եկեղեցիները, Մայր  
Տաճարը, Գապիշէն տաճարը եւ արքայական բազմաթիւ պալատը՝ իր գե-  
ղեցիկ շէնքերով:

ճարտարապետական սջանշիւի կոթողներ են նաեւ Ախուրեան գետի  
հոյակապ կամուրջը, բազմաթիւ իջևանները (քարանոսառանքը) եւ ջրմու-  
ղը (խողովակ), որի նմանը չենք տեսնում միջնադարեան Հայաստանի միւս  
քաղաքներում:

Անիի եւ Եփրակի ճարտարապետական մի շարք յուշարձանների կա-  
ռուցման համար պարտական ենք մի մեծատաղանդ արուեստագէտի: Դա ան-  
շուղական ճարտարապետ—քանդակագործ Տրդատն է:

Նա մէկն է այն նշանաւոր արուեստագէտներից, որ իր ամբողջ  
կեանքը նուիրել է հայկական ճարտարապետական մշակոյթի զարգացմանը  
եւ իր գեղարուեստական դորժունէութեան շրջանում կերտել այնպիսի հոյա-  
կապ յուշարձաններ, որոնք վիպյում են ճարտարապետական արուեստի գծով  
նրա կատարած նուաճումների եւ վարպետութեան մասին:

Վաստակաւոր արուեստագէտի մասին մատենագրական աղբիւրնե-  
րում եւ վիմական արձանագրութիւններում կենսագրական տեղեկութիւնները  
շատ քիչ են: Նրա մասին յիշատակում է պատմիչ Ստեփանոս Տարօնցի Ա-  
սողիկը, որին երեւում է, որ նա ապրել եւ ստեղծագործել է 10րդ Դարի  
երկրորդ կիսում եւ 11րդ Դարի սկիզբը: Դա այն պատմաշրջանն է, երբ Բագ-  
րատունեաց մայրաքաղաք Անիում, Հայ ճարտարապետութիւնը, շնոր-  
հիւ տիրող բարենպաստ պայմանների, նշանակալից նուաճումներ է ա-  
նում եւ ապրում իր զարգացման փայլուն շրջանը: Կառուցւում են բազմա-  
թիւ եկեղեցիներ ու վանքեր, պալատներ, թատրոն, իշխանական տներ, պա-  
րիսպներ, կամուրջներ, բոլորն էլ հայկական ճարտարապետութեան ոճով:

Այդ պատմաշրջանում մեծատաղանդ Տրդատը նշանակւում է Բագ-  
րատունիների պալատական ճարտարապետը եւ իր ինքնուրոյն հոյակերտ ըս-  
տեղծագործութիւններով հանդիսանում է ժամանակաշրջանի ճարտարապե-  
տական մշակոյթի լուսագոյն, առաջնակարգ արտայայտիչը եւ բարձր պա-  
հում Անիի ճարտարապետական արուեստի հմայքը:

Ընդգծենք եւ այն, որ նրա կերտած Հոյակապ յուշարձանները, իրենց բարձր արուեստով ու ոճով եւ ինքնատիպ կառուցութեամբով ճարտարապետական մշակութի թանկագին կոթողներ են, որոնք արժանացել են թէ՛ Հայ եւ թէ՛ օտար արուեստագէտների բարձր գնահատութեանը:

### ԱՍԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Արգիմայի Տաճարը: Բազմափաստակ արուեստագէտ Տրդատի ճարտարապետական առաջին յուշարձանը Արգինայի Տաճարն է, որ կառուցել է 987 թուականին, Ոսչատուր կաթողիկոսի (972 — 991) օրով:

Յուշարձանի գեղարուեստական արժէքը Վ. Յարութիւնեանը գնահատել է այսպէս. «...Ոչ մեծ չափերի եկեղեցական այդ շէնքում Տրդատը փորձել է վերարտադրել գեռեւն նախաւարարական շրջանում մշակուած եկեղեցական շէնքերի տիպերից մէկը՝ «գմբէթաւոր սրահը», որի լաւագոյն օրինակները Ղրդ Դարի Պաղնիկի եւ Արուսի տաճարներն էին ... Արգինայի Տաճարում, յատկապէս նրա ներքին տարածութիւնը կազմակերպելիս, Տրդատը ցուցաբերել է ստեղծագործական ինքնուրոյնութիւն, մօտիւններ մտցնելով, որոնք նրա հետագայ աշխատանքներում աւելի կատարելագործուելով, դարձրանք ինքնուրոյն զանաւորումներ: Մենք նկատի ունենք գմբէթակիր որմնամոյթների ուղղաձիգ մասնատումը սինափնջերով, ինչպէս եւ երկկենտրոն կամարների կիրառումը, որոնց շնորհիւ եկեղեցու ներքին տարածութիւնը դարձել է աւելի սլացիկ»:

Այնուհետեւ ճարտարապետին տեսնում ենք Անիում, ուր նա կառուցում է նոր կոթողներ:

Աճիկ Մայր Տաճարը: 10րդ Դարի վերջի Անիի ճարտարապետական գանձարանի ամենանշանաւոր եւ բարձրարուեստ ստեղծագործութիւնների մէջ Հրաքմունք է պատճառում մի թանկագին կոթող: Դա հուշակաւոր ճարտարապետ Տրդատի կերտած Անիի Մայր Տաճարն է, որի ճարտարապետական գեղեցկութիւնը շատ բարձր են գնահատել անուանի ճարտարապետ Թորոս Թորամանեանը, դիտնական քանասէր Նիկողայոս Մառը, Հ. Ստերչիկովիին եւ այլ արուեստագէտներ:

Տաճարի կառուցման հետքերի պատմութիւնը ճարտարապետ Վ. Յարութիւնեանն արձանագրել է այսպիսի ուշագրաւ տողերով. «Արգինայի Տաճարի կառուցումն աւարտելուց յետոյ, Սմբատ Բ թագաւորի (977 — 989) պատուէրով Տրդատն ստանձնում է Բաղրատունեաց ժայրաքաղաքի զլիսաւոր Ս. Աստուածածին եկեղեցու կառուցումը: Դեռ եւս նոր էր հիմնադրուել Մայր Տաճարը, երբ որոշ ժամանակ անց՝ 989 թուի ձմարնը, վախճանուած է պատուիրատուն, որի պատճառով էլ շինարարութիւնն ընդհատուած է, իսկ ինքը Տրդատը մի առժամանակ հեռանում է Հայաստանից եւ ապրում Պոլսում: Տարիներ անց, Կոստանդնուպոլսից վերադառնալով, նա Սիւնեաց Վասակ թագաւորի դուստր եւ Գագիկ Ա թագաւորի կին Կատրանիցէ (Կաղամիտէ) թագուհու պատուէրով վերսկսում է Անիի Մայր Տաճարի ընդհատուած շինարարութիւնն ու այն աւարտում 1001 թուականին ... Թէեւ Անիի Մայր Տաճարը հարազատօրէն վերարտադրում է դեռ եւս Ղրդ Դարում մշակուած «գմբէթաւոր քաղիւիկա» կոչուող եկեղեցու տիպը, (որի նախաւարարական շրջանի լաւագոյն օրինակները էլմիածնի, Գայիանէ,

Մրէնի, Օձունի ու Բագաւանի տաճարներն են), սակայն նրան յատուկ են ճարտարապետական որոշակի նոր յատկանիշները ... Որքան էլ ուշադրութիւն Մայր Եկեղեցու արտաքին ճարտարապետութիւնը, աշխուժեցանքի Տրդատի նոր խօսքը ամբողջ ձայնով հնչել է նրա ներքին ճարտարապետութեան մէջ։

Կանգ առնենք նաեւ ճարտարապետ Ս. Մնացականեանի ստորագրած Հետեւեալ սեղմ տողերի վրայ. « . . . Եւ երբ 961 թուականին Բագրատունեաց մայրաքաղաքը փոխադրուեց Անի, նրանից ոչ հեռու գտնուող Արգինա աւանում Տրդատն էր, որ կառուցեց կաթողիկոսական պալատը եւ նրան կից եկեղեցին։ 989 թուին Սմբատ արքայի յանձնարարութեամբ Տրդատը ձեռնարկեց Անիի Մայր Տաճարի շինարարութեանը՝ հայկական ճարտարապետութեան ամենանշանաւոր կառուցումներից մէկին առհասարակ»։

Աճիի Ս. Գրիգոր (Գագիկաշէն) Տաճարը։ Անիի ճարտարապետական այս նշանաւոր յուշարձանի կառուցման համար պարտական ենք Տրդատ ճարտարապետին, որ պատրաստել է Գագիկ Ա Բագրատունի թագաւորի պատուէրով։ Մատենագրական աղբիւրների համաձայն թէեւ արքան անուանի արուեստագէտին պատուիրում է տաճարը կերտել Զուարթնոցատիւ, Ղրղ Դարի Հռչակաւոր Զուարթնոց Տաճարի յատկապէս օրինակով, բայց եւ ո՛չ միայն նոյնութեամբ չի ընդօրինակում, այլեւ կառուցում է ժամանակի ոգու եւ ոճի համաձայն, հանդէս է բերում նոր մօտեցում եւ «եկեղեցական կոթողին վայել յատկանիշներ»։

Վաստակաւոր ճարտարապետ Տրդատի ստեղծագործական այս կոթողներն իրենց բարձր արուեստի խորութեամբ եւ բանաստեղծական գեղեցկութեամբ՝ ճարտարապետական դոհարներ են եւ Հայ մշակոյթի պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ են դրաւում։ Այդ յուշարձաններում նա ձգտել է ո՛չ միայն առաւել ցայտունութեամբ պատկերել հայկական ոճը, այլեւ կերտել բարձրարուեստ կոթողներ, միաժամանակ հիմք է դրել ճարտարապետական մի նոր, ինքնուրոյն ոճի եւ հասել է բացառիկ արդիւնքների։

Կ. Պալսի Այա-Սոփիա Տաճարի գմբէթի վերականգնումը։ Տաղանդաւոր Տրդատ ճարտարապետի ստեղծագործութեան պատմութեան էջերը չեն սահմանափակւում ընդգծուած յուշարձաններով։ Պատմագիր Ստեփանոս Տարօնեցի Ասողիկը նրան է վերագրում մի բացառիկ կոթողի վերակառուցումը։ Դա Կ. Պալսի աշխարհահռչակ Այա-Սոփիա Տաճարի երկրաշարժից աւերուած գմբէթի վերականգնումն է, որը Յոյն ճարտարապետներն երկար տարիներ չէին կարողացել վերաշինել։ Բիւզանդական կայսեր յանձնարարութեամբ արուեստագէտ Տրդատը չորս տարուայ ընթացքում նորոգում է գմբէթը, որ վարպետ ճարտարապետների վկայութեամբ՝ աւելի հոյակապ է։ Արդարեւ, այդ կոթողի կառուցումից մօտ հազար երկար տարիներ են անցել, բայց գմբէթը մինչեւ օրս էլ կանգուն է. մի երեւոյթ, որը վաստակաւոր ճարտարապետի կառուցողական արուեստի պատմութեան մէջ նշանակալից տեղ է դրաւում եւ նրան պատիւ բերում։

Բարձրավաստակ ճարտարապետի ստեղծագործական արուեստի հիմնական էջերը պատկերելիս, արձանագրենք հայկական ճարտարապետութեան պատմութեան մէջ տիրող այն ենթադրութեան մասին, որ նա իր ջերմ մասնակցութիւնը բերել է նաեւ Մարմաշէնի, Հաղարտի ճարտարապետական գեղեցկութիւնների կառուցմանը։ Անիում նա մեծ ջանքեր է գործադրում նաեւ աշխարհիկ շինութիւնների պատրաստութեան համար։ Դա այն ժամա-

նակաշըջանն է, երբ Անիում շինարարական աշխատանքներն առանձին փայլ են ստանում: Տրդատը, որպէս Բագրատունեաց արքունի ճարտարապետ, նշանակում է ընդհանուր ղեկավար:

Անիում կառուցուած մի շարք յուշարձաններ վկայում են ո՛չ միայն մեծատաղանդ Տրդատի ճարտարապետական փայլուն վաստակի, այլեւ արուեստի սիրով համակուած նրա ստեղծագործական խոր ապրումների, գիտական լուրջ եւ քաղաքականի պատրաստութեան, համբերատար, բեղմնաւոր եւ հետեւողական գործունէութեան մասին:

Տրդատի ճարտարապետական արուեստին պատիւ են բերում նաեւ Շիրակում կառուցած քաղմաթիւ եկեղեցիներն ու հասարակական մի շարք շէնքերը:

Որպէս Բանդակագործ: Ճարտարապետ Տրդատն իր դարաշրջանում փայլել ու հռչակուել է նաեւ որպէս տաղանդաւոր արձանագործ: Այդ մասին է վկայում Ս. Գրիգոր (Գազկաշէն) եկեղեցու պեղումների ժամանակ դտնուած Գագիկ Բագրատունի արքայի քարակերտ հոյակապ արձանը՝ տաճարի մօզէլը ձեռքին: Այդ եկեղեցիկ քանդակը, որ համարւում է միջնադարեան Հայաստանի քանդակագործական արուեստի քաջառիկ եւ թանկագին մնացորդներից մէկը, մի շարք ճարտարապետների վկայութեամբ՝ ճարտարապետ Տրդատի քանդակած յուշարձանն է:

Տաղանդաւոր գիտնական Մառն արձանի պատկերը դժել է այսպէս. «Արձանն եղել է ներկուած, հագուստը եւ երեսը կարմիր, մօրուքը եւ քեզերը՝ սեւ, չալման՝ սպիտակ եւ թեւքերի եղբերը՝ սպիտակ: Գլխի չալման՝ ըստ երեւոյթին, պէտք է դիտել որպէս այն թազը, որով պսակում էին արաբական խալիֆաները Բագրատունեաց թագաւորներին»:

Ճարտարապետ Տրդատի քանդակագործական արուեստում ուշադրաւ նուաճումներ են նաեւ Հաղթատի ապարանքի վրայ կերտած Սմբատ եւ Գուրգէն թագաւորների պատկերաքանդակները:

Թէ ինչպէ՛ս եւ ի՞նչ պայմաններում է ստեղծագործել հայկական միջնադարի այս տաղանդաւոր ճարտարապետը, չկան փաստական տուեալներ, բայց այն կոթողները, որոնք նա աւանդ է թողել, յիշում են որ նա մէկն է այն առաջնակարգ եւ քաջառիկ Հայ ճարտարապետներից, որ մանրակրկիտ ուսումնասիրելով հայկական ճարտարապետութեան բնոյթը եւ խորանալով նրա էութեան մէջ, գիտական հիմունքներով, քաղմաղան ձեւերով եւ ուրոյն ոճով պահպանել է Հայ ճարտարապետութեան էական առանձնապատկութիւնները, որոնց վրայ է կառուցել իր ստեղծագործութիւնները, գործնականօրէն լուծելով ազգային ձեւաւորման խնդիրները:

Նրա ճարտարապետական արուեստի կոթողների բնորոշ յատկանիշները հանդիսանում են պարզութիւնն ու բանաստեղծական պատկերաւորութիւնը, ոճի կատարելութիւնն ու խորութիւնը եւ ձեւերի նրբերանգաւորումը:

Թերեւս այդ էական երեւոյթներով պիտի բացատրել, որ վաստակաւոր ճարտարապետի կերտած կոթողները ճարտարապետական մշակոյթի թանկագին յուշարձաններ են եւ արուեստագէտներին գեղարուեստական բարձրագոյն հաճոյք են պատճառում:

Եզրափակում: Գեղարուեստական բարձր արժանիքներով օժտուած վաստակաւոր արուեստագէտ Տրդատն իր դարաշրջանում փայլել է որպէս առաջնակարգ ճարտարապետ: Նա կատարելապէս տիրապետելով ճարտարա-

պետական մշակոյթին՝ Հայ ժողովրդին աւանդ է թողել արուեստի սքանչելի կոթողներ, որոնք հայկական ճարտարապետական զարդն են ու պարծանքը, որոնց մէջ գեղարուեստական արտացոլումն են դտել. Հայ ճարտարապետական մշակոյթի գեղեցկութիւններն ու նրբութիւնները ։

Նրա՝ Անիում եւ Շիրակում կառուցած ճարտարապետական կոթողներն իրենց լուսկեամբ վկայում են որ նա, որպէս մեծատաղանդ ճարտարապետ, իր ամբողջ էութեամբ, իր գեղարուեստական հայեացքներով ու սկզբունքներով եւ բազմաբովանդակ գործունէութեամբ լաւագոյն պատուանդանի վրայ է դրել իր պատմաշրջանի հայկական ճարտարապետութիւնը ։ Իր վեհ վաստակով նա անդհանհատելի ծառայութիւն է մատուցել Հայ ճարտարապետական մշակոյթին. նա ո՛չ միայն նպաստել է այդ արուեստի զարգացմանը, այլ գծել է նրա հետագայ յառաջդիմութեան լուսաւոր ուղին ։ Այդ վսեմ եւ անմոռանալի աշխատանքն արժանի է ամենաշերմ գնահատութեան ։

## Ե

### ՄԵԾԱՏԱՂԱՆԻ ՀԱՐՏԱՐԱՊԵՏ-ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ ՄԱՆՈՒԵԼ

10րդ Դարի առաջին կէսի հայկական ճարտարապետութեան պատմութեան մէջ առանձնայատուկ եւ պատուաւոր տեղ է զբաւում մի այլ անուանի արուեստագէտ ։ Դա Վասպուրականի Արծրունեաց Թաղաւորական տան գլխաւոր ճարտարապետ-քանդակագործ Մանուէլն է, որ խորապէս ուսումնասիրելով հայկական ճարտարապետութեան առանձնայատուկութիւնները, ո՛չ միայն մշակել է իր ինքնուրոյն ոճը, այլեւ հիմնուելով նախորդ զարբերում ձեռք բերուած գեղարուեստական նուաճումների վրայ, Հայ ճարտարապետական մշակոյթը բարձրացրել է զարգացման նոր աստիճանի ։ Աւելին ։ Նա մէկն է այն առաջնակարգ Հայ ճարտարապետներից, որը կարողացել է յաջողութեամբ լուծել հայկական ճարտարապետական ստեղծագործութեան ազգային ոճի հարցը, նշել է նրա զարգացման ուղին եւ կերտել է բարձրարուեստ եւ մեծարժէք յուշարձաններ ։

Թէ արուեստի ո՞ր դպրոցում եւ ինչպիսի՞ պայմաններում ձեւակերպուել է նրա գեղարուեստական կերպարը որպէս ճարտարապետ-քանդակագործ, քանի որ եւ ընդգրկել նրա ճարտարապետական գործունէութիւնը, դժբախտաբար չկան փաստական ստույգ տեղեկութիւններ ։ Գիտենք միայն այն, որ նա ապրել եւ ստեղծագործել է 10րդ Դարի առաջին կիսում ։ Դա այն ժամանակաշրջանն է, երբ տնեսական կեանքի զարգացումը նշանակալից դեր է կատարում Վասպուրականում ծաւալուող շինարարական մեծ աշխատանքների վրայ ։

Պալատական պատմիչ Թովմա Արծրունու վկայութեամբ Վասպուրականի իմաստուն, խոհուն եւ շինարար Գաղիկ Արծրունի Թաղաւորը (908-931) օժտուած լինելով բարեզարդութեան բացառիկ ձիրքով, Վան եւ Ոստան քաղաքներում մեծ շինարարական գործունէութիւն է ծաւալում ։ Այդ պատմաշրջանում մեծատաղանդ ճարտարապետ Մանուէլը, Գաղիկ արքայի հրամանով Վասպուրականում, յատկապէս Աղթամար կղզում, կառուցում է ճարտարապետական սքանչելի կոթողներ՝ Աղթամարի Ս. Խաչ վանքը, նաւահանգիստը, ինչպէս նաեւ արքայական պալատներ, եկեղեցիներ, որոնք

իրենց պարզ բայց գեղարուեստական կատարեալ ձեւերով ճարտարապետական արուեստի տարբեր գեղեցկութիւններ են եւ խօսում են ամէն մի արուեստասէրի սրտի եւ հոգու հետ :

Աղթամար կղզին գտնուում է Վանայ լճի հարաւային մասում՝ Ա Դարում (Մ. թ. ա.) պատկանում էր Ուրարական ծագում ունեցող Ռչտունեայ նախարարական տոհմին : Հետագայում, Վասպուրականի թագաւոր Գագիկ Արծրունին, բարձր գնահատելով կղզու անմատչելի դիրքը, նոր կառուցումներով ծաղկեցնում է Աղթամարը. կղզին ո՛չ միայն աւելի է լայնացրւում, այլ եւ չընթացատու հսկայական ամրարտակով (թումբ, պատնէշ), ապա պարիսպով :

Աղթամարի շինարարական այդ աշխատանքները գեկավարում է ճարտարապետ Մանուէլը : Պատմիչը նուիրել է այսպիսի գնահատական տողեր Մանուէլին. «Այլ լի իմաստութեամբ եւ զօրաւոր ի դործս իւր» :

Ս. Խաչ եկեղեցու ճարտարապետական գեղեցկութիւնը բարձր են գնահատել բանասէրներ այսպիսի տողերով. «Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին Հայոց ճարտարապետական արուեստի հրաշալիքն է, ուր Հայ Հանճարը իրեն լաւագոյնը դրուեւորել է. . . . Նրա որոշ մասերի վրայ կարելի է գտնել օտար աղղեցութիւններ, որոնք, սակայն, ազգայնացուել են եւ երբեք չեն խանգարում ընդհանուր ներդաշնակութիւնը : Նկատի առնելով, որ Ս. Խաչ տաճարի շինութեան համար աշխատել են թէ՛ Գագիկ արքան, ե՛ւ իշխաններ, ե՛ւ եկեղեցականներ, ե՛ւ աշխարհականներ, ե՛ւ աղուակաւորներ, եւ թէ՛ հասարակ ժողովուրդը, կարելի է անվարան նրան հուսկել իբր Հայ ազգի հաւաքական ձգտումներին եւ վանքերի մէկ հրաշակներտը՝ ճարտարապետութեան մարզում : Վերջին տարիներում յատկապէս՝ Աղթամարի եկեղեցին դրաւեց ուշագրութիւնը ճարտարագիտական ամենապարզորդների, որոնք հնացած ունեցով արտայայտուեցին Հայ ճարտարապետութեան այս փառաւոր կրթողի մասին» :

Վաստակաւոր Մանուէլ ճարտարապետի հոյակապ արուեստի մի այլ թանկազին կոթողը, պատմիչի վկայութեամբ, տեսնում էք Ոստան քաղաքի ծովամատոյց վայրում : Դա չքնադատեսիլ մի սլալատ է, որի գեղեցկութեանն առանձին փայլ են տալիս «ընդարձակ նկարազարդ եւ լուսաւոր դահլիճները, բազմաթիւ սենեակները, որտեղից հիւնալի տեսարաններ են բացւում դէպի հեռաւոր հորիզոններն ու լճի ծովացող ջրերը» (Ստ. Մնացականյան) :

Որպէս քանդակագործ : Աղթամարի Ս. Խաչ տաճարի գեղեցկութեանն առանձին փայլ է տալիս Գագիկ Արծրունի թագաւորի արձանը : Դա միջնադարի Հայ քանդակագործական արուեստի գոհար է, որը վկայում է, թէ՛ ճարտարապետ Մանուէլն իր դարաշրջանում հուսկուել է նաեւ որպէս տաղանդաւոր քանդակագործ : Արձանն ունի նաեւ աղղագրական արժէք. Հայոց արքան կանգնել է ամբողջ Հասակով, ծիրանին հագին եւ տաճարի մօտէլը, ասես, մատուցում է իր զիմացը կանգնած Քրիստոսին :

Քանդակագործական արուեստի ուշագրաւ ստեղծագործութիւններ են նաեւ տաճարի արեւելեան ճակատի բարձրաքանդակները, որտեղ ցուանում են Գագիկ արքան եւ իր երկու իշխանագուն որդիները՝ խնջոյքի նստած խաղողի այգում : Չափազանց սպաւորիչ են եւ խօսուն նաեւ քերթահաւաքը, որտեղ տեսարանները, մարդկանց եւ կենդանիների՝ դայլի, մարտդի, տուհաժի, եղնիկի, նապաստակի բարձրաքանդակները :

Ի՞նչ են ընդգծում տաղանդաւոր ճարտարապետ-քանդակագործ Մանուէլն ստեղծագործութիւնները : Այն, որ նրանք իրենց բարձր արուեստով,

ընդհանրական խորութեամբ, ձեւերի կատարելութեամբ եւ ոճային առանձնատարածութիւններով միջնադարի Հայ ճարտարապետական մշակոյթի սքանչելի կոթողներ են եւ վկայում են, որ ճարտարապետութիւնն ու քանդակագործութիւնը եղել են նրա էութիւնը եւ նա ամէն կերպ աշխատել է պահպանել Հայկական մշակոյթի հարադատութիւնը: Առհասարակ 10րդ Դարի Հայկական ճարտարապետութեան ինքնուրոյն արուեստի եւ ոճի առանձնատարածութիւնների ուսումնասիրութեան համար Մանուէլի կառուցած յուշարձանները ճարտարապետական մշակոյթի թանկագին գոհարներ են, որոնք արդիւնք են արուեստագէտի վարպետութեան եւ զրսեւորում են նրա կատարած խոշոր դերը ճարտարապետական մշակոյթի զարգացման պատմութեան մէջ: Նրա կառուցած հոյակերտ յուշարձաններով կարող է պարծենալ ամէն մի լուսավոր, առաջագէտ եւ արուեստասէր ժողովուրդ:

## 9

### ՍԵԼՁՈՒԿ-ԹԱԹԱՐՆԵՐԻ ԱԽԵՐԱԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

11րդ Դարում Հայաստան են ներխուժում Սելջուկեան հորդանքերը եւ սոսկալի աւերածութիւններ կատարում. նրանք կործանում են ո'չ միայն Հայաստանի ծաղկած քաղաքները եւ գեղեցկաշէն Անիի այրում, այլեւ անխնայ կոտորում են ժողովրդին, իսկ գերիներին անասելի տանջանքներով ըսպանում: Այդ մասին է վկայում 11րդ Դարի ողբասաց Արիստակէս Լաստիվերտցու աւանդ թողած գրքոյկը, որ պատմական մեծ արժէք է ներկայացնում: Նա իբրեւ ականատես Սելջուկ-թաթարների գործած զարհուրելի վայրագութիւններին ու աւերումներին, նկարագրել է այսպիսի խոր կսկիծով. «Այնտեղ էր տեսնելու ցաւայի եւ արտասուքի արժանի տեսարան. ուրովհետեւ ժողովրդից նրանց, որոնց ձեռք էին բերում, սրով էին սպանում. որոնք քարքարոտ տեղերն էին մտնում եւ ամբանում, նետերով էին խոցոտում ու սպանում ... ու նրանց դիակները, փայտահատների կոյտերի նման, գլորելով, իրար վրայ գիղած՝ ձորն էին լցնում: Վա՛յ եւ աւա՛ղ այն օրուայ լուսինն ... Հայրը մոռացաւ որդոց գութը, եւ մայրը՝ նորածին մանուկների սէրը: Այնտեղ չէր կարող միտքը բերել նոր հարսը՝ փեսայի սէրը եւ ոչ այլը՝ իր ամուսնու գեղեցկութիւնը. պաշտօնեաների երգերը պակսեցան ... Խիստ տաղանդից՝ յղի կանայք վիժում էին եւ այսպէս բոլորը, որսորդները ոււկանով թակարդուածների նման, խիստ շրջապատուել էին, մինչեւ որ ամէնքն էլ թուլացան եւ ընկան...»:

Կանգնել ենք 12րդ դարաշրջանում, որ Հայ գրականութեան մէջ մի դարագլուխ է կազմում: Դա Ռուբինեանց իշխանութեան պատմաշրջանն է, երբ հուշակ են վայելում բանաստեղծներ Ներսէս ԾնորՀային եւ Ներսէս Լամբրոնացին ու պատմագիր Մատթէոս ՈւռՀայեցին: Այդ դարի Հայ ժողովրդի պարծանքն են անուանի բժիշկ Մխիթար Հերացին եւ իրաւաբան-օրէնսգէտ Մխիթար Գոշը, անգուգալիւն պայծառ ղէմքեր, որոնց գրական գործունէութեան պատկերը կը գծենք մի առանձին ուսումնասիրութեամբ:

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ



## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ՅՈՎՀԱՆՆԵՍ ԲՆՆ. ԽԻՉԱՆՑԻ

(1626 – 1663)

Յովհաննէս Խիչանցի որդին էր Յովհաննէս Քաւանայի եւ Աշիլի։ Ունէր երկու եղբայրներ՝ Միքայէլ Քաւանայ եւ Ամիրսէթ, եւ քոյր մը՝ Հռիփսիմէ։ Որդին կը կուսէր։ Սէթ։ Նշակերտած է Մինաս կրօնաւորին։ Առաւելապէս զօրծած է Երուսաղէմի մէջ, երբեմն այցի երթալով իր Հայրենիքը, ուր կը տեսնենք զինքը երկիցըս, 1644ին, եւ 1649–50ին։

Իր 1656ին աւարտած Աւետարանին յիշատակարանին մէջ կու տայ սա շահեկան տեղեկութիւնները։ «Ի թվին ՌՇԴ [= 1625] եկայք ի սուրբ Երուսաղէմ եւ այսքան տարւիս զվանաց աւրհնութեան նամակներն կու դրէաք որ յամենայն երկիր կու յուղարկեն ի մխիթարութեան պատճառս. կա՛ որ ողորմութիւն է յուղարկած, թէ Հասաւ ձեր ողորմութիւն, եւ կա՛ որ յորդորանք է վասորն սուր տանս դատաստանի, որ զան յերկրպագութիւն լուսաբուղիս սուրբ գերեզմանին եւ ում'նայն սուրբ տնօրինականացո Քրիստոսի» (Աղանւնի, Միաբանք, էջ 356։– 220. Ս. Յ. Թ. 2351)։

Խիչանցի Յովհաննէս Քաւանայի բազմադիրն զրչէն ու զրճինէն ծանօթ են երեսուն ձեռագիրներ։ Կը ներկայացնենք ժամանակագրական կարգով։

1. 1626, Երուսաղէմ, Ժողովածու, օրինակած է։– 220. Ս. Յ. Թ. 2515։

2. 1627, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւետարան, օրինակած է։– Արարատ, 1905, էջ 732–3։

3. 1628, Երուսաղէմ, Խորհրդատետր։– 220. Ս. Յ. Թ. 1829։

4. 1631, Երուսաղէմ, Աւետարան, զբաժնէ ծաղկած է մահտեսի Տօնապետի Համար։– 220. Ս. Յ. Թ. 1945։

5. 1631, Երուսաղէմ, Հարցմանց Գիրք Գր. Տաթեւադիի, օրինակած է Ս. Փրկչի Վանքին մէջ, Դանիէլ Արեղայի Համար։– Յուցակ 220. Մշոյ, Թ. 71, էջ 66։

6. 1633, Երուսաղէմ, Ժողովածու, օրինակած է մահտեսի Մարկոսի Համար։– 220. Երեւանի, Թ. 1256։

7. 1633, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Մեկնութիւն Մատթէոսի՝ Գր. Տաթեւադիի։– Հանդիս Ամսօրեայ, 1892, էջ 113։

8. 1634, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւետարան, մասամբ օրինակած է, Դանիէլ Արեղայի Համար, որ եւ կատարած է ծաղկումը։– Յուցակ 220. Մշոյ, Թ. 74, էջ 70։

9. 1634, Երուսաղէմ, Աւետարան, օրինակած եւ ծաղկած է, Բաշրաթ Խարկաւազի Համար։– 220. Ս. Յ. Թ. 2659։

10. 1638, Երուսաղէմ, Յայտմանուրք, օրինակած է Գրիգոր Պարոնտէր Պատրիարքի պատուէրով։– 220. Ս. Յ. Թ. 1919։

11. 1639, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Մաշտոց, զբաժնէ ծաղկած է։– 220. Ս. Յ. Թ. 2175։

12. 1640, Երուսաղէմ, Աւետարան, օրինակած է Գրիգոր Պարոնտէր Պատրիարքի հրամանով։– 220. Ս. Յ. Թ. 2639։

13. 1640, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւետարան, օրինակած եւ նկարազարդած է մահտեսի Խերէբի խնդրանքով։– 220. Ս. Յ. Թ. 2668։

14. 1644, Հիղան, Աւետարան, օրինա-

կած եւ նկարագրուած է մահտեսի Խաւճա  
Սարգսի համար։— Զեռ. Ս. Գ. Թ. 2631:

15. 1646, Ս. Ծնունդ, Բեթղեհէմ, Զա-  
ւոց, օրինակած եւ նկարագրուած է՝ միջակ  
արուեստով, Գանձակեցի Գր. Պատրիարքի  
պատուէրով։— Զեռ. Ս. Գ. Թ. 15:

16. 1647, Աւետարան, օրինակած է ի Ս.  
Ծնունդ, եւ նկարագրուած է Երուսաղէմի  
մէջ, մահտեսի Յակոբի եւ իր հորօր Սիրու-  
նի խնդրանքով։— Զեռ. Ս. Գ. Թ. 2596:

17. 1647, Երուսաղէմ, Նարեկ, դրած եւ  
ծաղկած է։— Զեռ. Ս. Գ. Թ. 1438:

18. 1649, Հիզան, Աւետարան, Յովհանն-  
նէս վարպետին համար, որ կը նուիրէ  
զայն Երուսաղէմի Ս. Փրկչի Վանքին։—  
Զեռ. Ս. Գ. Թ. 1969:

19. 1649, Հիզան, Մաշտոց, Յովհաննէս  
վարպետին համար, որ նուիրած է զայն Ս.  
Ծնունդեան Վանքին իրրեւ յիշատակ։— Զեռ.  
Ս. Գ. Թ. 2203:

20. 1649, Հիզան, Մաշտոց, Յովհաննէս  
վարպետին համար, որ նուիրած է զայն Ե-  
րուսաղէմի Ս. Հրեշտակապետաց Վանքին  
։— Զեռ. Ս. Գ. Թ. 2286:

21. 1650, Հիզան, Մաշտոց, օրինակած  
է Հայրապետ Քահանայի համար։— Զեռ.  
Երեւանի, Թ. 3904:

22. 1653, Բեթղէհէմ, Տօնացոյց-Շարա-  
կան, օրինակած եւ ծաղկած է Ս. Ծնունդեան

Վանքին մէջ, իր որդւոյն Սէթի համար։—  
Զեռ. Ս. Գ. Թ. 1403:

23. 1653, Ս. Ծնունդ, Տօնացոյց-Շարա-  
կան, օրինակած է մասամբ։— Զեռ. Ս. Գ. Թ.  
2652:

24. 1655, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւե-  
տարան, զոր կ'աւարտէ 1656ին, եւ կ'ընծայէ  
Բեթղեհէմի Ս. Ծնունդեան Վանքի Ս. Աստ-  
ուածածին եկեղեցիին։— Զեռ. Ս. Գ. Թ.  
2651:

25. 1658, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Աւե-  
տարան, օրինակած եւ նկարագրուած է, եւ  
նուիրած Ս. Աստուածածնի Գերեղմանին։—  
Զեռ. Ս. Գ. Թ. 1549:

26. 1658, Երուսաղէմ, Տօնացոյց-Շարա-  
կան, դրած եւ ծաղկած է։— Զեռ. Ս. Գ. Թ.  
2103:

27. 1658, Երուսաղէմ, Աւետարան, օրի-  
նակած եւ նկարագրուած է, եւ նուիրած Ս.  
Փրկչի Վանքին։— Զեռ. Ս. Գ. Թ. 2608:

28. 1660, Երուսաղէմ, Աւետարան, օրի-  
նակած է մահտեսի Մարիամի խնդրանքով։—  
Զեռ. Ս. Գ. Թ. 2613:

29. 1661, Ս. Յակոբ, Երուսաղէմ, Շա-  
րական, դրած եւ ծաղկած է Սիմէոն պարոն-  
տէոսի պատուէրով։— Զեռ. Ս. Գ. Թ. 355:

30. 1663, Ս. Փրկչի, Երուսաղէմ, Աւե-  
տարան, օրինակած եւ նկարագրուած է. Զե-  
ռուդիւրը մնացած է առանց ստացողի։—  
Զեռ. Ս. Գ. Թ. 2665:

Ն. ԵՊՍ. ՄՈՎԱԿԱՆ

## ԵԶՆԻԿԻ ԵՐԿԻ ԲՆԱԳՐԱՅԻՆ ՄԻ ՔԱՆԻ ՆՈՐ

### ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևանում հրատարակուող Պատմա-Բանասիրական Հանդեսի 1970 թուականի 2րդ համարում լեզուաբան Ա. Աբրահամեանը տպագրել է «Եղնիկի երկի բնագրային մի քանի մեկնաբանություններ» վերնագրով յօդուածը: Իր խել ասելով, նա հիմնականում անդրադարձել է բանասերների կողմից առաջարկուած մի քանի սրբագրութիւնների, «որոնք նպաստում են երկի էութեան պատշաճ բացայայտմանը: Սակայն — շարունակում է նա — այդպիսով խնդիրը սպառուած չի կարելի համարել, քանի որ դեռ կան պարզաբանման ենթակայ տեղեր, ինչպէս նաեւ եղած բանասիրական որոշ առաջարկներ ու մեկնաբանութիւններ վերանայման կարիք ունեն»<sup>1</sup>: Այս հարցում մենք համակարծիք ենք հեղինակին. Եղնիկի երկը (առ այժմ) բանասիրութեանը յայտնի է մէկ ձեռագրով, եւ բնագրային բոլոր սրբագրութիւններն ու մեկնաբանութիւնները հիմնուած են երկի բովանդակութեան ու նրա լեզուի ուսումնասիրութեան վրայ. ուստի ենթակայ են նորանոր քննութեան, մինչեւ որ համոզիչ դառնան: Այդ խել տեսակէտից մենք քննութեան առանք Ա. Աբրահամեանի բոլոր «մեկնաբանութիւնները, առաջարկներն ու դիտողութիւնները, որ մի մասով նոր են առաջ քաշուած — ինչպէս գրում է նա —, մի մասով էլ ճշգրտւած, խորացում կամ լրացուցիչ տուեալներով հիմնաւորում են եղածները»<sup>2</sup>: Տեսնենք թէ որքանով են իրականացել այդ յայտարարութիւնները:

Նախ՝ մի քանի ընդհանուր դիտողութիւններ յօդուածագրին:

1. Նա բանասիրական լուրջ սխալ է գործել իր սրբագրութիւններին եւ մեկնաբանութիւններին համար հիմք ընդունելով Եղնիկի երկի 1826 թուականի հրատարակութիւնը (Վիեննայի, Հ. Արսէն Բագրատունի), այդպիսով անտեսելով ուղղակի միակ ձեռագրից տպագրուած գիտական բնագիրը (Փարիզ, Լուի Մարիէսի եւ Շարլ Մերսիէի ջանքերով): Նոյն սխալը գործել էր նաեւ Վ. Զալոյեանը Եղնիկի երկի ռուսերէն թարգմանութեան ժամանակ:

2. Լուրջ բանասիրութիւնը Ա. Աբրահամեանից պահանջում էր, որ սրբագրութիւններ կամ մեկնաբանութիւններ վերանայելիս նա ընթերցողին ժամանակագրական կարգով ներկայացնէր. դրանց մասին արտայայտուած բոլոր կարծիքներն իրենց հեղինակների անուններով, որքան նրան յայտնի են՝ Եղնիկի առաջին հրատարակիչները (Զմիւռնիա, 1762), երկրորդ հրատարակիչը, Ֆլորիվալ, Դիւրիէ, Շմիդ-Գալէմքեարեան, Վերբը, Ն. Նահապետեան, Հր. Աճառեան, Ե. Դուրեան, Ն. Աղոնց, Ե. Փէչիկեան, Ն. Բիւզանդացի, Բ. Կիւլէսէրեան, Գ. Պալատուրեան...: Այս հարցում թւաւորումները յօդուածագրի ուղղամտութեան կամ բանասիրական գիտելիք-

<sup>1</sup> Պատմա-Բանասիրական Հանդէս, 1970, թ. 2, էջ 94-96:

<sup>2</sup> Նոյն տեղում, 108:

<sup>3</sup> EZNIK DE KOLB. "De Deo". Edition critique du texte arménien, par † Louis Mariès et Ch. Mercier. Paris, 1959. Patrologia Orientalis, t. XXVIII, fasc. 3.

ների պակասի նշան են: Այս տեսակետից նրա ջննդատուութեան մէջ յատկապէս «տուժել» է Ֆրանսացի երախտաւոր հալազէտ Լուի Մարիէսը, թէեւ նրան յայտնի են վերջինիս եզնիկագիտական լուրջ ուսումնասիրութիւնները<sup>4</sup>, էլ՝ չենք ասում Եզնիկի երկի գիտական բնագիրը եւ ֆրանսերէն արժեքաւոր թարգմանութիւնը, որոնք լուսաբանուած են հարկւրաւոր ծանօթագրութիւններով: Գիտական, վերջին հրատարակութիւնը թողած՝ Ա. Աբրահամեանը ժամավաճառ է եղել կարծիքներ ջննդատելով կամ «հիմնաւորելով», յաճախ առանց իր նպատակին հասնելու:

3. Ա. Աբրահամեանի յօդուածում իշխում է պէտք էջների ոճը եւ իրեն նախապատուութիւնը տալու ճշտումը. Եզնիկի բնագրի այս կամ այն տողը սրբագրելիս նա յայտարարում է, թէ ճիշդն այսպէս պէտք է լինի. սակայն յետոյ պարզւում է, որ նա լուկ լուեայն հետեւող է որեւէ բանասէրի, որի անունով պէտք է ներկայացնէր այդ տեսակէտը:

Այս ընդհանուր դիտողութիւններից յետոյ, որոնց ճշգրտութեան ընթերցողն անձամբ կարող է համոզուել ստորեւ, անցնենք Ա. Աբրահամեանի 14 պարագրութիւնների եւ մեկնաբանութիւնների ամէն մէկի ջննութեան:

1. Եթէ այնպիսի ինչ քննութիւն մտքդոյն առնայ էր, ապա ոչ ի բնութեմէն արարածոյ եւ յաստուածեղէն գրոց նմա վարդապետութիւն ընծայաւնայր. որպէս ասէ ուրիշ պատուածական բարբառն, եթէ ի մանկութենէ մարդիկ ի խնամս չարի միտեալ են. զի ցուցցէ թէ որ միտին՝ կամաւք միտի, եւ ոչ ուրուք բռնութեամբ<sup>5</sup> (Մ 24. 21-25, Բ ԱԺա 44):

Ա. Աբրահամեանը գրել է, թէ սկզբից մինչեւ առաջին միջակէտն ընկած մասում «աղաւաղում կալ... Սա հասկանալի չէ եւ տրամաբանօրէն չի կապուած շարունակութեան հետ», այսինքն՝ միջակէտից յետոյ եկող մասի հետ, որ, դարձեալ նրա կարծիքով, «կանոնաւոր է ու հասկանալի, ի հարկէ առանձին վերցրած: Սակայն առաջին մասի պատճառով անկապ ու անտրամաբանական է դառնում ամբողջ հատուածը: Ուրեմն հասկանալի դարձնելու համար պէտք էր վերակազմութիւն կատարել»<sup>6</sup>: Թէեւ նա իսկոյն չի ստում, բայց պարզւում է, որ առաջին անգամ Գր. Գալէմբեարեանն է տրամաբանել այս կասկածը. ուստի նա վերլուծեցրել է նախ վերջինիս «վերակազմութիւնը», սակայն չբաւարարուելով դրանով՝ «վերավերակազմել է» Եզնիկի նախադասութիւնը, մինչեւ որ «ցանկալի արդիւնքն ստացուի»(?):

Գր. Գալէմբեարեանը աղաւաղուած է համարել վերլուծեալ հատուածի սկիզբը եւ ըստ այնմ ընդմիջարկել Մեթոդիոս Օլիմպիացու «Վասն անձնիշխանութեան» յունարէն երկից իր իսկ գրաբար թարգմանած հետեւեալ բառերը<sup>7</sup>, որոնք ընդգծուած են. «Եթէ այնպիսի ինչ քննութիւն՝ մարդոյն

<sup>4</sup> LOUIS MARIÈS. Le DE DEO d'Eznik de Kolb connu sous le nom de "Contre les sectes" Paris, 1924; Etude sur quelques noms et verbes d'existence chez Eznik, Paris, 1928.

<sup>5</sup> Բնագրային մէջբերումները կատարելով Խանգրձ Եզնիկի գիտական հրատարակութիւնից (Մ). Ոչնչւմ եմք մանւ. Վեներիկի առաջին հրատարակութեան գիրքը, գլուխն ու էջը (Բ):

<sup>6</sup> Պատմա-բանասիրական Հանդէս, 95:

<sup>7</sup> Գր. Գալէմբեարեանի սրբագրութիւնը տե՛ս «Նորագոյն աղբիւրք եզնիկայ հոգրացույ Հնդդէմ աղաբիւրց մատենին», Վիեննա, 1919, 64:

<sup>8</sup> Թողուածագիրը սխալմամբ արտագրել է «քննութեամբ», որ ամփոփապէս մի տող վեւրելում է, եւ իր սխալը գործամալիօրէն վերագրելով Գր. Գալէմբեարեանին՝ գրել է. «Ներշնիք մանւ, որ քննութիւն» չառն էլ ի գուր է փոխուած գործիակամով» (էջ 95):

առեալ էր, ապա ոչ յուրով վարդապետութեմէ մմա դիպէր ամաստութիւնն, այլ՝ ի բնութենէ արարածոյ...»: Շարունակութիւնը՝ ինչպէս Եզնիկի երկում, բայց «արարածոյ» բառից յետոյ նա դրել է վերջակէտ՝ Մեր կարծեալով, այս միջմատութիւնն աւելորդ է, քանի որ առանց դրան էլ Եզնիկի միտքը հասկանալի է եւ նախադասութեան կառուցուածքը կանոնաւոր, ինչպէս կը տեսնենք ստորեւ Մարիէսի կարծիքին ծանօթանալիս:

Ա. Արրահամեանն աւելի է առաջ տարել այդ սրբագրութիւնը. «արարածոյ» բառից յետոյ Գր. Գալէմբեարեանի դրած վերջակէտը փոխարինել է ստորակէտով, «ընծայանայր» բայից առաջ դրել է (ոչ) եւ ամբողջ նախադասութիւնը խմբագրել է հետեւեալ ձեւով<sup>10</sup>. «Եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ յուրով վարդապետութեմէ մմա դիպէր ամաստութիւնն, այլ ի բնութենէ արարածոյ (,)»<sup>11</sup> եւ յաստուածողէն զորոց նմա վարդապետութիւն (ոչ) ընծայանայր»: Շարունակութիւնը թողել է ինչպէս Եզնիկի երկում է, եւ «վարդապետութիւն» բառը նոյն նախադասութեան մէջ իւրովի մեկնաբանելով նախ՝ որպէս «Հրահրում» եւ ապա՝ «ձեւակերպում», նա թարգմանել է. «Եթէ մարդն այդպիսի չար<sup>12</sup> էութիւն ստացած լինէր (այսինքն՝ ի բնէ չար էութեամբ ստեղծուած լինէր), ապա անհնազանդութիւնը նրա մէջ երեւան կու գար (բառացի՝ նրան կը հանդիպէր) ոչ թէ մէկի հրաքանդումից, այլ (իր իսկ) արարածային էութիւնից, եւ Աստուածաշունչ զգրում էլ դրա վերաբերեալ (այնպիսի) ձեւակերպում չէր տրուի, ինչպէս մի տեղ աստուածային խօսքով ասում է՝ «Մարդիկ մանկուութիւնից հակուած են դէպի չարիք», որպէսզի ցոյց տրուի, թէ ով հակուած է, կամովին է հակուած եւ ոչ թէ մէկի բռնութեամբ»:

Նախ՝ մեր զիտողութիւնները այս թարգմանութեան մէջ ընդգծած բառերի մասին.

ա) Եզնիկի «Եթէ այնպիսի ինչ բնութիւն» բառերը թարգմանելիս Ա. Արրահամեանը սխալ մեկնաբանելով բնագրի «այնպիսի» դերանունը, աւելացրել է «չար» ածականը: Բայց մեզ թւում է, եւ ինչպէս ասուած է Եզնիկի քննական հրատարակութեան մէջ (Ծան. 161), Եզնիկը «այնպիսի» դերանունով նկատել է ունեցել մարդու անհնազանդ, «աստուածանոց» եւ ոչ թէ չար բնութիւնը. նա մի քանի տող վերելում այս մասին յատկապէս գրել է. «Եւ դարձեալ ոչ յարարչէն, այլ յամաստութեմէ դիպեալ ստուգանողին, եւ յուրուք վարդապետութիւնէ դրեալ. զի ոչ եթէ այնպիսի ինչ հաստատեալ բնութեամբն զմարդն... կարէ ոք ցուցանել» (Մ 24. 17): Հետեւաբար ճիշդ չէ նաեւ թարգմանութեան մէջ փակագծերում առնուած «ի բնէ չար էութեամբ» մեկնաբանութիւնը:

բ) «Երեւան կու գար» բայը գրաբար «դիպէր» բայաձեւի ճիշդ թարգմանութիւնը չէ, չունի վերջինիս պատահականութեան, պատահելու նրբերանգր: Եթէ մարդն ի բնէ անհնազանդ ստեղծուած լինէր, ապա որքանով ճիշդ կը լինէինք, եթէ ասէինք, թէ «նրա մէջ անհնազանդութիւնը եւ

<sup>9</sup> Հակոտակ Գր. Գալէմբեարեանի, յօդուածագիրը չի ընդգծել այս բառը, քերես իրեն վերագրելով:

<sup>10</sup> Պատմ.-Բանասիրական Հանդէս, 95:

<sup>11</sup> Ա. Արրահամեանը Գր. Գալէմբեարեանի վերջակէտը փոխարինել է ստորակէտով:

<sup>12</sup> Ընդգծում եմ այն բառերը, որոնց մասին դիտողութիւններ ունեմք:

րեւան եկաւ»։ Էջ՝ որ մարդն էութեամբ այնպիսին էր։ Առ նուազն պէտք էր աւելացնել զպատահարաց մակրայր։

Գ) Մեզ բռնադատելի է թուում եւ Նոր Հայկազեան քառարանում չրկայ «վարդապետութիւն» գոյականի «հրահրում» եւ «ձեւակերպում» երկիւմ մաստ առումը նշնակի նոյն նախադասութեան մէջ, աւելի ճիշդ՝ Գր. Գալէմբեարեանի աւելացրած հաստատում եւ նշնակի բնագրում։ այդ բառը երկու դէպքում էլ նշանակում է «վարդապետութիւն, ուսուցում, սովորեցնելը»։

Պ) Ի՞նչ կարիք կար «որպէս ասէ ուրեք աստուածական բարբառն» նախադասութիւնը թարգմանել «ինչպէս մի տեղ աստուածային խօսքով ասուում է» եւ ոչ թէ ուղղակի՝ «աստուածային խօսքը (կամ՝ ձայնը) ասում է», ինչպէս բնագիրն է թելադրում։ Նոյնպէս եւ բնագրի «գի ցուցցէ» բայը թարգմանուել է «որպէսզի ցոյց տրուի», եւ ոչ թէ «որպէսզի ցոյց տայ» Աստուած կամ աստուածային խօսքը, որից, կարծէք, խուսափում է Ա. Արքահամեանը։

Անկախ այս թարգմանական թերութիւններից, մեզ աւելորդ է թուում Գր. Գալէմբեարեանի եւ Ա. Արքահամեանի միջամտութիւնը նշնակի բնագրին։ Առաջինի սրբազրութիւնն իբր հիմնուած է Մեթոդիոսի երկի վրայ։ Բայց վերջինի եւ նշնակի նրա իսկ առաջրումները ցոյց են տալիս, որ այսու տեղ նշնակը չեղուել է իր աղբիւրից։ Իսկ Ա. Արքահամեանը միջամտել է, որպէսզի իրեն «ցանկալի արդիւնքը ստացուի», իր բառերով ասած։

Որո՞նք են այդ սրբազրութիւնների թերութիւնները։

Երբ խորն ենք մտածում, տեսնում ենք որ «Եթէ այնպիսի ինչ բռնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ յաւրաք վարդապետութենէ մեա դիւպէր ամաստութիւնն, այլ ի բնութենէ արարածոյ» բնագրուած նախադասութեան մէջ, որ աւելացրել է Գր. Գալէմբեարեանը, «դիպէր» (պատահել, պատահարաբար երեւան դալ) բայը տեղին չի գործածուել։ Եթէ մարդն ի բնէ անհնազանդ ստեղծուած լինէր, անհնազանդութիւնը նրա մէջ պատահաբար երեւան չէր գար։ Բայց քանի որ մարդն ստեղծուած էր անձնիշխան, ուստի անհնազանդութիւնը նրա մէջ երեւան հկաւ նրա արարածային բնութիւնից։ Մարդ արարածը սխալական էր, կարող էր սխալուել եւ այնպիսով չհնազանդուել աստուածային պատգիրանին։ զա բխում էր նրա արարածային էութիւնից։ Այս նկատի ունենալով՝ Աստուածաշունչը գրել է, թէ մարդիկ մանկութիւնից հակուած են չար գործելու։ Ընդհակառակն, եթէ մարդն ի բնէ անհնազանդ ստեղծուած լինէր, ապա նրա անհնազանդութիւնը կը բացատրուէր նրա էութեամբ եւ Աստուածաշունչն էլ այդ մասին «ձեւակերպում չէր տայ», ինչպէս ասում է Ա. Արքահամեանը։ Արդ, քանի որ այնպէս չէ, ուստի հասկանալի է նշնակի գրածը. «Եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ ի բնութենէ արարածոյ եւ յաստուածեղէն գրոց նմա վարդապետութիւն ընծայանայր», այսինքն՝ եթէ մարդն ստացած լինէր այնպիսի (այն է՝ անհնազանդ, ստունդանող) բնութիւն, ապա նրա արարածային բնութիւնից եւ աստուածային Գրքից բխող վարդապետութիւն կամ ուսուցում չէր ընծայուի կամ տրուի նրան։

Մեզ թւում է, որ Ա. Արքահամեանի աւելացրած «ոչ» ժխտականը չի արդարացում։ Ըստ նրան, «ընծայանայր բայաստորագեալն էլ ժխտական ձեւով պէտք է լինի» ոչ ընծայանայր։ Ըստ երեւոյթին, վերը եղած ոչ ժխտական մասնիկը վերաբերել է ընծայանայր բային, երբ յիշեալ նախադասութիւնը դեռ ազաւաղումով առանձնացուած չի եղել» (էջ 95)։ Մենք կարծում ենք, որ դա ճիշդ չէ։ Դարձեալ մէջ բերենք Գր. Գալէմբեարեանի եւ Ա. Արքահամեանի միացեալ ուժերով վերականգնուած նախադասութիւնը, եւ

կը տեսնենք, որ այդ ժխտական մասնիկը բաւական հեռու է այն բայից, ուր ինչ եւս նա պէտք է վերաբերէր, ըստ Ա. Արքահամեանի. «Եթէ այնպիսի ինչ բնութիւն մարդոյն առեալ էր, ապա ոչ (յուրուք վարդապետութենէ նմա դիպէր անաստութիւնն, այլ) ի բնութենէ արարածոյ եւ յաստութենէն դրոյ նմա վարդապետութիւն (ոչ) ընծայանայր», Ա. Արքահամեանն ինքը համոզուած չէ իր ասածի մէջ. այլ բան է «Ըստ Երեւոյթիմ վերը եղած ոչ ժխտական մասնիկը վերաբերել է ընծայանայր բայտարութեալին» եւ այլ՝ այդ ժխտական մասնիկն աւելացնել բայից առաջ. Թէեւ Ա. Արքահամեանը հաստատացած է, թէ Գր. Գալէմբեարեանը վերացրել է յիշեալ նախադասութեան սղաւաղումը եւ ինքն էլ նրա վերջակէտը փոխարինելով ստորակէտով՝ յիշեալ նախադասութիւնը «արամաբանօրէն կապել է շարունակութեան հետ» բայց զգալով անշուշտ ալի կապի թուլութիւնը մի կողմից՝ անհրաժեշտ է համարել ոչ ժխտական մասնիկն աւելացնել ընծայանայր բայից առաջ, հաստատար նկատելով միւս կողմից՝ որ «վերը եղած ոչ ժխտական մասնիկը» («ոչ յուրուք») շատ է հեռու. «ընծայանայր» բայից եւ չի կարող նրան էլ վերաբերել առանց կրկնուելու: Նկատենք նաեւ, որ «ոչ յուրուք» բառակապակցութեան մէջ ժխտական մասնիկը վերաբերում է յարակից դերանշան (որ Ա. Արքահամեանը թարգմանել է «ոչ թէ մէկի») եւ ոչ թէ նախադասութեան գործարար բային. ուստի ու եւս մի պատճառ է, որ դերանշան վրայ դրուած այդ նոյն ժխտական մասնիկը առանց կրկնուելու չէր կարող Եզնիկի բնադրում երկրորդ անգամ վերաբերել մի բայի:

Իր այս առաջին սրբադրութեան վերջում Ա. Արքահամեանը գրել է, թէ Եզնիկի մէջբերումը կատարուած է Մննդ. Ը 8ից, բայց որոշ բառերի համար: Գրքի բնագիրն այլ է: Նա դրացել է յիշեցնել, որ այդ միտքը կամ գիտը իրենը չէ, որ իրենից առաջ այդ աղբիւրը նշել է եւ մէջ բերել Գր. Գալէմբեարեանը<sup>13</sup>:

Մի ուրիշ գլացում. «Յիշենք ագրել է Ա. Արքահամեանը, որ Եզնիկի երկի համապատասխան հատուածին անդրադարձել է նաեւ Ն. Աղոնցը» (96): Մեր հերթին պիտի յիշեցնենք ընթերցողին, որ Եզնիկի բնագրի այդ տեղին եւ Գր. Գալէմբեարեանի սրբադրութեանը Աղոնցից առաջ անդրադարձել է Լուի Մարիէսը նախ՝ իր «De Deo» աշխատութեան (1924, էջ 104-112), ապա Երկրորդ անգամ Եզնիկի գիտական հրատարակութեան 154րդ ծանօթութեան մէջ:

Մարիէսն ու Մերսիէն, ի տարբերութիւն Գր. Գալէմբեարեանի, Եզնիկի այդ հատուածում ոչ մի աղաւաղում չեն նկատել եւ գիտական հրատարակութեան մէջ անփոփոխ են թողել ձեռագրի բնագիրը ու թարգմանել այսպէս.

“Si nature de cette sorte, l'homme avait reçue, conséquemment, point ne lui eût été, de par nature de créature et de par divines écritures, doctrine offerte; comme dit quelque part la divine parole: 'Dès l'enfance les hommes à s'occuper du mal sont enclins', pour montrer que, qui incline, c'est par volonté qu'il incline, et point par contrainte de quelqu'un" (p. 28-29)

Այսինքն՝ «Եթէ մարդն բոլորպիսի բնութիւն ստացած լինէր, ապա նրան վարդապետութիւն ընծայուած չէր լինի արարածային բնութեամբ եւ

<sup>13</sup> Գր. Գալէմբեարեան, Յշ. աշխ., 64, ծան. 3:

աստուածային գրքով. ինչպէս մի տեղ աստուածային խօսքն ասում է, թէ մարդիկ մանկութիւնից իստում ունեն չարով զբաղուելու, որպէսզի ցոյց տայ, թէ ով հակում է, կամովին է հակում, եւ ոչ թէ մէկի բռնութեամբ: Եւ 163րդ ծանօթութեան մէջ թարգմանիչները նշել են, որ մարդկանց՝ չարին միտելու վարդապետութիւնը հիմնուած է թէ՛ տրամաբանութեան վրայ, քանի որ մարդկային բնութիւնը կատարեալ չէ, եւ թէ՛ աստուածային խօսքի վրայ՝ «ի մանկութենէ մարդիկ ի խնամս չարի միտեալ են» (Մննդ. Ը. 21): Եթէ մարդիկ Աստուծոյ ստացած լինէին ստունդանող կամ անհնազանդ բնութիւն, ապա նրանց սխալականութեան կամ Աստծու պատուիրաններին չհնազանդելու հնարաւորութիւնը մարդկային բնութիւնից բխող եւ Աստուածանշում գրանցուած ոչ մի վարդապետութեամբ չէր բացատրուի, այդպիսի վարդապետութիւն չէր ներկայանայ կամ չէր ընծայուի մարդուն՝ «ոչ ընծայանալը նմա»: Մեղ թուած է, որ Մարիէսի ու Մերսիէի թարգմանութիւնը հասկանալի է եւ, հետեւաբար, Եզնիկի բնագիրն այստեղ սրբագրութեան կարիք չունի:

Մարիէսի կարծիքով Եզնիկի բնագիրը թերի է ոչ թէ մեզ հետաքրքրող նախադասութեան մէջ, այլ դրան նախորդող տողում՝ «Զի ոչ եթէ այնպիսի ինչ հաստատեալ զմարդն ցուցանել» (Մ 24. 18, Բ. 44. 6): Գիտական հրատարակութեան 160րդ ծանօթութեան մէջ նա գրել է. «Զեռագրում ցում ցլանիլ—ից յետոյ նախադասութիւնը առկախ է մնում: Վենետիկի հրատարակութիւնը առանց դիւլացնելու աւելացրել է «կարէ ոք», որ իմաստը պահանջում է ի հարկէ: Սակայն մնում է իմանալ, թէ միայն «կարէ ոք»-ն է պահանջում այստեղ: Մեթոդիստի յունարէն բնագիրը ենթադրել է տալիս, թէ զրիւը հաւանաբար մի բառից նման բառին անցնելիս բաց է թողել նախադասութեան ամբողջ երկրորդ մասը: Ըստ յունարէն բնագրի, բայց ի հարկէ ենթադրաբար, իմաստի տեսակէտից մենք վերականգնեցինք դուրս ընկած այդ երկրորդ մասը՝ զգի ոչ եթէ այնպիսի ինչ հաստատեալ բնութեամբ զմարդն ցուցանել, [այլ զի զմարդն՝ ըստ ուրուք վարդապետութեան, եւ ոչ բռնութեամբ ստունդանող եղել է կարէ ոք ցուցանել]: Եթէ այնպիսի ինչ բռնութիւն...»: Ենթադրաբար իւր վերականգնած բառերի տակ Մարիէսը նշել է Մեթոդիստի յունարէն համապատասխան բնագիրը: Ծանօթութեան շարունակութեան մէջ նա գրել է նաեւ. «[ ] բացթողումը կարելի է բացատրել ցուցանելից ցուցանել անցումով: Եւ ըստ այնմ բաց թողնուած մասում հաւանաբար առաջին անգամ յիշատակուել էր «բռնութիւն» բառը. Եզնիկը այդ մտքին յետոյ անդրադարձել է երկու անգամ՝ բռնութեամբ (էջ 94. 23) ու եւ ոչ բռնադատելի (24. 28), դրա վերաբերեալ աւելացնելով համառօտ բացատրութիւններ, որոնք Մեթոդիստի երկում բոլորովին չկան»:

Ստունդ կը տեսնենք, որ Ա. Աբրահամեանը յաճախ է անտեսել Մարիէսի կարծիքը ընթերցողի առաջ, լռելեայն իւրացնելով այն:

2. Իսկ եթէ ոչ յոյնից գլխաւորումը գլխաւորումն համարիցի, յարժան մրցել ընդ բանադիւլում մարտնչիցի՝ վաղվաղակի կարծանի (Մ 29-30, Բ 58. 3) նախադասութեան «մարտնչիցի» բայի փոխարէն ձեռագրում կարդում ենք «մարտ չիցի», որ Ա. Բագրատունին Վենետիկի հրատարակութեան մէջ դարձրել է «մարտնչիցի», որին հաւանութիւն է տալիս Ա. Աբրահամեանը: Գր. Գալէմբեարեանը (որի անունը չի յիշատակել յօդուածագիրը), Ե. Դուրեանը, Հր. Աճառեանը եւ Գ. Խաչատուրեանը<sup>14</sup> ձեռագրի ընթերցումը սրբադ-

<sup>14</sup> Եւ ոչ թէ «եսչատրեան», ինչպէս ամեն անգամ գրել է Ա. Աբրահամեանը:



րել են «մատչիցի»։ Յօդուածագիրն հոս նշել է նաեւ Մարիէսի անունը եւ իրա ընդունած ընթերցումածը՝ «մարտնչիցի», այսինքն՝ տպագրինը, բայց առանց գիտական հրատարակութեան 213րդ ծանօթութեան մէջ տրուած պատճառաւորութեան, որ հետեւեալն է. «Աճառեանը, էջ 86-87, Գալէմքեարուեանը, էջ 54, ծան. 198 (Շմիդի գերմաներէն թարգմանութեան, որին այսատակցել է նաեւ Գալէմքեարեանը... Մ. Մ.)», խաչատուրեանը, էջ 28, կարգացել են «մատչիցի», փոխանակ ձեռագրի «մարտ չիցի» ընթերցումով։ Սակայն «մարտնչիցի»ն, որ վենետիկի հրատարակութեան սրբագրութիւնն է, կարծէք աւելի լաւ է։ «Մարտնչիմ» բայը, որ պարսկապէս նշանակում է «combattre, engager le combat» (մարտնչել, մարտի դուրս գալ) կրկնակի դործածուած չի լինում «մրցել»ի հետ, որ իր մէջ ունի «մրցութեան, մրցոյթի» («competition») զաղափար։ (Ձեռագրում) «մարտ» եւ «չիցի» բառերի միջեւ նկատուի է մէկ տառի չափ դատարկ տեղը։ Իսկ Ա. Աբրահամեանը այս փաստի մասին համարւածակօրէն գրել է. «Քառը կիսուած է, եւ ք տառի տեղը երեւում է» (97)։ Նրա ինքնավստահութիւնը, արտայայտուելու վարդապետական ոճը, ի տարբերութիւն Մարիէսի համեմատութեան, իշխում են նրա ամբողջ յօդուածում։ Բայց ի՞նչ եւ է։

Ե. Դուրեանը հայերէն չի համարել «մրցել...մարտնչիցի» արտայայտութիւնը։ Եւ ահա Ա. Աբրահամեանը դարձեալ ինքնավստահ յայտարարել է. «Ե. Դուրեանը սխալուել է այդ ոճը հայերէն չհամարելով։ Բանն այն է, որ դասական հայերէնի համար ոչ միայն խորթ չէ, այլեւ սիրուած եւ ընդունուած է բայի դիմաւոր ձեւի վրայ նոյն կամ հոմանիշ բայի անորոշ դերբայը զնել՝ որպէս աւելագրութիւն» (97)։ Քերականական այս երեւոյթը իրօք կայ գրաբարում, միայն թէ Ա. Աբրահամեանի բերած մի քանի օրինակները ամենեւին չեն վերաբերում դրան։ Ահա նրա միայնութիւնները. «Շիննի շիննի ի պաշտօն դիւայ...» (Ազարթ., 293). Ա. Աբրահամեանը չի թարգմանել բերուած օրինակը. մեզ թւում է, որ այստեղ անորոշ դերբայը պարզապէս սաստկացնում է դիմաւոր բայի իմաստը, արտայայտում է դործողութեան շարունակականութիւնը, եւ նախադասութիւնը կարելի է թարգմանել «հա՛ շինում էին ու շինում»։ Ոսքը յայտնի աշտարակահիւսութեան մասին է։ Ա. Աբրահամեանի միւս օրինակն է. «Այս ամենայն ի ձեռն այլոց՝ գրել գրեցաւ» (Բուզ., 3րդ, Ա), որ Ստ. Մալխասեանը ճիշդ է թարգմանել. «արդէն գրուեց»։ Ուստի անորոշ դերբային այստեղ դործողութեան կատարուած կերպն է ցոյց տալիս յարակից անցեալ կատարեալի հետ։ «Աճել բազմացաւ» (Բուզ., 3րդ, Գ) միայնութիւնը Ստ. Մալխասեանը պարզապէս թարգմանել է «աճեցին ու բազմացան»։ Ուստի բերուած օրինակներում անորոշ դերբայները նիւթական իմաստից զուրկ են եւ պարզապէս արտայայտում են դիմաւոր բայի այս կամ այն կերպային նրբերանգը։ Հակառակ յօդուածաւորի, մենք գտնում ենք, որ Եղնիկի «մրցել...մարտնչիցի» բայերը այդպիսի դործածութիւններից չեն, եւ ոչ էլ իրր «մրցել»ը անորոշ դերբայի ձեւով գրուած է մարտնչիցի դիմաւոր ձեւի վրայ «կուռել» նշանակութեամբ որպէս աւելագրութիւն» (97)։ Ինչպէս Մարիէսն է գրել, այդ երկու բայերն ունեն իմաստային նրբերանգներ, եւ «յործած մրցել ընդ բանասերկուն մարտնչիցի» նախադասութիւնը ճիշդ կը լինի թարգմանել «avant pour lutter... il vient a engager le combat...» (Մարիէս-Մերսիէ, էջ 34) եւ ոչ թէ լոկ «բանասերկուն հետ կուռելիս»։ «Մրցել...մարտնչիցի» նախադասութեան մէջ աւանորոշ դերբայը նպատակի պարագայ է, իսկ Ա. Աբրահամեանի բերած օրինակները՝

\* \* \*

նախներում նոյնպիսին չեն անորոշ դերասները, ինչպէս տեսանք: Հետեւեալ վկայութիւնները բերում ենք, ցոյց տալու համար, որ «մրցիմ» եւ «մարտնչիմ» բայերը գրաբարում այնքան էլ սերտ հոմանիշներ չեն, որքան կարծում է Ա. Աբրահամեանը, եւ դրանցում չի կարելի «մարտնչիմ» բայը փոխարինել «մրցիմ» բայով:

Առաջին օրինակ. Երբ Քրիստոս ասում է Հրեաներին. «Եթէ ուսիցէ ի հացէ յայսմանէ, կեցցէ յաւիտեան. եւ հացն զոր ես տաց՝ մարմին իմ է, զոր ես տաց վասն կենաց աշխարհի» (Յովհ., Զ, 52), Հրեաները դալթակղւում են եւ սկսում խօսքով վիճել, խօսքով կռուել եւ ոչ թէ մրցել իրար հետ. «Մարտնչէին Հրեայքն եւ ասէին, Զիա՞րդ կարէ սա տալ մեզ դմարմին իւր յուսեի» (Զ, 53):

Երկրորդ օրինակ. Երբ Պիղատոսը հարցաքննում է Քրիստոսին, սա պատասխանում է. «Իմ արքայութիւն չէ յայսմ աշխարհէ. եթէ յաշխարհէ աստի էր արքայութիւնն իմ, սպասաւորքն իմ մարտնչէին արդեւք, զի մի մատնեցայց Հռէից» (Յովհ., ԺԸ, 36). Քրիստոսի սպասաւորները ոչ թէ կը մրցէին (ո՞ւմ հետ), այլ կը մարտնչէին, կռուի զուրս կու դալին, կը կռուէին Հրեաների դէմ:

Այսպիսով տեսնում ենք, որ Ա. Աբրահամեանը պարզապէս համար կարծիք է, թէ եւ ուշացած, Վենետիկի, Գ. Խաչատուրեանի եւ գիտական հրատարակութիւններին. իսկ ինչ վերաբերում է ընդունուած կարծիքը կամ օրբադրութիւնը «խորացնելու կամ լրացուցիչ տուեալներով հիմնաւորելու» նրա խոստովին, ապա պիտի ընդունենք, որ ոչ միայն նա չի հասել իր նպատակին, այլ խառնել է գրաբարի քերականութեան երկու տարբեր իրակութիւններ:

3. Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի. զի եթող ոմն զԱստուած, գաւորքս, գպախս, գաղաւթս, եւ ի կախարդմն՝ որ եւ անձին չկարէ աւգնել՝ ապաւինեցաւ (Մ 41.20, Բ 86, Աբբ):

Յօդուածագիրը հաղորդում է, թէ Ե. Դուրեանը Եզնիկի նախադասութեան «արժանիցն» բառը, որ ձեռագրային է, առաջարկել է կարդալ «աստուածանիցն», իսկ Զմիւռնիայի հրատարակութեան մէջ կղել է «արժանեացն»: Գ. Խաչատուրեանի բնագրի մասին որոշակի բան ասուած չէ. նա բնագրում թողել է «արժանիցն», սողատակում նշել է Ե. Դուրեանի սրբագրութիւնը եւ թարգմանել ըստ այնմ (էջ 42): Ա. Աբրահամեանը պտնում է, որ «Այստեղ իրականում գործ ունենք արժան բառի հետ, որի բնագրային արժանիցն ձեւը փոփոխութեան կարիք չի զգում, եւ նրան չպէտք է ձեռք տալ» (98): Նա թերացել է ստեղծ, որ իրենից առաջ Մարիէնը այդ բառին «ձեռք չի տուել», թողել է ձեռագրային ընթերցուածք, այս մասին ասանց յօդուած գրելու կամ ծանօթութիւն տալու: Սակայն Մարիէնն այդ բառը թարգմանել է իր սովորական իմաստով՝ «a qui le meritent» (նրանց, որոնք դրան արժանի են, էջ 47), իսկ Ա. Աբրահամեանն այդ բառն «ընկալել է մի իւրայայտուել իմաստով» եւ ամբողջ նախադասութիւնը «մեկնաբանել է» ըստ այնմ: Այդ իմաստը նա «արժանի» բառի տակ գտել է Նոր Հայկազեան բառարանում, ուր «արժան» բառի «իրաւունք, օրէնք, արդարութիւն» նշանակութեան համար իբրեւ վկայութիւն է բերուած Եզնիկի մեզ հետաքրքրող նախադասութիւնը: Եւ Ա. Աբրահամեանը զգրա վրայ էլ կանգ է առել առաջագիր նախադասութիւնը բացատրելիս. Եւ այն յԱստուծոյ արժանիցն յիրաւի լինի = Այն, իս-

կապէս, Աստուծոյ օրէնքներով է լինում» (98)։ Ինչպէս ինքն է վարդապետում «պէտք է» ներքով, քնադրի «Աստուծոյ» հրովածեալ համարել է սեռական՝ յատկացուցիչ «յարժանիքն» յատկացեալի համար, որ թէեւ բացառական է, բայց նա թարգմանել է զործիականով։ Սակայն դժուար չէ նկատել, որ ամբողջ բացատրութեան բուն հեղինակը Նոր Հայկազեան Բառարանն է իր «արժան» բառի վերոյիշեալ բացատրութեամբ։

«Արժանիքն» հրովածելի մեկնաբանութեան հարցում մենք չենք ընդունում Նոր Հայկազեան Բառարանի եւ դրան հետեւող Ա. Աբրահամեանի կարծիքը եւ համաձայն ենք Մարիէսին։ Յիշեցնում ենք նրա թարգմանութիւնը. «Et cela, de par Dieu, a qui le meritent, avec justice arrive» («Եւ դա Աստուծոյ արդարացիօրէն լինում է նրանց, որոնք (դրան) արժանի են»)։ Կարծում ենք, որ այս է եղնիկի մտքի ճիշդ թարգմանութիւնը։ Նախադասութեան «այն» ենթակայի տակ եղնիկը նկատի է ունեցել անմիջապէս նախորդող տողը, որ նրա գաղափարական հակառակորդներին կարծիքն է. «Ասեն. հանել չկարեն (կախարդը զգեստ — Մ. Մ.), բայց անդէն կապել մարթեն, զի հանապաղ խեղդ ընդ անձն հոգւոյ մարդոյն դեմ լինիցի» (Մ 41-18, Բ 86 Արբ)։ Եղնիկը շատ լաւ գիտէր անուշտ, որ հակառակորդներին արտառայապատմած այս միտքը Աստուծոյ օրէնքներով չի լինում աստուածաբանութեան տեսակէտէ, ինչպէս առհասարակ դիտահարութիւնը. ուստի նա չէր կարող այստեղ «արժան» բառը զործածել «օրէնք, իրաւունք, արդարութիւն» նըշանակութիւններէ մէկով, որն իբրեւ միայն եղնիկին է յատուկ։ Ինչպէս պատահանները, այնպէս էլ դիտահարութիւնը կարող է պատահել մեղաւորին (եւ նոյնիսկ անմեղին) միայն Աստուծոյ թոյլտուութեամբ՝ «յԱստուծոյ» (Աստուծոյ), եւ ոչ թէ ինչոր «օրէնքներով»։ Եղնիկի երկը, յատկապէս այն էջերը, ուր կարդում ենք քննարկուող նախադասութիւնը, տողորոտած են այս գաղափարներով. «...Մտանելոյ ի մարդ (դեմ — Մ. Մ.) չունի իշխանութիւն՝ առանց Աստուծոյ թուացուցանելոյ» (Մ 42-3, Բ 87)։ Մեզ հետաքրքրող նախադասութեան շարունակութեան մէջ եղնիկը գրել է, թէ ինչու «այն յԱստուծոյ արժանիքն յիշուի լինի»։ «զի եթող ոմն զԱստուած...» եւ այլն։ Այդպիսինի համար դիտահարութիւնը արժանի պատիժ է Աստուծոյ թոյլտուութեամբ եւ ոչ թէ օրէնքներով (որոնց մասին լուծ է Ա. Աբրահամեանը), որպէսզի այդպիսին «սրբովք աղաչացեալ զԱստուած՝ առնականութիւն զըտանէր բուժելոյ ի չարէն» (Մ 42-1, Բ 87), «...զի նորա բարեբարութիւնն երեւեսցի» (Մ 42-21, Բ 88)։

Ա. Աբրահամեանը զարձեւել չի կարողացել ճնոր տուեալներով՝ հիմնաւորել արդէն ընդունուած<sup>15</sup> ընթերցումածը. ընդհակառակն, այն սխալ է մեկնաբանել։

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

ՍԷՆՆԱՂԻՐ, Ֆրանսա  
(Շաբ. 1)

<sup>15</sup> Ինչպէս Մարիէսի գիտական բնագրում։ Սակայն Ա. Աբրահամեանը այս մասին լռել է. քննելու այն պատճառով, որ այս բանաձեւը «մեր բանասիրութեան» չի պատկանում. «Արժանիքն» բառածը — գրել է նա, — մեր բանասիրութեան մէջ տարբեր կերպ է նախադասելու մեկնաբանուել» (97)։

## ՅՈՒՑԱԿ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ Գ. ԿԻՒԼՊԵՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ՀԱՅԵՐԵՆ ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐՈՒ

(1512 — 1800)

Նոյնպէս յիշեալիք եւ զկենդանի եղբարսն՝ զիշխան Պարոն Բեժան Բէկն, եւ զբացեալ զորդիս նորին՝ զիշխան Սոյմօնն, զՏէրացու Բարսեղն, զԴաւիթն եւ զնիկողայոսն, եւ զորդիս մեծ եղբօրն իւրոյ՝ զՀանգուցեալ Միտն, եւ զԶաքարիայն. եւ զսարկիշտատուն զոյրն՝ զԽուսուգանն. զՀօր եղբարսն իւր՝ զՀանգուցեալսն ի Քրիստոս՝ զԱւստանն, զԱւթանիկն եւ զՓիրալին. եւ զորդիս նոցին՝ զՊայծառ Իշխանն՝ զՊարոն Շառայն, զՊարոն Ստեփանն, եւ զՊարոն Թաղայն. որք ամենեւեան տարազիր լեալք ի բնիկ Հայրենեաց իւրեանց՝ ի մեծահռչակն Սանահնու, նարդեանս բնակին ի Թիֆլիզ, ընդ Հովանեաւ խնամոց՝ Քաջազօր Արքային Հեթակլի:

Հուսկ յետոյ՝ յիշեալիք ի լուսափայլ յաղօթս մեր՝ զնախկին սահմանօղն եւ զսոսա-  
ջահար բազմաշխատ ազնութեամբ ի լոյս բերօղն իմ, զՀամարտարմանն բազմաց զովեստից, զԼուսաւորեալ Հոգի՝ Զուղայեցի Պարոն Գրիգորն Խօյմալեանն, Մեծանուն Խալապուրտեանց, որ զՀամայն դոյս իւր ընդ կենացն՝ ոչ խնայեալ յինչն, Հրաւիրեցաւ յերկնաւոր Թագաւորէն ի վայելս բազմալստոսակ աշխատանաց իւրոց:

Ընդ որոյ յիշեալիք եւ զմեծանունն Հարազատն նորին՝ զՎարպետ Միլիտոմն Աստուածաբանն, որ ի պատանեկութենէ մինչ ցարդ՝ ոչ ստիպաւ աշխատանն զրեալ է եւ կրէ յարպէս, ներ զործոց իմոց, ի զայծառութիւն քիչ Հայկազեան Տոճի, սիրով ծառայեալ, Թէ ի ձուլին, Թէ ի Հարթին, Թէ ի Հարին, եւ Թէ ի ցրուելն զկապարեայ տառած:

Նոյնպէս՝ յիշման արժանի Համարեալիք եւ զՀարազատ Սպասուորոսն իմ՝ եւ զաշխատաւորսն ի յիւ, զՏպագոր Տէրացու Յօսէփ Աւագ Մարկաւազն Գրիգորեան՝ Ղայթմա-  
զէնց. եւ զՄարգարի Տէրացու Վարդէվանն Վարդանեան:

Եւ որք յիշեղ, յիշեալ լիլիք ի միւսանգամ զալստեան Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն:

Կիւպէնկեան Մատենադարան

248 Աջ

369

ՇԱՐԱԿՆՈՑ: Կ. Պոլս, տպ. Յովհաննէսի եւ Պօղոսի, 1790, 832 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Ա

ՇԱՐԱԿՆՈՑ: Երաժշտական երգեցմունք Հոգեւորականք Աստուածայնոց եւ Երջանկաց սրբոց Վարդապետաց Հայոց Թարգմանչաց: զՎարդաւորութիւնս եկեղեցւոյ վայելազարգացողաց:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Բ

Տպեցեալ ի Վեհափառ Հայրապետութեան Փերագահ Աթոռոյն Սրբոյ էլիմանին Տեան Դուպատու Սրբազան Կաթողիկոսի Ամենայն Հայոց, Եւ Պատրիարքութեան Սրբոյ Երեսնագէտի Տեան Յովակիմայ Երջանկափայլ Վարդապետի. Վեհափառ Հոռամաւ Մեծի Արքայանիւտ Մայրաքաղաքիս Կատանդնուպոլսոյ Սրբազան Արճի Եպիսկոպոսի Տեան Զա-  
քարիայ Աղլապէր Կարդացեալ Աստուածաբան Պատրիարքի:

